

372

U-35

1913

2 - MAR 2010

372
Զ-97

1887—1912 թ.

ՔՐԻՍՏԻԱՆԻՅԱՆ

ՊԵՍՏԻԳՈՐԾԿԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ
ԵՐԿՍԵՌԻ ԴՊՐՈՑԻ



370
2481-30

ՊԵՍՏԻԳՈՐԾԿԻ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ Դ. Դ. ՍԱՄԵԼՅԱՆԻ
1913 թ.

075
06-1848

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Իմ նպատակն էր միմիայն պատրաստել դպրոցի 25-ամեայ գոյութեան տեղեկագիրը, սակայն տեղական մի քանի հանգամանքները ի նկատի առնելով և այն, որ եկեղեցւոյ շինութեան ծախքի և ընդհանրապէս ել և մտի մասին միայն թիւրիմացութիւններ կան և նոյնիսկ մի հատիկ թղթի կտոր, կամ ժամանակակից գործին մասնակից եղած անձն չկար, որ վերականգնէր ճշմարտութիւնը և նոր սերնդին ներկայացնէր իր անփոխարինելի նախորդներին և այն, որ հնար չէ դպրոցի մասին գրել անտես անելով եկեղեցին՝ աշխատեցի հաւաքել երկուսի մասին եղած փաստաթղթերը, առաջին տեղը տալով եկեղեցւոյ շինութեան: Մինչև 1835 թ. շուրջ հասարակական մի գործ եղած չենք տեսնում. հայր ապրել է այստեղ սոսկ, իբրև անհատ վաճառական, իրան ոչ տեղացի համարելով: Այդ թւից տեսնում ենք, որ մի փոքրիկ խումբ նախիջևանցի վաճառականներ հոգաբարձութեամբ Շորշորեանի, Աչակեանի և Չոլախեանի հասարակական-համայնական կեանքի սկիզբն են դնում և որպէս հիմք իրանց մշտական մնալու, պահանջ են դրում եկեղեցի ունենալ: 1835 թ. եղած դիմումին 1869 թ. ստացւում է շինութեան հրամանը, իսկ 1870 թ. սկսւում շինութիւնը: 1887 թ.-ից հոգևոր իշխանութեան թոյլտւութեամբ բացւած է ձխ. գրպրոցը, որը սիրւել ու փայփայւել է գաղութիս հայութիւնից, որին ապացոյց են դպրոցական մեծածախք երկու շէնքերը, պաշտօնական թղթերը և այն, որ անխտիր ամեն հայ երեխայ նախ մտել, սովորել է ձխական դպրոց և յետոյ անցել պետական: Դպրոցը, որ մինչև 1906 թ.

առաջ է գնացել, այդ թւից խեղճանում, հոգաբարձութիւնը զանազան միջոցների է դիմում դրամ հայթայթելու և նախահաշիւով ծախքը ծածկելու: 1907, 8, 9, 10 թւերին ուսումնական յառաջադիմութիւնը, աշակերտութեան կարիքը ստիպում են դ. բաժանմունքը բաց անել, որը և բացում է դ. բաժանմունքին միացած: Տնտեսապէս քայքայւած դպրոցի հոգաբարձութիւնը 1910 թւի նախահաշիւը քննութեան տալիս է ծխ. ժողովին առաջարկում է «կրճատել դպրոցի բաժանմունքները 4-ից 2 դարձնելով, կամ պակասորդ ծախքը լրացնել նոր կամաւոր տուրքով»: Այն ինչ որ 1887-ից մինչև 1897 թ. հասարակութիւնը ինքնաբերաբար էր անում, այժմ սպառնալիքի «կրճատելու» ազդեցութիւնից և սրբազան առաջնորդի ներկայութիւնից տրամադրւում և ոտորագրութեամբ լրացնում են պակասորդը: 1911—12 թ. հոգաբարձութիւնը նախահաշիւը հաստատելու համար երեք անգամ ժողով է հրաւիրում, թէև չի կայանում, սակայն այնուամենայնիւ անցեալ տարւայ որոշումը հիմքը ունենալով «կրճատումը» հանում է օրակարգից: 1912—13 թ. այլևս հոգաբարձութիւնը հիմք չի ունենում յուսով բոլոր բաժանմունքները պահպանել և կրճատում է: Երրորդ բաժանմունքից փոխադրւողները դուրսը մնացին: Այս ցաւալի դրութիւնը զգալի էր միայն ուսուցիչներին, որոնց դիմում էին թէ ծնողները և թէ աշակերտութիւնը: Այս բոլոր հանգամանքները ինձ մտածել էին տալիս մի հնար գտնել, էլի ժողովրդին հարազատօրէն դպրոցի շուրջը բոլորելու: Դպրոցի 25-ամեակն տօնելու ու նրա զարգացման համար այնքան անձնւէր աշխատաւորների պատմութիւնն առաջ բերելն ամենալաւ միջոցը գտայ հասարակութեան հոգացողական զգացմունքը արթնացնելու, որի համար և մի շարք պաշտօնական ժողովների որոշումներով անցրած յօբելեանական տօնակատարութիւնը իրականացաւ:

ա) Անյայտութեան մէջ մնացած դէպքերն ու զէմքերն երևան եկան. բ) Դպրոցին շրջապատելով, նրան, իբրև ընծայ, իր 25-ամեակի տօնախմբութեան օրը, սիրող

հասարակութիւնը նրան կրկին զգւելով մի կտրիկ գումար է նւիրաբերում պարտքից ազատելու, որ ժամանակի պահանջներին ընդառաջ գնալու կարողութիւն ունենայ:

Սորին շնորհակալութիւն այն անձանց, որոնք չզլացան իրանց մօտ գտնւած փաստաթղթերն ու ունեցած տեղեկութիւնները յայտնել ու յանձնել մեզ:

Մ. Մարգարեանց:

Գեորգ Ժառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասակելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կարողիկոս անկեանս հայոց, Ծայրագոյն պատրիարք հաւնագգական Նախաւեժար Արքոյ Արարսեան Առաքելական մայր եկեղեցոյ Սրբոյ կարողիկէ Էջմիածնի Պատարժան անդամոց յօբելեանական յանձնաժողովի ծիսական դպրոցի հայոց Պետիգորսկ ֆաղափ, հարագաս որդոց Մայր արքոյոյս ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական:

Ի գրութենէ յօբելեանական յանձնախմբի, ի 11-ն յունւարի տարոյս, իրազէկ հղաք, եթէ եկեղեցական-ծխական դպրոցն հայոց Պետիգորսկ քաղաքի յայսմ ամի բոլորէ զշրջան քսանհինգ ամաց, վասն որոյ կամիք յաւերժացուցանել զկրթական տօնս յօբելեանական հաղէսի:

Սիրեցեալ որդեակք մեր, քաջայայտ է ամենեցուն, զի յոյժ մեծ են ի ժամանակի մերում կարիք ազգային ողջամիտ դաստիարակութեան, մանաւանդ վասն օտարախօս մանկանց, որք յեկեղեցական-ծխական դպրոցս մեր դաստեարակին յազգային և ի քրիստօնէական ոգի և սովորեն զմայրենի բարբառ իւրեանց: Բերկրութեամբ սրտի տեսանեմք զգովելի եռանդն և զիղձ յանձնաժողովոյդ, որոյ քաջ ըմբռնեալ զպահանջ ժամանակիս, գուն գործ է ապահովել ըստ անտեսականի վասն պահելու ի բարեկարգ վիճակի զազգային եկեղեցական դպրոցդ: Արդ այսու Հայրապետական կոնգակաւ մերով օրհնեմք գնախաձեռնողս և զանդամս յօբելեանական յանձնախմբի, զհոգաբարձուս, զուսուցչական կազմն և զաշակերտեալս դպրոցիդ և զհամայն ժողովուրդն հայոց Պետիգորսկ քաղաքի: Մաղ-

թեմք ի տեառնէ վաստակաւորաց ի կրթական անդաստա-
նի ոյժ և կորով մտաց վասն բարգաւաճման և յառաջա-
դիմութեան կրթական հաստատութեանդ: Ողջ լեւուք զո-
րացեալ ի Տէր և օրհնեալ ի մէնջ: Ամեն:

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ.

Ի 14-ն փետրւարի 1913 թ. ըստ տոմարի 1634 բ.
ի հայրապետութեան մերում բ. ամի յԱրարատեան
Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի ի Վաղարշապատ թ. 257

Պետախորսկի հայոց եկեղ.-ծխ. ուսումնարանի քանու-
հիւնգաւեայ յօբեղեանական յանձնաժողովի Ասխազահ
պ. Մ. Մարգարեանցի

Ձեր յայտարար գրութիւնից տեղեկացայ, որ մտա-
դրութիւն ունիք ուսումնարանիդ 25-ամեակի առթիւ յօ-
բեղեանական հանդէս կատարելու և դրա համար ընտրւած
է յանձնաժողով: Արդ օրհնելով նախաձեռնողներին և մաղ-
թելով, որ ուսումնարանը շատ 25-ամեակներ բալորէ և
օրստօրէ բարգաւաճէ յօգուտ տեղւոյդ հայութեան, պաա-
ւիրում եմ յօբեղեանական հանդիսի յանձնաժողովիդ կազ-
մած ծրագրի մի օրինակը ուղարկել ինձ տեղեկութեան
համար:

Թեմական առաջնորդ՝ ՄԽԻԹԱՐ ԵՊԻՍԿ.

25-ն յունւարի 1913 թ. Աստրախան № 108.

ՊԵՍՏԻԳՈՐՍԿ քաղաքը ձգւում է Մաշուկ սարի հա-
րաւային և հարաւ-արեւմտեան թեքւած լանջով, նոյնպէս
և Մաշուկի ու նորանից ձգող Գարեաշի գոր պարանոցի
ձորակում: Մաշուկը անտառով ծածկւած է կոնսաձև մի սար
է 3255 ֆ. բարձրութեամբ և 8 վերստ շրջապատով: Մա-
շուկը գտնւում է հարթ տարածութեան վրայ, որի շրջա-
պատում միմիանցից ոչ հեռու ընկնում են մեծ կամ փոքր
բարձրութեամբ նոյնոյն կոնսաձև սարեր, որոնք են Իւցա,
Չուցա, Ժելեզնայեայ, Լըխայեա, Չմէյնայեա, Բազմալկա,
Զօլօտոյ կուրգան և այս բոլորի վրայ աւերող Բեշտաուն
4593 ֆ. բարձրութեամբ, ամենից բարձր իր հինգ ճիւ-
ղաւորութեամբ գագաթներով, որի անունով և ամբողջ
հարթութիւնն է կոչւել: Ռուսաց կովկասի Հանքային ջը-
րերի հետ ունեցած ծանօթութիւնը սկսւում է Պետրոս
Մեծի Ժամանակից, որը իմաստուն հեռատեսութեամբ կա-
րողացաւ գնահատել հանքային ջրերի և կուրորանների նը-
շանակութիւնը պետութեան համար: Կովկաս է ուղար-
կում լէյք-մեդիկ Շօբեր, որը հանքային ջրերում տիրող
թալանների երկիւղից չի կարողանում իր վրայ դրւած
պարտաւորութիւնները—հետազօտութիւնները կատարելու
վերադառնում է, հետը տանելով հանքային ջրերի մասին
աւելի լսածները, քան հետազօտութիւններն ու դիտողու-
թիւնները: 1767 թ. Եկատերինէ Մեծի հրամանով, գի-
տութեանց ճեմարանի կողմից Ռուսաստանի զանազան
կողմերը գիտնականներ են ուղարկւում, մասամբ հիւան-
դութիւնների ծագումները ուսումնասիրելու և մասամբ
երկրին մօտից ծանօթանալու: Այդ գիտնական ճանապար-
հորդներից մէկն էր Յովնան Գիւլգենշտէյնը, որը ի միջի
այլ վայրերի այցելում է Կովկաս 1773 թ. և Կովկասի
հանքային ջրերը ու տալիս նոցա գիտական նկարագրու-
թիւնը: 1780 թ. Պօդկովկի ափին հիմնւում է կոնստան-

դինօգորսկի փոքրիկ ամրոցը, որը Մոզգոկից մինչև Ազով գծի պատերազմական կայարաններից առաջիններից մէկն էր: Շնորհիւ այդ ամրոցի, հանքային ջրերի մօտիկութեան հիւանդ զինւորները սկսեցին օգտուել:

1803 թ. 7 մարտի, Աքէքսանդր I գրում է Վրաստանի կառավարիչ և Աստրախանի զինւորական նահանգապետ Յիցիանովին, որ անհրաժեշտ է հանքային ջրերի մօտից ընկնող ուղեգծով բնակեցնել ուղեգծային կօղակներին: 1804—1808 թ. Կովկասում տարածւած ժանտախտի պատճառով հիւանդների գալը դադարում է. իսկ յետոյ արագ աճում: Այդ ժամանակ հեռաւորութեան և ճանապարհների մեծ զժլարութիւնների պատճառով ջրերը մատչելի էին միայն հարուստ մարզիկանց: 1815 թ. ճանապարհորդները նկարագրելով մայրաքաղաքներից եկած հասարակութեան փարթամ, զւարճ և մեծ բաւականութիւններով անցրած կեանքը, որ շրջապատի հակադիրն է ներկայացրել, պատմում են, որ եկողները ապրում էին խուղերում, խրճիթներում և վրանների տակ, որոնք կառավարութեան հրամանով պատրաստւում էին կալմիկների ձեռքով կօնստանդինօգորսկի ամրոցի հովանու տակ, որի աշտարակների վրայ դրւած էին թնդանօթներ:

Հիւանդները զինւած կօղակների պաշտպանութեամբ ամեն օր գնում էին 3—4 վերստ հեռաւորութեան հանքային աղբիւրները, ուր խմում և վաննաներ էին ընդունում ծղոտից հիւսած խուղերում: 1812 թ. Գարեհաչեւօգսկու դաշտում, ապագայ Պետաիգորսկի տեղում շինւեց առաջին տունը: 1823 թ. կային արդեն 65 տներ, որոնք վարձու էին տրւում: Ահա ինչպէս առաջ եկաւ Պետաիգորսկ կաղաքը: 1824 թ. Գեորգեակ քաղաքից պետական հաստատութիւնները տեղափոխւեցին Ստաւրօպօլ և բնակիչներից շատերն էլ փոխադրւեցին Գարեհաչեւօգսկ, որին վիճակւած էր փայլուն ապագայ: 1825 թ. միայն իրագործւեց Ալէքսանդր I-ն հրամանը, երբ կովկասեան ուղեգիծը Ստաւրօպօլից հեռացւելով գցւեց հանքային ջրերի մօտով: Ահա այդ ժամանակ կօղակներին գաղթեցնում են հանքային ջրերի մօտ և հիմնում Կիսլօվօդսկու,

Բուրգուստանի, Էսենտուկի, Գարեհաչեւօգսկի, և Ժելեզնօվօդսկի ստանիցաները: Դրանից յետոյ, 1826 թ. երկրի կառավարիչ է նշանակւում Գ. Ա. Էմմանուէլ, որ ոչ պակաս ջանք և հոգացողութիւն է արել այդ քաղաքի առաջ գալուն և բարգաւաճման: Նորա կառավարութեան հինգ տարւայ ընթացքում (1826—1831 թ.) պատրաստւեցին ճանապարհները, ձգւեցին ծառասաններ, առանձնացրւեց անտառից Էմանուէլովսկի պարկը և ձգւեց Նիկօլաեակի ցվեանիլը (ծաղկանոցը): Շնորհիւ երկու ճարտարապետ եղբայրներ Բերնարդացի Էմմանուէլը կանգնեցրեց Նիկօլաեակի վաննաների շէնքը, (Կաղեօննի գաստինիցան) սիւնազարդ արքունի հիւրանոցը *) ուր այժմ տեղաւորւած է հանքային ջրերի վարչութիւնը: Այդ շինութիւնները անելիս, բանւորներ չճարւելու պատճառով զինւորներին էին աշխատեցնում, որոնց Բերնարդացի եղբայրները ստիպւած արւեստ էին սովորեցնում ու բանեցնում:

1830 թ. 14 մայիսի Գարեհաչեւօգսկի բնակավայրը դարձւեց գաւառական քաղաք և ստացաւ Պետաիգորսկ (հնգալեւ) անունը:

ՀԱՅԵՐԸ ՊԵՏՏԻԳՈՐՍԿՈՒՄ.—Նոր-Նախիջևանցի հայերին անձանօթ լինել չէր կարող հիւսիսային Կովկասում ամենավաճառաշահ և կենդրոն Գէորգեակ քաղաքը, ուր և նոքա հաստատւում են շատ առաջ: Կոնստանդինօգորսկի ամրոցի հիմնւելով և ամառները բժշկւելու եկող հիւանդները նոր շուկայ առաջ բերին, ուր և շտապեցին Գէորգիւսկում հաստատւած հայ վաճառականներից ոմանք:

1814 թ. (Պետաիգորսկի) տաք ջրում, ինչպէս անւանում են Նոր-Նախիջևանցիք, բնակութիւն է հաստատւում Կարապետ Խաղիդեան: Այդ թւի շրջաններում են իրանց առևտրական գործի ճիւղը բաց արել և հաստատւել Պետաիգորսկում Զորչոբեան, Զելախեան, Զալազայեանց, Շորչոբեանց, Զօլօտարեանց, Աչակեանց և այլն:

Գարեհաչեւօգսկ ստանիցայի արևելա-հարաւային կողմը

Ծանօթ. Զխառնել այժմեան «Կաղեօննի» հիւրանոցի հետ, որը այժմ էլ հիւրանոց է և գտնւում է նախկինի դիմացը:

գտնւող անտառակը մինչև այժմ էլ «Արմեանսկի» հայոց անտառ է կոչւում և մօտերքում էլ գտնւել է հայկական գիւղ: Ոմանց կարծիքով այդ տեղը, ձիաբուծութեամբ պարագող յայտնի կալածատէր Թամբեաններին նախկին բնակավայրն է եղել: Քանի գնում հանքային ջրերում կեանքը ապահով ընթացք է ստանում և առանձին թափով եռում: Սկսւում է վերաբնակութիւնը, որի ճանապարհը բաց էին արել հայ վաճառականները: Քաղաքային ընդհանուր գերեզմանոցում 1823 թւից առաջ գերեզմանի չեմ պատահել: 1823 թ. կրող տապանաքարի գրերը եղծւել համարեայ չեն կարդացւում, 1829 թ. «նախիջկանցի վաճառական Սաղիզեան, որ վախճանեցաւ 60-ամեայ հասակում»: 1838 թ. մի ագուկեցու գերեզման է, 1841 թ. թիֆլիսեցի Շիշմանեան մի զինւորականի գերեզման:

Այսպէս կարելի է համարել հատ-հատ մինչև 1840-ական թւերը, որից յետոյ միևնոյն թւականն կրող տապանաքարերը շատանում են: Հայկական գերեզմանները գրանւում են գերեզմանատան հին մատուռի հիւսիսային կողմը: Այդ գերեզմանների տարեթիւ կրող ուսական գերեզմանները զինւորականների են միայն: Մինչև 1835 թ. հայերն այնքան էին շատացած, որ ժամանակի հեռատես գործիչներ Զօրօտեան, Շօրշօրեան, Աչախեան, Զօլագայեան, Զելախեան, Աթաբէկեան իրանց հետ միացնելով և գէորգեակեցի հայ վաճառականներին, ընդամենը 28 ընտանիքով կառավարութեան խնդիր են ներկայացնում, որով խնդրում են հայոց համար եկեղեցու տեղ յատկացնել: Դնում եմ քաղածօրէն եկեղեցու կալածագրից գործի պաամութիւնը: Ստաւրօպոլի նահանգական վարչ. հիմնւելով Պետաիգորսկի և Գէորգեակի հայերի Պետաիգորսկում եկեղեցու շինութեան գործի մասին եղած զեկուցման վերայ, ուր առած է «Հիմնւելով հողաբարձութեան միջնորդութեան վերայ, որի անդամներն են նախիջկանցի վաճառականներ Շորշօրեանց, Աչախեանց և Զելախեանց և որը ներկայացւած է Վրաստանի գլխաւոր կառավարչին 1835 թ., որի վերա հիմնւելով նա բարձրագոյն հրաման է հանում տալ տեղական հայերին մի ամբողջ թաղ (կար-

տալ) № 16 անւանը:

Այդ տեղը 1842 թ. կովկասեան երկրի գլխաւոր, գեներալ-լէյտենանտ Վերիամիովն է տալիս: Հողաբարձութիւնը մի քանի անյարմարութեաններ մատնացոյց անելով խնդրում է ուրիշ տեղ տալ եկեղեցու համար: 1848 թ. յունւարի 18-ին փոխարքայ իշխան Վարանցովը թոյլ է տալիս եկեղեցու համար յատկացնել ընդհանուր բազարի տեղը: Այդ և արգելքների է հանդիպում և այնուհետև մինչև 1867 թ. այդ տեղում եկեղեցի շինելու համար հայերից դիմում չի լինում: 1867 թ. յունւարի 17-ին Պետաիգորսկում վաճառականութեամբ պարագող 28 մարդ դիմում են քաղաքային վարչութեան և խնդրում ճարտարապետի միջոցաւ որոշել իրանց եկեղեցու համար յատկացրւած տեղի սահմանները, որ վարունքից սկսեն շինութիւնը: Այդ տեղն էր № 2 և 4, 800 քառ. սաժ. տարածութիւն: Հայերի խնդրին ուժ և ընթացք տալու նըպատակաւ ապրիլի 28-ին ուս վաճառականներն ու արդիւնաբերողները ևս այդ առթիւ համախօսակտն են կազմում քաղաքային տանը տեղի ունեցած ժողովում և յարմարաւոր տեղը գտնում երկրորդ թաղում, №№ 2, 13 և 14 գետինը 1200 քառ. սաժ. տարածութեամբ Բազարօ-Բուրավոյ գետինի փոխարէն, վերջինը թողնելով քաղաքին: Քաղաքային վարչութիւնը այդ միջնորդութեան դէմ ոչինչ չունենալով 1868 թ. մայիսի 10-ին ներկայացնում է նահանգական վարչութեան խնդրելով Բազարօ-Բուրավոյ տեղը թողնել քաղաքին իսկ եկեղեցու համար յատկացնել վաճառականների մատնանշած տեղը: Նահանգական վարչութիւնը համաձայնւում է, միայն՝ եթէ հողը (գրունտը) հիմք զցելու համար յարմար կլինի, որի մասին կարգադրւում է քննել տեղը: Հանքային ջրերի ճարտարապետի միջոցաւ գննւում է գետինը և չի գտնում ոչ մի արգելք շինութիւնը կառուցանելու համար: Այդ գննութիւնը տեղի է ունենում 21 հոկտ. ակտից № 1158 նահանգական վարչութեան գրածի հիման վերայ, ուր ներկայ էին ճարտարապետը Տկաչենկոյի հետ քաղաքային վարչութեան ներկայացուցիչ Կլէպեկով, տաճարի հողաբարձուներ, վա-

ճառականներ Աթաբէկեան, Խօջայեան, Աղայեանց և Բերբերեանց: Սրանից յետոյ նահանգական վարչութիւնը խնդրում է ներկայացնել եկեղեցու յատակագիծը, նոյնպէս և Պետաիգորսկի և Գէորգեակի հայ բնակչութեան, մշտաբնակների և երթեկների թւի մասին տեղեկութիւն: Քաղաքային վարչութիւնը հիմնւելով 1867 թ. 14 յունւարի ներկայացած խնդրագրին ստորագրողների վերայ, գրում է նահանգական վարչութեան. — «խնդրագրից և հաւաքած տեղեկութիւններից երևում է 28 ընտանիքներից 8-ը մշտաբնակ են, իսկ 20-ը գուրկ անշարժ կայքից»:

Հայերի ընդհանուր թւի մասին ճիշտ տեղեկութիւն տալ դժւարանում են, պատճառ բռնելով թէ «իրանց առևտրական գործերով յաճախ բացակայում են, իսկ ամառները զգալի կերպով շատանում»: Գէորգեակում մըշտաբնակներ կան 167 հոգի հայեր: Ի նկատի առած այն հանգամանքը, որ եկեղեցին յատակագծով՝ 6 սաժեն մեծութեամբ պէտք է լինի, որի համար ցոյց տրւած հողը օրէնքով փոքր է, չի թոյլատրւում այդ տեղում շինել:

Նահանգական վարչութիւնը օրէնքի հիման վերայ կայացած իր այդ վճիռը յայտնելով Պետաիգորսկի և Գէորգեակի հայ վաճառականներին, միևնույն ժամանակ յանձնւում է նահանգական ճարտարապետ կարգերին քննել այն թէ Բաղարօ-Բուրաւօյ հողամասը անատեղերի յատկացնելով քաղաքը չի այլանդակի, չի փխսւի: Այդ նոյն գրութեան կից նահանգական վարչութիւնը իր կողմից առաջարկում է եկեղեցին շինել, ոչ թէ Պետաիգորսկում, այլ Գէորգեակում և որ Պետաիգորսկում եկեղեցու շինութեան չթոյլատրւելը Գրորգեակուն չի վերաբերում: Վերջ ի վերջոյ 16—17 այս դեկ. № 8336, 1863 թ. լիւտերական եկեղեցու համար խնդրւած, բայց թոյլտուութիւն չստացւած և անորոշ մնացած հողը տրւում է հայոց պայմանաւ, որ քաղաքը ի դէպս լիւտերական եկեղեցի շինելու կարիքի մի յարմարաւոր տեղ յատկացնի նրանց:

Նահանգական վարչութիւնը ինչպէս այս 800 քառ. սաժ. հողի, որ լիւտերական եկեղեցու համար էր, նաև միւս 400 քառ. սաժ. գետնին, որ սորան կից էր ոչինչ գէմ

շունենալով, այդ մասին յայտնում է քաղաքային վարչութեան ի գիտութիւն և կարևոր կարգադրութիւններ անելու: 11-ն սեպ. 1869 թ, № 3724: Պետաիգորսկի հայ հասարակութիւնը իւր հետ ունենալով և Գէորգեակիցիների հաճութիւնը, նոցանից դրամական օգնութիւն է խնդրում եկեղեցու շինութեան համար: Ահա դնում ենք Գէորգեակիցիների այդ առթիւ կազմած համախօսականը:

«Յամի տեառն 1865 թ. 8 հոկտեմբերի ի Գէորգեակի մենք ստորագրեալ ժողովրդականքս քարաքիս գէորգեակ լսանք զհրաման վիճակային կօնսիստօրեայի հայոց Աստրախանայ գրեալ առ Գէորգեակոյ գործակալ Սարգիս քահանայն մեր Տէր-Պողոտեանց ի 16-ն յուլիսի այսր ամի № 629, որով կօնսիստօրն պատւիրէ նոյն քահանային ընկալեալ ի մէնջ զգրաւոր բարեհաճ կամս ի տուչութիւն ի գումարաց Գէորգեակոյ հայոց ս. Գէորգայ եկեղեցոյ հինգ հազար ըութիւն արծաթ դրամաց առ ի շինութիւն նորոգ կառուցանելի եկեղեցոյ ի Պետաիգորսկի քաղաքի համաձայն խնդրանաց տեղոյ հայազն ժողովրդոց մատուցանել զայն ի հեռաւոր անօրինութեան իւր: Ուստի և գրեմք զայս թէ՛ մեք հաւաստի շատ ուրախ եմք և ցանկամք եթէ կառուցի ի Պետաիգորսկի հայոց լուսաւորչական եկեղեցի ուր պէտքն է անշուշտ ի փառաւորութիւն և ի պայծառութիւն մերազնէից, ընդունելով զտեղւոյ ժողովրդականս ժողովուրդք տեղոյս եկեղեցւոյ մերոյ հաւասար ընդ մեզ առիթ շատեցուցման և աւելացուցման եղեալ մեր եկեղեցական գումարաց, առ այն և յօժար սիրով առ ի տալոյ նոցայ, ոչ թէ հինգ հազար ըութիւն արծաթ, այլ աւելի ևս ե այն եթէ կարելի լինէր առանց ամենևին պահանջելոյ գէթ առանց տոկոսովք եթէ կամք իցեն հոգևոր իշխանութեանց եթէ ոչ հոգևոր իշխանութիւնքն գիտեն. իսկ եթէ հոգևոր իշխանութիւնքն չկամեցին զի տացի նոցա ի շինութիւն ի Պետաիգորսկ ի հայոց եկեղեցւոյ այն գումար ամենևին թարց պահանջման թարց տոկոսից և կամ եթէ պահանջեսցին ի տեղոյն Պետաիգորսկի ժողովրդոց յապահովութեան եկեղեցական գումարաց զգրաւոր հաստատութիւն կամ ոչ ինքեանք գիտեն նը-

մանապէս և այդ բոլորն կախեալ է զկամաց հոգևոր իշխանութեան և ոչ զմերոյն, վասն որոյ եթէ հոգևոր իշխանութիւնքն ի ժամանակն ինչ կամեսցին յետ տալ պահանջել զայն գումար մեք ոչ խոստանամք և ոչ ունեցեմք վճարել թող յայնժամ պահանջեսցէ ի տեղւոյ ժողովրդոց եթէ կառուցցի եկեղեցին անդր ի գումարաց նորին եւ ոչ ի մէնջ: Մեք ուրեմն աղատեմք և լեցուք աղատ յայնմանէ. եւս եւ ի պատասխանատուութիւնէ, սակայն որպէս գրեալ եմք ցանկամք և յօժար եմք սիրով ընդ այն այս է ընդ տուչութիւն այնր գումարաց ի շինութիւն ի Պետալիգ. հայոց եկեղեցւոյ: Այսքան է անա մեր յօժարութիւն զօրմէ ի ոմին յայտնեալ ի ձեռն յիշեալ զըրծակալ Սարգիս քահանայի Տէր-Պողոսեանց տամք զայս վիճակային կօնսիրատորիայի հայոց Աստրախանայ: Յիսկսկանին ստորագրեալ են երեցփոխան Աստուածատուր Չերքեսով, նախիջկանցի առաջին իարգի վաճառականի եղբայր Ալէքսան Ալազթալով, նախիջկանցի Մարտիրոս Մանիէլեան Կաստանեան, նախիջկանցի Մարտիրոս Մարքարեանց: Նախիջկանցի Սերովբէ Աղճամեանց, նախիջկանցի Եսայի Պերպերեանց, նախիջկանցի Իսահակ Խըլըտեանց, նախիջկանցի Կարապետ Մուժանով, նախիջկանցի Մինաս Գրիգորեանց Խըռճեանց, նախիջկանցի Գաբրիէլ Չեռնալով, նախիջկանցի Միքիթ Զուխարցիւ, նախիջկանցի Մինաս Սիմօնեան Զուպանովեանց, նախիջկանցի Աւետիք Չեռնիլով, մոզդուկցի Գէորգ Դաշեանց, նախիջկանցի Սերովբէ Սարգիս Քոմուրճեանց: Հրամանաւ Նորին բարձր Սրբազնութեան վիճակաւոր առաջնորդի արտագրեցի յիսկականէն՝ ընդ որում և համեմատ է զբազիր Բ. ԹՈՒԷԼԵԱՆՑ:

Պաշտօնական գրութիւններէց յետոյ ստացուում է Գէորգիեակուց 5000 ռ. որը և գործադրուում է. 1871 թ. 1868 թ. 18 յունիսի ի Պետալիգորսկի եկեղեցու շինութեան հոգաբարձութեան առաջնորդի գրութիւնը: Արժանամեծար հոգաբարձուաց ի շինութեան նորակառոյց եկեղեցոյն հայոց Պետալիգորսկ քաղաքին պարոն Գրիգորի Աթաբէկեանց, պարոն Բաղդասարա Խաճայեանց, պարոն Յակովբա Երմազայեանց և պարոն Եսայեա Բերբերեանց:

ՊԱՏԻՒՐԱԳԻՐ.— Ըստ մերում սեպուհ պարտաւորութեան, համաձայն եկեղեցական և կայսերական կանոնաց անձամբ անձին այց առնելն մեր ընդհանուր թեմին Աստրախանայ և կովկասեան նահանգաց, դէպ եղև մեզ մըտանել նաև ի Պետալիգորսկ քաղաք, ուր ուրախութեամբ հոգւոյ գտաք փոքրիկ հօտ հայոց վերաբնակելոց ի քաղաքաց և ի գիւղօրէից գումարեալ ի մի նախագրեալ քաղաքի անդ, այլ ցաւեցաք յոյժ զի տեսաք զնաւս պոկեալ ի սեպհական հայրենի եկեղեցւոյ հայոց, որպէս ունեն և այլադաւան ազգիւնք բնակիչք ի նոյն քաղաքի, այլ զի կարի ջերմեռանդութիւնք և հոգեկան բաղձանք արագատիցն հայոց մերազանց առաքելական սուրբ եկեղեցւոյ ոչ իտուն մեզ դուլ և դադուր և ոչ հանդիստ, այլ յօժարակամ ինքնահրաւէր ջերմեռանդութեամբ իւրեանց յորդոր եղեն մեզ ի ներկայութեամբ բազմաց յատկացուցանել ի միջոյ ժողովոյն զչորեքիկն հոգաբարձուս ի պատուելագունից քաղաքացեանցն և իսկոյն տալ ինքեաց զտոմարս կնքեալ և ժապաւինեալ առ ի ստորագրել զանւանս և զգումարս վասն շինութեան նորակառոյց եկեղեցւոյ իւրեանց: Ուստի և համաձայնութեամբ ժողովոյն յանձնեցաք ձերում արժանայանձնութեանց ըստ այսմ և զկնքեալ և վաւերացուցեալ տոմարս երկուս որպէսզի մեծաշան աշխատութեամբ Ձերով և անձանձիր ջերմեռանդութեամբ Ձերով յորդոր լիջիք բնակաց և եկաց մերազանց և օտարազանց մասնակցել յայն գործ աստուածասիրական թէ ի քաղաքիս և թէ այլ քաղաքս, որով կարող լիջիք տեսն գործակցութեամբ հասանել Ձերոյ վաղափափազ ցանկութեան կառուցանել եկեղեցի սուրբ, որոյ տեղին արդէն նշանակեալ յանձնեալ է Ձեզ, զոյկ ընդայսմ և պատուէր տամ հայրաբար փոյթ յանձին կալնուլ յօրինել տալ ի ձեռն հրմուտ արուեստագէտ անձանց զձեւակերպութեանց և զփասազ նաև զորքանութիւն գործադրելի զրամոց և այնպէս առաջի առնել կօնսիրատորին հայոց Աստրախանայ զի համաձայն կանոնաց հաստատել տացին ի ձեռն սինօդին էջմիածնի ուր արժան է և ապա ըստ յաջողելոյն Աստուծոյ յառաջիկայ տարւոյն հիմնարկեսցի եկեղեցին ի փառս

Աստուծոյ և ի պարծանս սիրելի ժողովրդականաց մերոց:» Այնուհետև օրհնելով յորդորում է ամենայն անձնւիրութեամբ սկսել, արիութեամբ գլուխ բերել և մաղթանքներ է անում աղօթելով նոցա գործի յաջողութեան համար: Ստորագրել է վիճակաւոր առաջնորդ Աստրախանի և Կովկասոս ամենայն հայոց Գէորգ արքեպ. Վեհապետեանց:

Հասարակութեան ընտրած հոգաբարձուները անմիջապէս 1868 թ. ամառը եկեղեցու 800 ք. ս. տեղը գնած 400 քռ. սաժենով էլ մեծացնելով իրանց համակիր ունենալով նաև ուսուսանողներին այնքան վստահ էին թոյլտուութիւն ստանալուն, որ շինութեան քարերը բաւականաչափ քանակութեամբ բերել թափել էին տեղում: Հաւատացած էին, որ մինչև 1869 թ. գարնանը հրնար կլինի սկսել շինութիւնը:

Նրանք սխալւած չէին: Ստացում է եկեղեցու տեղի յատկացման հրահանք: Միևնոյն բամանակ պետտիգորսկաբնակ, նախկին Գէորգեակ եկեղեցու ծխականների գիմումներին թէ հագեւոր իշխանութիւնը և թէ գէորգիակեցի հայերը սիրով վերաբերւեցին, այնպէս որ գէորգիակեցիք 1871 թ. առաջուց խոստացած 10,000 ք. 500 ք. տալիս են անմիջապէս: Եկեղեցու շինութիւնը սկսում է յոյս նւնենալով, որ 10,000 ք. կայ, մնացորդն էլ նւիրաբերութիւններով կծածկւի, որի մասին կօնսիստորեայից ստացւել էին ժապաւինեալ մատեաններ: Մինչև 1875 թ. շինութեան որպիսի քայլերով առաջ գնալու մասին գրտւոր ոչինչ չկայ, իսկ այդ թւի մարտի 15-ն կօնսիստորեան հիմնւելով եկեղեցու շինութեան հոգաբարձութեան յայտարարութեան վրայ, թայլ է տալիս բանկից վերցնել 3500 ք. շինութեան գործի համար: Եւ այդ հրամայւում է Գրիգոր Աթաբէկեանին, որին և առանձնապէս պատուրւում է ստանալ, շահեցնել, ծախսել եկեղեցու շինութեան վերայ և հաշիւները ներկայացնել ատեանին:

Այնուհետև շինութեան գործը կաղում է որ հասարակութեան միակ յոյսը Գէորգեակի եկեղեցու պատրաստի գրամագլխից ստանալու վերայ էր, Առաջնորդին դիմում են խնդրելով յաջողեցնել մնացեալ 5000 ք. ստանալու:

Առաջնորդը երկար միջնորդ կարգադրողի դեր կատարելուց յետոյ տեսնելով, որ Գէորգիակեցիք չեն ցանկանում տալ, իր 1877 թ. յունիսի 13-ի գրութեան մէջ ի միջի ալոց գրում է, որ իրան, ինչպէս և հոգաբարձութեան քաջ յայտնի է, որ 5000 բուբլիով չէր շինւի, որ Գէորգիակուց զարձեալ կվերցնւէր, ստկայն այժմ անհնար է, որովհետև ամեն մէկը զխից դուրս բղաւում և խանդարում է: Այժմ մնում է կամ եղած պատերի վերայ ծածկել, կամ սղասել մինչև գումար կհաւաքւի և կամ խոհուն գէորգիակեցիներին հետ խորհրդակցելով համախօսական առնել, որ համաձայն են տալ, իսկ ինքը ամենայն յօժարութեամբ կհաստատի»: Աւելացնում է, որ մօտ օրերսմ գնալու է Ստաւրօպօլ հայոց եկեղեցին օծելու, կաշխատի այնտեղից հանդիպել կիսատ եկեղեցին տեսնելու և թերևս յաջողեցնի Գէորգեակուց գրամ վերցնել: Վեհապետեան արքեպիսկոպոսի ջանքերը գուր են անցնում: Յունիսի սկզբներին ժողովուրդը մի խնդրագիր է ուղարկում վեհապառ կաթողիկոսին առաջնորդի խորհրդով, որի վերայ կաթողիկոսը մակագրում է «Յանձնել Սինօդն. 1878 թ. 12 յունիսի, թ. 104: Սինօդը ընթացք է տալիս այսպէս:

Առաքմամբ խնդրոյս Սինօդս սրբոյ էջմիածնի յանձն առնէ վիճակաւորին հայոց Աստրախանայ գերապատիւ Գէորգ արքեպիսկոպոսի համաձայն նախեղակ տնօրէնութեան ծայրագոյն հոգևոր իշխանութեան համոզել զհայ ազգի ժողովրդականս Գէորգիակոյ տալ ի գումարաց եկեղեցւոյ իւրեանց զմնացեալ հինգ հազար բուբլիս փոխաբինաբար ի գործադրութիւն շինութեան եկեղեցոյն Պետտիգորսկոյ և զհետեանացն յայտնել Սինօդիս վերադարձուցմամբ խնդրագրոյս: Ի 20-ն յունիսի 1878 ամի ի սբ. էջմիասին:» Իսկականին ստորագրել են անգամ Սինօդի

Ատենադպիր՝

Գործավար՝

Հրամանաւ Նորին բարձր որբագնութեան վիճակաւոր առաջնորդի արտագրեցի իսկականէն ընդորում և համեմատ է: Գրագիր Բ. Թւելեանց:

Այնուհետև Վեհապետեան առաջնորդը մի շարք գրու

Թիւններով աշխատում է գործակալ և Գէորգեակու ծխատէր Սարգիս աւագ քահանայի միջոցաւ համոզել ժողովրդեան, որ մնացած 5000 ռ. տալով հնարաւորութիւն տան տաճարի շինութիւնը գլուխ հանել: Ժողովուրդը մասամբ երկիւղ կրելով, որ մի գուցէ ապագայում հոգեւոր իշխանութիւնը այդ դրամը իր կարիքի համար գէորգիւսկեցիներէից պահանջի, որովհետեւ նոցա համաձայնութիւնն առնելուց յետոյ է հրամայում դրամները տալ, միւս կողմից, Տէր-Սարգիսը տրամադրւած չէր Պետրիգորսկու եկեղեցու գլուխ բերելուն, որովհետեւ առանց վերջինիս Պետրիգորսկի ժողովուրդը համարւում էր Գէորգիւսկու եկեղեցու ծխ: և միւս կողմից էլ կային, որ պղաղորում էին հասարակաց միտքը, հակառակ լինելով իրանց եկեղեցուց գումար տրւելուն: Այս բոլոր հանգամանքները արգելք էին լինում Գէորգեակեցիներին եղբայրական օգնութեան հասնել պետրիգորսկեցիներին շինութիւնը, հասկութեան խայտառակող, երկար տարիներ կիստտ մնալուց հանելու, վերջացնելու: Նոքա յամառւել էին որի առթիւ զայրացած ծորունի Վեհապետեան արքեպիսկոպոս առաջնորդը գրում է.

«Ի 24 հոկ. ընկալաք որպիսածանոյց նամակ Ձեր, յորմէ ծանեաք վերստին յամառուն կամաց հասարակական ոմանց անբարեմիտ անձանց ժողովրդոյ Գէորգիւսկայ, որք իւրեանց չարայոյզ խորհրդով վերստին պաշտեն գտմարդի կամս իւրեանց ոչ յԱստծոյ երկնչելով և ոչ ի մարդկանէ ամաչելով՝ գտուն և գտաճար Աստուծոյ ընդ իւրեանց չար ըղձից թողուն այդ աւերակ և թերատ. միթէ չէր կարելի արգեօք զպատճէն պոյմանագրոյն, զորս թողաք առ ձեզ, որով խոստանան անշուշտ լրացուցանել 45000 ռ. Թարգմանել օրէնագէտ միոյ աղօվկաթի և այնպէս զինել զինուորել և բռնի պահանջել օրինասաստ պահանջմամբ»:

Այնուհետեւ նկարագրում, որ Մակարով Ստեփանն ճանապարհին պատահել է իր վարդապետին, (որը Գէորգիւսկ էր գնում ժողովրդի վերայ ազդելու) և յայտնել է, որ տալ չէ կարելի: Յետոյ նկարագրում իր տեսակցու



Աթաբէկեանց Գրիգոր:

թիւնը 10. Դիաչկովի հետ, որի մասին ասում է. — «մի մարդ է, որ քաջութիւն չունի այն կամ ոչ ասելու: Դես ու զէն է գցում խօսքը»: «Գարնանը կաշխաւենք տալ»: «Կերթամ կիսատ եկեղեցին կտեսնեմ և տեղումը կկարգադրենք և այլն»: Արի գայլի գլխին աւետարան կարդայ, նա էլի իր ոչխարը սարն անցաւն է կրկնում:

Յանցանքի մի մասն էլ գցում է տեղւոյն գործակալ Տէր-Սարգիս քահ. Տէր-Պողոսեանի վրայ, որի մասին էլ գրում է. — «Որպէս երևում է, ոչ միայն ժողովրդականք, այլ և քահանայն նոցա նոյնպէս ապականեալ հոգով միակամութեամբ ցուցանին զհակառակութիւն և չկամին երբէք կառուցանել այդ եկեղեցի, զի մի լիցի այդր այլ ոք քահ. քանզի և իմ գրութեանց բնաւին չունի միոյն ևս պատասխան՝ այս քանի երրորդ ամիսն է:»

Այնուհետեւ խրախուսում է չյուսահատել, եղած նըւէրներով պատերը հասցնել մինչև կամարները և անմիջապէս ծածկել և սպասել մինչև հնարաւոր կլինի շարունակել: Նոյն թւում, յունիս ամսում Գէորգեակ առաջնորդի կողմից փոխանորդ գնացած Յովհաննէս վարդապետ Շիրակունուն Տէր-Սարգիսը դատարկածեռն և ոչինչ չարած ճանապարհ է գնում պատճառաբանելով թէ ժողովրդի առաջաւոր անձինք վաճառականական գործերով քաղաքից բացակայում են, ուրեմն և վերջնական պատասխան տալ հնարաւոր չէ, իսկ նոցա հաւաքւելը ամիսներ կքաշի: Այս աւելի է զայրացնում առաջնորդին, որի հետեանքը լինում է վերև բերածս նրա գրութիւնը ուղղած Պետրիգորսկի հոգաբարձութեան:

1879 թ. Պետրիգորսկ ամառանոց եկած զանազան քաղաքների ժողովրդականք տեսնելով եկեղեցու կիսատ և լքած մնալը, մի խնդրագրով դիմում են Գէորգ դ. կաթողիկոսին խնդրելով տնօրինել Գէորգեակու եկեղ. 25000 ղրամապլիսից, ըստ իւրեանց համաձայնութեան որոշած և հոգևոր իշխանութեան թոյլատրւած 10000 ը, մնացորդ 5000 ը, տալ Պետրիգորսկուն, որովհետեւ նախորդ եկեղեցու այսպէս աւեր մնալը նախատինք է և ճնշող տեղական հայերի համար և միւս կողմից, ժողովրդի որոշ-

ման համաձայն եկեղեցու զուգն բերելուց անմիջապէս յետոյ պիտի բացւի երկսեռ դպրոց՝ երեխաներին օտար դպրոցներում օտարացման ենթարկելուց ազատելու համար: Այս խնդրից և մի քանի պաշտօնական գրութիւններից յետոյ ժողովուրդը յոյսը կարած Գէորգեակուց, 1882 թւի 2 յունւարի ծխական ժողովում, կայացած երեցփոխան Խոջայեանի տանը, շինութեան գործը քննելով, եղած ժողովարարութեան միջոցները քիչ է գտնում շինութիւնը ցանկալիին չափ առաջ տանելուն, որոշում են թոյլատրել հոգաբարձութեան օրինաւոր իշխանութեան թոյլտուութեամբ, երկուսից երեք հազար ըուրլի վերցնել և այնպէս աշխատել, որ մինչև աշուն պատրաստ լինի և ժամասացութիւն կատարւի: Ստորագրում են 15 անձինք: Ստանում են բանկից 3500 ռ. այդպիսով ու կամաւոր նւէրներով կամարակապ ծածկւում է, իսկ կաթողիկէն շինւում է փայտից ժամանակաւորապէս: Ի 11-ն հոկտեմբ. 1883 թ. թեմի կառավարիչ Սուքիաս Եպիսկոպոսի ձեռքով օծւում է նորակառոյց եկեղեցին: Տեղին Եպիսկոպոսը պահանջ է դնում մանրամասն եկեղեցու շինութեան ժապաւինեալ մատեաններով և ընդհանրապէս եղած ել և մտից ամբողջ հաշիւները կազմելով, կօնսիստորեայից տրւած մատեանների հետ ուղարկել ատեան: 1883 թ. հոկ. 21-ն առաջնորդը առանձին գրութիւններ ուղարկելով 1) երեցփոխան Խոջայեանին ստիպում է անմիջապէս ժապաւինեալ մատիանները կանոնաւոր պատրաստւած, ստուգւած հաշիւների հետ ուղարկել ատեան: 2) Գործակալ Սարգիս քահ. Տէր-Պողոսեանցին պատւիրում է ամենակարգով միջոցով մանրամասն հաշիւները կազմել տալով՝ մտից և ելից ստանալ և ուղարկել ատեան:

Երեցփոխը անուշադիր է թողնում այս գրութիւնները, որից յետոյ կօնսիստորեան նկատելով, որ միշտ անհետեանք են մնում եղած հրամանները 1884 թ. 12-ն յունւարի պաշտօնապէս գրում է Պետրիգորսկի ոստիկանութեան «մի շաբաթւայ ընթացքում Պետրիգորսկի բնակիչ նախիջկանցի Բաղդասար Խոջայեանից ստանալ եկեղեցու շինութեան ել և մտից ամբողջ հաշիւները մա-

տեաններով ուղարկել կօնսիստորեան:» Այս կարգադրութեան մասին տեղեկութիւն է տրւում գործակալին, որի զգուշացնող և եղած կարգադրութեան մասին տւած տեղեկութիւնից զգալով, որ վատ վախճանի հանգաւ գործը և վիրաւորւած՝ Պետրիգորսկի հասարակութեան անուշով տալիս է իր հրաժարականը, բերանացի պատմելով իրան հասցրւած վիրաւորանքի մասին ժողովրդին:

Նոյն օրը հասարակութիւնից 14 անձի ստորագրութեամբ Խոջայեանին մի գրութիւն է տրւում, ուր ցաւակցութիւն յայտնելով կօնսիստորեայի ոչ տեղին հացցրած իրան վիրաւորանքի համար, աղերսում են յետ վերցնել հրաժարականը: 1884 թ. փետր. 26-ն եկեղեցու շինութեան հոգաբարձութիւնը մի յայտարարութեամբ դիմելով ժողովրդին խնդրում են մարգիկ նշանակել հաշիւները մատեաններով քննելու: Նոյն թղթի վրայ գրւած է.— «Մեր, Պետրիգորսկի հայ հասարակութիւնս, ընտրեցինք մեր միջից չորս պատւաւոր անձինք բաղադրիկով Նախու Իվանիչ Մանդարովն, պատւաւոր քաղաքացի Լազար Լուքիանիչ Սվեշնիքեանց, Խաչիկ Կարապետեան Թամանեանց, Զովհաննէս Մարտիրոսեան Պապաւինեանց, վասն կազմելոց մասնաժողով ի միասին հոգաբարձաց շինութեան եկեղեցոյ և վերահասու լինելոյ ամենայն գործոց և հաշւոց ել և մտից վերաբերեալ շինեալ եկեղեցւոյն ի 26-ն փետ. 1884 թ.:» Ստորագրել են 14 մարդ:

1884 թ. 21-ն յուլիսի ծխ. ընդհանուր ժողովում 25 անձինք խորհրդակցելով կօնսիստորեայի կարգադրութեան առթիւ պատրաստում են «յայտարար խնդիր», որի մէջ ցաւ են յայտնում, որ աշխատաւոր մարդուն փոխանակ ոգևորելու, խրախուսելու, այդպիսի խոր վիրաւորանք են պատճառում և կարգադրում գործակալին № 402, 9 մարտի տարւոյս գրութ. «Ժողով կազմել նոր երեցփոխ ընտրելու, որ և գալով անցեալ ամսի 22-ի ժողովում յորդորում էր մեզ նորին ընտրել:» Մասնացոյց անելով այն հանգամանքի վրայ որ ոչ Խոջայեանցից, այլ ամբողջ հոգաբարձութիւնից պէտք էր պահանջել հաշիւները, և որ ժապաւինեալ մատեանները պահել են, որ կուրսի ժամանակ

հնարաւորութիւն ունենան պարտքերի վճարման համար գրամ հաւաքել: Պնդում են ճանաչել խոջայեանին երեցփոխ, որի համաձայնութիւնը ստացել են և նորի ընտրութիւն չլինի: Ստորագրել են 25 անձինք:

1884 թ. 10 դեկ. կօնսիստորեան հրամանագրում է Գէորգեակու գործակալ Սարգիս քահ Տէր-Պողոսեանցին № 2183, երեցփոխան Բաղդասար խոջայեանցին որոնցով նորակաւոյց եկեղեցու շինութեան համար եղած հաշիւներն է պահանջում: Գործակալի գրութեան հետեանք ատեանը պրում է. — Գործակալն յայտարարութեամբ ի 25-ն մարտի տարւոյս յայտ առնէ՝ թէ եղեալ են մուտք գրամոյց եկեղեցւոյն շինութեան Պետտիգորսկոյ 17,080 ռ. 38 կ. և ծախք 18628 ռ. 95 կ. հանեալ զմուտս ի ծախուց մնայ վճարելի պարտս ի վրայ եկեղեցւոյն 5000 ռ. և մասնաւոր անձանց 1548 ռ. 57 կ.: Եւ խնդրի համաձայն խոստման տալ ձեզ ժապաւինեալ մատեան վասն ժողովելոյ գտուրս ի վճարումն պարտուց եկեղեցւոյն: Ընտրւած հաշւետեանները քննում են հաշիւները, ենթարկում ընդհանուր ժողովի վաւերացման, սակայն դեռ բոլորովին աշխատութիւնները չէին վերջացրած և մատեանները Մանգալեանի մօտ են լինում, որ խոջայեան իր համար մի թուրիմացութիւն ցրելու նպատակաւ մատեանները վերցնում է իր մօտ մի երկու օրով և այնուհետեւ չի վերադարձնում յանձնախմբին: Այս դէպքը բաւական յուզմունք և վրդովմունք է առաջացնում ժողովրդի, մանաւանդ խոջայեանին քննադատողների մէջ:

Խոջայեան վերցնելով մատեանները իր կազմած հաշիւի հետ ուղարկում է կօնսիստորեայ, որին պարզ ապացոյց է այն, որ ժապաւինեալ նոր մատեան է խնդրում իր այդ գրութեան մէջ: Աւելորդ չենք գտնում դնել երեցփոխ և կարգադրիչ հոգաբարձու Բաղդ. խոջայեանի, Պետտիգորսկի եկեղեցու շինութեան ել և մտից հաշիւները, գրւած կօնսիստորին ի 12-ն մարտի 1885 թ., որով և փակւում է եկեղեցու շինութեան հաշիւները աղմկալի գործը:



«Վիճակային կօնսիստորեայի հայոց խորհրդակցութեամբ երեցփոխան Պետտիգորսկի եկեղեցւոյ Բաղդասար խոջայեանցի»
Յայտարարութիւն:

Առ հրաման կօնսիստորիդ գրեալ ի 10-ն դեկտեմբերի 1884 ամի № 2183 որ յազապս պարզաբանութեան ու ստուգութեան ժողովարարութենէ մտից ու ծախուց մատենից շինութեան տեղւոյս եկեղեցւոյ և այլն, յայտ առնեմ սովին ամենախոնարհաբար թէ համաձայն մտաց յիշեալ հրամանի ժողովեալ և զմիւս հոգաբարձուս շինութ. եկեղեցւոյ բաց յերկուց որք ի վաղուց արդէն գտանին ի բացակայութեան, ի ներկայութեամբ գործակալ Սարգիս աւագ քահ. Տէր-Պողոսեանցի, ընթերցաք զայն հրաման ի լուր նոցա ու ընդ որոց ստուգեալ ի պատճենէն դարձեալ զայն հաշիւ գտաք, սւղիղ ու համաձայն նախկին հաշւոյ մերոց, թէ ընդհանուր մուտք եղեալ են 17080 ռ. 38 կոպ. ու ծախք 18628 ռ. 95 կոպ.: Գործակալն ևս ծախսն հաշւեալ այնքան իսկ մուտ 17166 ռ. 62 կոպ, յորոց ըստ յայտնելոյ մերոյ մոռացեալ հանել ի բաց 86 ռ. 24 կ. որ ի պատճառս մահւան հոգաբարձու Յարութիւնի Զօյատարեանց կորուսեալ ի վրայ նորա, յորմէ պատկանէր յետ հանելոյ ի 1055 ռ. 45 կ, մտից 969 ռ. 21 կ. ծախսն, որպէս երևի ի հաշւէտումարի, հանեալ ուրեմն զմուտս ի ծախուց ըստ հաշւոյ մերոյ մնայ պարտս ի վրայ եկեղեցւոյն մերոյ 6548 ռ. 57 կ. յորոց վճարելիս 5000 ռ. Գէորգեակոյ եկեղեցւոյն, 1548 ռ. 57 կոպ. մասնաւոր անձանց՝ Գէորգա Մանգալեանց մուրհակաւ 850 ռ. Ղազարու Սվէշնիկեանց 75 ռ. առանց մուրհակի, Մանուկա Բչախչեանց 50 ռ. Դաւիթ Կուրջեանց 50 ռ. Գէորգա Պապովեանց 50 ռ. Գէորգա Պապիկեանց 50 ռ. Յովհաննու Բարասինեանց 25 ռ. և ինձ 388 ռուբ. 57 կ. կօնսիստորդ որպէս երևի ի յիշեալ հրամանագրութիւնէ լեալ է, զի մուտք իբր եղեալ են 18658 ռ. 68 կոպ. և ծախք 17660 ռ. 36 կ. մեք ի յանձնէն գործակալին մատեան առ ի առաքելոյ ի կօնսիստորդ բերանացի յայտնեաք նմա՝ յայտնել կօնսիստորիդ յիւրմէ կողմանէ թէ

զհաշիւս մտից և ծախուց ի հին մատենէ տւեցելոց և հանգուցեալ Գէորգա արքեպիսկոպոսէ արտագրեալ են ի նոր մատենւոյ որ տւեալն է ի կօնսիստորէդ որպիսի մատեն միայն պարտ էր հաշւել և իմանալ զբոլոր հաշիւ մտից և ծախուց թողեալ զհինն ի բաց պատճառ որոյ այս է, զի թողումք ի նւիրատուողաց ոչ հատուցանելով իսկոյն զկնի ստորագրութիւն իւրեանց զպատրաստի նւիրազրամս թողին ի վերայ իւրեանց յորոց մասն առ մասն ստացեալ գրեաք ի նոր մատենւոյ և այնպէս բոլոր պատրաստի զրամս արտագրեալ ի նմին, որպէս և ծախսն և ի վերայ քանի ոմանց ի պատճառս յապայն անաջողութեան նոցա կորուսեալ բաւականի գումարք, որոց ցուցակ ևս առաքեալ են ընդ մատենիցն ի կօնսիստորդ: Թէև գործակալն Տէր-Պողոսեանց, ըստ ասելոյ իւրոյ իբր թիւս մի քանի հարկաւոր ծանօթութեանց գրեալ ի մատենւոյ զտեղեկութիւն և զայսմանէ, ոչ աւելորդ համարեմ ևս յայտնել բաց ի վերագրելոյն և զայս թէ ի պնալն իմ ի Պետերբուրգ վասն բնակութեան յանձնեալ էի խորհրդով միւս հոգաբարձաց ևս Գրիգորի Աթաբէկեան և Յարութիւնի Զօլատարեանց, որք էին և հոգաբարձուք, զմատենաս և զհաշիւս մտից և ծախուց եղեալս յայնժամ թէ ի ձեռն իմ և թէ նոցա, յետոյ, յորոց երևի առաջին անգամ յիշեալ 1055 թ. 45 կ. մտից ծախսեալ է 969 թ. 21 կ. և աւելի ֆուցեալն 86 թ. 24 կ. որպէս գրեալ եմ կորուսեալ ի վերջոյ ի վերայ հանգուցեալ Զօլատարեանի յետ այնորիկ անցուցեալ ի ձեռս նոցա թէ գումարք Գէորգեակոյ եկեղեցւոյ և թէ ժողովեալ կամաւոր նւերք 8314 թ. 80 կ. ծախսեալ ի վերայ շինութեան եկեղեցւոյ և այսքան այս է 8314 թ. 80 կ. զկնի վերադարձմանս ի Պետրիգորսկ ընկալեալ ի նոցանէ զմատենաս ժողովեալ եմ գնւէրս 7766 թ. 41 կ. և ծախսեալ 9344 թ. 94 կ.: Այս է ահա հաշիւ մտից և ծախուց շինութեան եկեղեցւոյ մերոյ, յորպիսիոց պարզապէս երևեսցի, թէ որքան ծախք և որքան պարտք ի վերայ եկեղեցւոյն մերոյ վճարելիք թէ Գէորգեակայ եկեղեցւոյն և թէ մասնաւոր անձանց, իսկ թէ համաձայն կարգին պահանջման, ոչ գտա-

նին ստորագրութիւնք ստացողաց զզրամս պատճառն է այս, Աթաբէկեանցն ևս գորով միայնակ յանժամ և կարգեալ ի քաղաքական գործս ի պաշտօնի օգնականի դիրեկտորի քաղաքական բանկի առ այն և չունենալով ժամանակ, որպէս և միւս հոգաբարձուք, բոլոր հոգս ձգեալ են ի բացակայութեանս միմիայն ի վերայ Զօլատարեանցի, որ լինելով ծերունի և վատառողջ և աւելի անտեղակ պահպանութեան այն կարգի, կօնսիստորական մատենանի, չէ մտածեալ երբէք ի վերայ այնր, ևս ապա զբաղեալ գորով ի վերայ շինութեան և նորոգութեան կալւածոյս միայնակ չեմ ունեցեալ զժամանակն ստորագրել տալոյ մեծաւ աշխատութեամբ ստացողաց զզրամս, այնու մասնաւոր, զի բազմիցս գնեալ ի վաճառափողոցէ զգերանս և զայլ անհնարին թւէր հասկացուցանել զնոսա և ի ձեռն այնոց ստորագրել տալ առ այն ուրեմն և չկարացեալ պահպանել զայն միայն վասն խոշոր ծախուց գումարաց թէ շինութեան եկեղեցւոյ և թէ խաչկալի առեալ յիւրում ժամանակին զվկայականս և զպայմանաթուղթս, զորս ընդ սմին առաջի առնեմ կօնսիստորիդ և յուսամք զի ներդամութեամբ բաւականացեալ կօնսիստորդ բարեհաճեսցի առաքել ըստ խոստման իւրոյ զնոր ժառալինեալ մատեն վասն ժողովարարութեան ի հատուցումն մասն առ մասն պարտուց եկեղեցւոյ մերոյ, առ այն և ցուցանել զներողամտութիւն իւր ընկալնելով զայնպիսի պատճառս ի յարգանս, իսկ եթէ անշուշտ հարկաւորեսցի ստորագրութիւն հոգաբարձուաց ի ներքոյ յօդածոց և աւեալ ծանօթութեանց գործակալի և բոլոր հաշուց յայն դէպս խնդրեմ զարձուցանել զայն մատեն, զոր զկնի ստորագրութեանց առանց ժողովելոյ այնու գնւէրս վերադարձուցից ի կօնսիստորդ

Երեցփոխան՝ Բաղդասար Խոջայեանց:

Ի 12-ն մարտի 1885 ամի ի Պետրիգորսկ:

Հասարակութիւնը բաւական էր, որ թէկուզ փայտեայ կաթոլիկէյով, բայց և ծածկել և օգտուում էր: Ղեկավարները հոգացողութիւնը կենտրոնանում է այժմ նախ մասնաւոր պարտքերի վճարման և երկրորդ եկեղեցու

զանգակատան շինելու և ներքին բարեդարդութեան վրայ: Երեցփոխանի այդ առթիւ ներկայացրած նախահաշիւը կօնսիստորեան չի հաստատում և պատւիրում է եկեղեցու եկամուտները շինութեան գործի համար՝ պարտքերի վճարման երբէք չբանեցնել և այն, որ այդ ծախքերը պիտի ծածկեն միմիայն նւիրատուութիւններով, որ չափով հնարաւոր կլինի: Այնուհետեւ առժամանակ բաւականացած եղածներով և մնացեալ պակասութիւնները թողնելով բարեպատեհ հանգամանքների, զբաղւում են սեփական քահանայ ունենալու խնդրով:

ՍԵՓՀԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՐՅԸ

Պետախորսկի հայերի վերաբնակութիւնը Գէորգևսկուց լինելով և այն, որ նոքա Գէորգևսկի եկեղեցու ծրխականներ են եղել, իրանց ծխականատարութիւններն էլի կատարել են նոցա քահանայի ձեռքով: Հէնց այդ էլ շեշտում էր Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանցը, երբ զրում էր Տէր-Սարգիս քահանայի չկամութեան մասին դէպի Պետախորսկի եկեղեցու շինութեան գործը:

Առաջին քահանան եղել է Եկատերինօղարից եկած Տէր-Յարութիւնը, որի ժամանակ, մօտ 1840-ական թւերին աղօթատունը Խոջայեանի տներումն էր գտնւում:

Այդ ժամանակ, ապագային շինելիք եկեղեցու օգտին իւրաքանչիւր շաբաթ հայ խանութպաններից 5-ական կողէկ էր հաւաքւում: Հաւաքողն էր Կարապետ Խաղիզեանը, որը իր մօտ եղած զբամբ և պաշտօնը, եթէ կարելի է երեցփոխանութիւն անւանել—յանձնում է Մեռն Սիմօնեան Մուրադեանին, որից յետոյ արդէն ընտրութեամբ երեցփոխանութիւնը յանձնւում է Աթաբէկեանին (1868 թ.): Սրա օրօք, 1877 թ. յունիսի 22-ին, Պետախորսկի հայութեան համար շարունակ հոգացող առաջնորդ Վեհապետեանը ժողովրդի խնդրին բաւարարութիւն տալու առիթից օգտւելով, աստաբաթի Ստեփան քահանայ Տէր-Գրիգորեանցին նշանակում է ժամանակաւոր հովիւ և

գովելով նորա հայոց լեզւի մէջ հմուտ լինելը, յորդորում է ժողովել երեխաներին և յանձնել նորան, մայրենի լեզու սովորեցնելու: Ժողովրդին հաւաստիացնելու համար, որ իրաւ նա հայոց լեզու գիտէ, զրում է. — «Հայոց լեզւի հմուտութեան վկայական ունի Գաբրիէլ արքեպիսկոպոս Սյւլազովսկուց:» Տէր-Ստեփանը գալիս է Պետախորսկ. ժողովուրդը սիրով ընդունում և երեխաներին յանձնում է սովորեցնելու, որը և աղօթատան երկու սենեակներից մէկը զարդ է դարձնում: Տէր-Ստեփանը իր հեղ բնաւորութեամբ, բոլորի կողմից յարգանք է վայելում: Ժամանակակիցները պատմում են, որ «կարիքի բոսկին երեցփոխանը կգար նրա մօտ, կխորհրդակցէին և նոյն օրն իսկ տէր-հայրը հասարակութեան աչքի ընկնող ունեւորներին իր մօտ թէյի կհրաւիրէր, որոնք քահանայից կարիքի մասին լսելուց յետոյ, որ եկեղեցու շինութեան առթիւ էր լինում, անմիջապէս իրանց միջից կհաւաքէին պակասորդը և գործը կանդ չէր առնի»:

Տէր-Ստեփանը մնում է Պետախորսկ մինչև 1883 թ. օգ. ամիսը և հիւանդութեան պատճառով հեռանում: Ժողովրդին այնուհետեւ հովւում են պատահական քահանաներ, որոնք մանաւանդ մեծ տօներին՝ Զատիկին և Ծննդին առաջնորդի կողմից նշանակւում էին ժամանակաւորապէս Պետախորսկ լինելու: 1884 թ. օգ. 9-ին թեմի կառավարիչ Սուքիաս եպիսկոպոսը շեշտելով սեփական քահանայ ունենալու անհրաժեշտութիւնը, առաջարկում է երկու քահանայացու և խնդրում ընտրել մէկին: Հակառակ դէպքում, սպառնում է, որ ինքը կձեռնադրէ որեւէ մէկին, կուղարկէ և այնուհետեւ ժողովրդի խնդիրը չի լսի: Երեցփոխան Խոջայեանը երեւի հակառակ լինելով երկուսին էլ փախուստ է տալիս եպիսկոպոսի թեկնածուներից ընտրել տալուց և այդ առարկում է այսպէս. — «Վաճառական ազգայինք բացակայում են և ուրեմն որոշակի ընտրել այժմ անհնար է»: Խնդրում է առժամանակ յետաձգել, որ ժողովուրդը հնար ունենայ ընտրութիւն անելու: Նոյն թւի սեպ. 6-ին 36 անձանց ստորագրութեամբ կազմւում է համախօսական, որով ընտրում են զզլարցի, Ներսիսեան

դպրոցի ընթացաւորս Աբրահամ Շխինեանցին և առաջարկում առաջնորդին ձեռնադրել: Հոկտ. 23-ին թեմի կառավարիչը յայտնում է երեցփոխանին, որ քահանայապետի գործերն ուղարկել է Սինոդ: 1885 թ. ապրիլի 7-ին Շխինեանցը ձեռնադրւում է քահանայ և նորանով դպրոցի բացման համար սկսւում է լուրջ հոգացողութիւն:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1884 թ. սեպ. 7-ին, № 1492 գրութեամբ կօնսիստորեան դպրոցի մասին տեղեկութիւններ է պահանջում: Օր. քանի՞ տղայ, քանի՞ աղջիկ են սովորում: Ի՞նչ միջոցներով է կառավարւում: Քանի՞ ուսուցիչներ են պաշտօնավարում, ումից են հաստատուել և այլն: Երեցփոխանը պատասխանում է. — «Չկայ ուսումնարան, ուսուցիչ և ոչ մի մատեան ժողովարարութեան:» Աւելացնում է որպէս ծանօթութիւն. — Սրանից 4 տարի առաջ, այստեղ հիւանդ վ. Սարգսեանը, մեր բարեսիրտ Ստեփան քահ. Տէր-Գրիգորեանից խնամւած, տէրհօր մասնակցութեամբ, ժամատան սենեակներից մէկում հաւաքել էր մի քանի երեխաներ և սովորեցրել և այն էլ ոչ աւել, կարծեմ քան երեք ամիս»: Այս պատասխանն է ուղարկել աւելի պատասխանատուութեան երկիւղից, որովհետեւ եղածը մասնաւոր բնաւորութիւն է կրել:

Աբրահամ քահանայ Շխինեանց, առաջին իսկ տարւում ժողովում է երեխաներին եկեղեցում, որովհետեւ յարմար և անվճար տեղ չկար և սովորեցնում: Սակայն դորան դպրոց անւանել չէր կարելի, որովհետեւ հայր Շխինեանց զուրկ յարմարութիւններից, մասնաւոր կերպով հաւաքում և պարապում էր: Նրան քահանայապետ հրաւիրելիս խոտանում են 15 աշակերտ տալ, մինչև դպրոց ունենալը, որից սպասւելու էր 200 ր. դպրոց ունենալուց յետոյ էլ իբրեւ ուսուցիչ պիտի ստանար տարեկան 300 ր.: Սակայն դպրոցը պաշտօնապէս բաց անել, եկեղեցու շինութեան պարտքերի երեսից և այդ մասին ժո-

ղովարարութիւններով, ժողովրդի վրայ բաւական ծանրացած լինելուց, դեռահասար չէր: Թէև տնտեսական միջոցները թոյլ չէին տալիս ծխ. դպրոց ունենալ, սակայն դպրոցի կարիքով պաշարւած՝ նոցա աչքից չէր փախչում այն հանգամանքը, որ պետական դպրոցներում բաւական թրւով սովորող հայ երեխաները զուրկ են մնում կրօն և մայրենի լեզու սովորելուց: Տեղական դպրոցական վարչութեան մօտ երկար աշխատելուց, երբ ապարդիւն է անցնում, ժողովուրդը դիմում է հոգևոր իշխանութեան միջոցաւ բարձր իշխանութեան: Այս դիմումին պատասխան գրում է Սուքիաս եպիսկոպոս. — «Հոգևոր իշխանութիւնը դիմել է կառավարութեան կրօնի և հայոց լեզուի համար և եթէ կառավարութիւնը դաստուի ռոճիկը չտայ, մնում է ծնողները, կամ հասարակութիւնը վճարէ:»

Այնուհետեւ, 27 յունւարի 1887 թ. Սուքիաս եպիսկոպոսը յայտնում է, որ թոյլատրւած է արքունի դպրոցներում կրօնի և հայոց լեզուի դաստուութիւնը:

Այս գրութեան, երեցփոխանի ուղարկած պատասխանից երևում է, որ կրօնի դաստուութիւնը թոյլատրւում է միայն ուսւ լեզուով: Կառավարութեան այս կարգադրութիւնը ընդունելի չէր կարող լինել հայերի համար, որոնք յոյսները կտրած պետական դպրոցներում կրօն և հայոց լեզու մացնելուց, բոլոր եռանդով կենտրոնանում են ծխ. դպրոց բաց անելու խնդրի վրայ: Նոյն այդ միջոցներին առաջնորդ է նշանակւում Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցը:

ԴՊՐՈՑԻ ԲԱՅՈՒՄԸ

1887 թ. ամառը, թեմը շրջելու ելած նոր առաջնորդ Գէորգ եպ. Սուրէնեանցը, Գէորգեակուց Պետրիգորսկ եկած, լսում է ժողովրդի թախանձանքը և թոյլատրւում է բանալ տղայոց միգասեան դպրոց, որտեղ ուսուցիչ է կարգւում Աբ. քահ. Շխինեանցին: Այդ ժամանակ կար միայն երկու ցածրիկ սենեակներից բաղկացած, հում

աղիւսից շինւած տունը, որի մի սենեակում տեղաւորուած է դպրոցը*)։ Մէկ տարի հ. Շխինեանցը միայն աղաների սովորեցնելով այնքան հետաքրքիր է դարձնում գործը ժողովրդի համար, որ 1888 թ. 3 օգ. հոգաբարձութիւնը դիմում է գործակալին այս գրութեամբ. — « Յանցեալում ամի գերապատիւ առաջնորդն թեմին Աստրախանայ Գէորգ եպիսկոպոս Սուրենեանցը զիջեալ թախանձանաց ժողովրդեան Պետրիգորսկայ թոյլատրեաց բանալ աստ ի Պետրիգորսկ գարական դպրոց մի։ Արդ այժմ մերձ գոլով 1988—89 ամն ուսումնական, հոգաբարձութիւնս ջանայր բանալ գայս թոյլատրեալ դպրոց արական, բայց առաջի աչաց առեալ զկրնակի թիւ աշակերտուհեաց և զիջեալ թախանձանաց ծնողաց և բարերարաց նոցին, որք կամէին, զի ընդ արականին բացցի և զիգական դպրոց և որք ի հակառակ դէպս հրաժարէին օժանդակել պահպանութեան արական դպրոցին, արժան վարկաւ, յՁն ամսոյս կազմել ժողով մի մասնակցութեամբ տեղական քահանայի և նորոգ հրաւիրեալ ուսուցչի, յորում ի քննութիւն առեալ զելս և զմուտս դպրոցին, հնարաւոր համարեաց բանալ ընդ արականիս և զիգական դպրոց և որոշեաց առաջարկել Նորին սրբազնութեան թեմակալ առաջնորդին ի հաստատութիւն։ Ի դպրոցացդ տղայոցն ունի գետեղել ի պարսպի եկեղեցական ի սեպհական տան, իսկ օրիորդացն մերձ եկեղեցւոյս վարձու ի մասնաւոր տան։

Եւ արդ ընդ այս խնարհ խնդրագիր առաջի Ձեր առեալ զցուցակ ելից և մտից ծխական դպրոցացս Պետրիգորսկոյ, հոգաբարձութիւնս խնդրի Ձերդ բարեկրօնութիւնէ դիմել Նորին սրբազնութեան զի բարեհաճեսցի զիջանել ի խնդիր հոգաբարձութեանս և թոյլատրել բանալ ընդ արականին և զիգական դպրոց, որով փրկեսցէ զմանկտին հայ հասարակութեան Պետրիգորսկոյ ի խաւարէն տգիտութեան և յիսպառ մոռացմանէ մայրենի լեզւին։»

1887 թ. աշնանը, հոգևոր իշխանութեան թոյլտուութեամբ դպրոցի համար հոգաբարձական ընտրութիւն է

*) Այդ շէնքը այժմ էլ կայ և այդտեղ է ապրում ժամկոչը։

կայանում, որը առաջնորդի միջոցաւ առաջարկուած է Վեհափառ Հայրապետին հաստատելու։ Դպրոցի բացման և հոգաբարձութեան հաստատութեան կոնդակը գուրս է գալիս 14-ն յունւարի 1888 թ.

Մակար ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ Կարողիկոս ամենայն հայոց, ծայրագոյն պատրիարք Արամազդական ևս խառնեծար Արոտոյ արարատեան առաքելական ձայր եկեղեցոյ արոյ իսրողիկէ Էջմիածնի։

Հարազատ որդւոց հօրս լուսոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի և սիրելեաց մերոց ի Քրիստոս պատուելեաց Բաղդասար Էմանուէլեան Սոջանեանց, Յովհաննիսի Մարտիրոսեան Բաղդասարեանց, Ղազարոսի Ղուկասեան Սվէշնիկեանց, Դաւթի Գաբրիէլեան Քիւրճեանց, Գէորգա Յովհաննիսեան Մանդակեանց և Սաշիկի Կարապետեան Թամանեանց նորընտիր հոգաբարձուաց եկեղեցական-ծխական միդասեան տղայոց ուսումնարանի հայոց Պետրիգորսկ քաղաքի նուիրեմք զհայրապետական մեր ողջոյն և զԱստուածային բազմապատիկ օրհնութիւն։

Յնտրողական թերթէ մատուցելոց մերի գերապատիւ առաջնորդէ թեմին հայոց Աստրախանի տեղեկացաք, զի բարեպաշտօն հայ ազգի ժողովրդականք քաղաքիդ համահաճ յոժարութեամբ ընտրեալ են զբարեպաշտութիւնս Ձեր ի Պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան տղայոց ուսումնարանի հայոց տեղւոյդ վասն որոյ և մեք այսու հայրապետական կոնդակաւ մերով հաստատեմք զՁեզ ի նմին հոգաբարձական պաշտաման, մեծայոյս գոլով զի դուք ի սէր ազգի և հայրենի եկեղեցւոյ մերոյ փոյթ մեծ ունեցիք ամենայն կարգապահութեամբ և հմտութեամբ կանոնաց հաստատելոց ի մէնջ վասն եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց յառաջ վարել զհոգաբարձական Ձեր պաշտօն, ջանալով օրստօրէ յաւելեալ գնիւթական արդիւնս ուսումնարանիդ և յառաջագէմս զարգացուցանել զաշակերտեալսն ի դմին զմանկունս ազգիս, միտ զնելով մանաւանդ կրօնական և

բարոյեական դաստիարակութեանց նոցին, որով և արդարացուցեալ զբարի վարկումն զՂէնջ ընտրողացսն զՁեզ ժողովրդոց արժանի լինիլիք Աստուծային բերապատիկ վարձատրութեանց յաստիս և ի հանդերձելումն:

Եւ մեք աղօթս առնեմք առ Ամենաբարձրեայն Աստուծ, զի զօրացուցէ զհոգեկան և զմարմնական կարողութիւնս Ձեր յասպարիզի ազգօգուտ գործունէութեան Ձերոյ և մնամք վասն յառաջագիմութեան աշակերտելոցն Ձեզ յանձն եղեալ յուսումնարանիդ մանկանց ազգիս սիրեցելոյ:

Ամենաջերմեռանդ աղօթարար՝

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

№ 24 ի 14-ն յունւարի 1888 ամի փրկչական և ի թւականութեան մերում ռ յ լ է, ի սուրբ էջմիածին:

Ժողովուրդը դպրոցի ցացման խնդրով այնքան ոգեւորւած էր, որ նրա խորհրդակցական ամեն մի որոշումն անմիջապէս, զեռ թղթի շանցած ի կատար է ածւում:

Ժողովրդի 1888 թ. օգ. 3-ին արած միջնորդութիւնը յարգւում է, այլևս նախկին տարիների նման դասատուի հոգացողութիւնը չէր, որ պիտի կարգադրէր և մի կերպ յարմարութիւն ստեղծելով սովորեցնէր: Հոգաբարձութիւնը իր հրաւիրած ծխական առաջին ժողովում, սեպ. 12-ին 1888 թ. նստարանների և գրատախտակների կարիքն է առաջ բերում: Ժողովականներից 11 հոգի մի-մի նստարանի ծախք յանձն առնելով՝ հնարաւորութիւն են տալիս հոգաբարձութեան նոյն օրն և ետ պատուէր տալ շինելու աշակերտական 6 նստարան, 2 գրատախտակ և մի պահարան գրքերի համար: Նւիրատուներն էին. Աբրահամ ք. Շխինեանց, Բաղդասար Խոջայեանց, Ղազարոս Շվէշնիկեանց, Գէորգ Մանգալեանց, Դաւիթ Գիւրջեանց, Յովհաննէս Բաբասինեանց, Գէորգ Պոպովեանց, Գէորգ Խաղիկեանց, Վարդան Սէֆերեանց, Կարապետ Շալամեանց, Մանուկ Բշախեանց:

Տղայոց դպրոցը տեղաւորում են եկեղեցու բակում,

սեպհական սան մէջ, իսկ օրիորդացը՝ Խոջայեանի տնւորում մի սենեակ վարձելով:

ՈՒՍՈՒՅԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ 1888—89 թ.

Տղայոց դպրոցի աւագ ուսուցիչ արժ. Աբրահամ ք. Շխինեանց (ձրի), ուսուցիչ Վահան Ասկարեանց 550 ռ. ուճիկով: Օրիորդաց դպրոց—աւագ վարժուհի՝ օր. Հեղինէ Խոջայեանց (ձրի), վարժուհի տիկին Մարիամ Թշանգեանց 180 ռ. ուճիկով: Տղայոց ա) բաժ. 12 երեխայ, օրիորդաց ա) բաժ. 6, բ) բաժ. 7, և գ) բաժ. 7: Միասին 32: Դպրոցի համար առնւել են այս տարում գրքեր 2 նւագ: առաջին անգամ 9 ռ. 20 կոպէկի, երկրորդ անգամ 11 ռ. 25 կոպ.: Դպրոցը պահպանւել է հետեւեալ միջոցներով: ա) Ծխական ընդհանուր ժողովում, համաձայնութեամբ յանձն են առել.—«Պարտաւորեալ տուրք վասն պահպանութեան դպրոցաց», ըստ կարողութեան ստորագրելով տարեկան 50 ռ. մինչև 10 ռ. բնդամենը 625 ռ.: բ) Մասնաւոր նւէրներով, որ մինչև սեպ. 27-ը գոյացել է 651 ռ.: գ) Ուսման վարձ 18 աշակերտ-աշակերտուհուց հաւաքւել է 352 ռ. 50 կոպ. և 25 ռ. դպրոցում մշակական պահպանման մի որդեգրի Իզմիրեանց անւան:

Մինչ 1889 թ. յունւարի 1-ը գոյացել է 1028 50 կ.: Ծախքը 481 ռ. 13 կոպ.: Մնում է 547 ռ. 37 կոպէկ: 1889 թ. յունւարի 1-ից մինչև օգ. 1-ը հաւաքւել է 1771 ռ. 52 կոպ.: Ծախք նոյն ժամանակամիջոցում 460 ռ. 32 կոպ.: Մնում է պատրաստի 1311 ռ. 20 կ. 1889 թ. օգ. 31-ին կօնսիստորեան պահանջում է ցուցադրել, որքան նւիրատուութիւններ են եղել բոլոր ժամանակ, սկսած 1887 թ. ից: Նոյն հրամանը կրկնւում է սեպ. 10-ին նոյն թ. ի «յնթացս 1887, 88, 89 թ. լերին որքան նւէրներ են հաւաքւել ժաղաւինեալ տոմարով: Այս գրութիւններին ինչ պատասխան է խմբագրւել հոգաբարձութեան կողմից, չկայ թղթերի մէջ:

Դպրոցի յատուկ շէնք չունենալը շատերի համար հոգսի առարկայ էր և աւելի շատ հոգաբարձութեան, որի

անդամներէց խաչիկ, (Քրիստաֆօր) Թամանեանը, իր կենդանութեան օրօք այդ պակասը լրացնելու համար 3000 ր. է նւիրում: Ահա կտակը.

«Կտակ կազմեա՞ծ 23-ն օգոստոսի, այս 1888 ամի: Նախիջևանի քաղաքացի խաչատուր Կարապետեան Թամանեանց, առողջ դատողութեամբ և ամուր յիշողութեամբ կտակում եմ յետեւելլը.— Իմ ամբողջ շարժական և անշարժ կարողութիւնս կտակում եմ ի կատարեալ և անվիճելի, անկապտելի սեպհականութիւն իմ օրինաւոր ամուսին Տիրունի յարութիւնեան Թամանեանցին այն պայմանաւ, որ նա իմ մահից յետոյ, իմ գործերիս վերջականապէս դադարեցնելուց, լուծելուց յետոյ տայ երեք հազար ըուրլի արծաթ դրամ յօգուտ Պետտիգորսկի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի:»

Կօնսիստորեան այս կտակի առթիւ, նոյեմբ. 18-ին 1888 թ. գրում է Վլադիկաւկասու շրջանական դատարանի ի 20-ն հոկտեմբերի տարւոյս № 7107, ընդ որում առաքէ ի տնօրինութիւն Կօնսիստորեայիս գքազեա՞ծ ի կտակէ վախճանեալ Նոր-Նախիջևանու սոսկականի խաչատուր Թամանեանց, հաստատելոց ի կատարումն ի Վլադիկաւկասու շրջանական դատարանէ ի 23-ն օգոստ., այսր ամի, վասն կտակեալ ի Թամանեանցէ, ի ծխական հայոց դպրոցն Պետտիգորսկայ դրամոց: Հրամայեցեն հանեալ զվաւերական պատճէն ի քաղաածոյ կտակի վախճանեալ Վլադիկաւկասու սոսկականի խաչատուր Թամանեանց առաքել ընդ հրամանագրութեանց առ երեցփոխանն տեղական եկեղեցւոյ:»

1888 թ. 23-ն նոյեմբերի, այլի տիկին Տիրունի Թամանեանցը մի յայտարարութեամբ դիմելով հոգաբարձութեան կտակեա՞ծ դրամի ստացման համար խնդրում է միջոց տալ, որովհետեւ միանգամից հնարաւորութիւն չունի վճարելու: Ինքը խնդրում է ժամանակ որոշել երկու տարւայ ընթացքում ստանալու այս կերպ.— «Առ 1-ն յունւարի 1889 ամի մի հազար ըուրլի, 2) Առ 1-ն յունւարի 1890 թ. մի հազար ըուրլի, 3) Առ 1-ն յունւարի 1861 ամի մի հազար ըուրլի և այս գումարի ապահովու-



խաչատրեանց Բաղդասար:

թեան համար համաձայն եմ տալ երկու հատ հազարական
բուրխանոց մուրհակ վճարելով բուրխին 6⁰/₁₀ տարեկան:

Ստորագրութիւն:

1889—90 թ. հոգաբարձութիւնը դպրոցական շէնք
կառուցանելու համար ժողովրդի համաձայնութիւնն առ-
նելուց յետոյ, մի շարք պաշտօնական գրութիւններով ա-
ռաջնորդից ստացնում է՝ ըստ յատակագծի շինութեան և
այդ մասին ժողովարարութեան թոյլտուութիւնը նոր ժա-
պաւինեալ մատեանով: Յատուկ հոգացող վեհապետեան
առաջնորդից յետոյ, որի շնորհիւ մասամբ գլուխ եկաւ
եկեղեցու շինութիւնը, դպրոցական գործումն էլ հովանա-
ւոր յատուկ հոգացողն է ներկայանում Սուրէնեանց սրբ-
բազանը, որը ըստ ամենայնի խրախուսում ու հրահան-
գում է և կանոնաւոր ընթացք տալիս նոր սկսած գոր-
ծին:

ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Աւագ ուսուցիչ՝ Ար. քահ. Շխինեանց (ձրի), ուսուց.
Վահան Ասկարեանց 550 ր., օր. Վարդուհի Տէր-Յովակի-
մեանց 180 ր.: Երկու դպրոցը տեղաւորւած են Խոջայեա-
նի տան մէջ տարեկան 150 ր. տան վարձով: Տղայոց
դպրոց ա. բաժ. 7, բ. բաժ. 5: Օրիորդաց՝ ա. բաժ. 5,
բ. բաժ. 5, գ. բաժ. 7. միասին 29: 1889 թ. սեպ. 1-ից
մինչև 1890 թ. սեպ. 1-ը նախորդ տարւայ աղբիւրներով
մուտք եղել է ընդամենը 3485 ր. 29 կ.: Նոյն ժամանա-
կամիջոցին ծախք եղել է 1026 ր. 24 կ.: 1890 թ. 21-ն
ապրիլի, կօնսիստորեայի հրամանի համաձայն կազմւում
է եկեղեցու և դպրոցի կահ-կարասեաց ցուցակ և ուղար-
կւում թեմ. ատեան: Հոգաբարձութիւնը ի նկատի առնե-
լով, որ եկեղեցուց անհրաժեշտ է դպրոցի կարիքների հա-
մար աւելի յատկացնել, ղիմելով առաջնորդին խնդրում
են 100 ր. փոխարէն թոյլաւարւի 300 ր. տալ: Կօնսիստո-
րեան հրամանագրում է երեցփոխանին. — «Եթէ հնարաւո-
րութիւն կայ 100 ր. տեղ 300 ր. տալ եկեղեցուց դպրո-
ցին, ինչպէս խնդրում է հոգաբարձութիւնը:» Հոգաբար-
ձութիւնը դպրոցական տան մակարդակի գծագրող ճար-

տարապետին տալիս է 100 ռ. և նոյն տարու մ սկսում շինութիւնը: 1890 թ. հոկտ. 4-ից հոգաբարձութիւնը ստացել է.—Ս. Անանեանից 25 ռ. յօգուտ դպրոցի շինութեան:

1890—91 թ. ուսուցչական խումբը բաղկանում է հինգ հոգուց, որոնք են.—Աւագ ուսուցիչ՝ Աբ. քահ. Շըխինեանց 100 ռ. ուսուցիչ: Թւար., հայոց լեզուի, Գրիգոր Տէր-Յովհաննէսեան 500 ռ., ուսու. լեզուի, օրիորդ Շուշանիկ Կազբինեան 180 ռ., օր. Ս. Յովակիմեան 180 ռ., ձեռագործի օր. Եկ. Ն. Շխիտմիլոֆա 70 ռ.: Տղայոց դպրոց ա. բաժ. 11, բ. բաժ. 6: Օրիորդաց ա. բաժ. 6, բ. 5, գ. 11. միասին 39: Մուտք եղել է նոյն աղբիւրներով: Ծախք ուսուցչաց ուսուցիչ 1030 ռ., գրքեր և պատուոյքներ գնել են 57 ռ. 80 կ., երկու դպրոցներն էլ գետեղւած են խոշայեանի տանը, որի վարձը վճարւել է տան, ծառայի, վառելափայտի միասին 300 ռ.

Դպրոցական ամբողջ ծախքը եղել է՝ 1117 ռ. 80 կ. Դպրոցի կանոնաւոր ընթացքը խանգարւում է օր. Տէր-Յովակիմեանի պատճառաւ, որը ստիպւած դեկտեմբերի արձակուրդին հեռանում և այլևս հնարաւորութիւն չի ունենում շարունակել դասատուութիւնը:

Օրիորդի հեռանալու առիթը ծնողներին, ուսուցիչ Տէր-Յովհաննէսեանի և ժողովրդեան ունեց պահանջմամբ ժողովների քննութեան նիւթ է դառնում Գէորգեակուց եկած գործակալի ներկայութեամբ: Պարզւում է խնդիրը, որոշումն կայանում՝ յանցաւորին խալառ հեռացնելու Պետերբուրգից: Սակայն աղբիւրի մարդիկ կրքերը մեղմում և խնդիրը ձգձգելով փակում են, որով անմեղ տեղը տուտում է օրիորդը: Հոգաբարձութիւնը տեսնելով, որ տեղացիների վրայ ծանրանալով շինութեան գործը դանդաղում է, 1891 թ. ամառը, սրբազան առաջնորդի բարեհաճ կարգադրութեամբ Աբ. քահ. Շխինեանցին ուղարկւում է Լզլար՝ խաղողի բերքի ժամանակ ժողովաւարութիւն անելու: Հայր Շխինեանցին օգնում են տեղական ազգայինք և հոգեւոր կառավարութեան անդամները, որը և մօտ 600 ռ. է բերում:

1890 թ. 9-ն մեկ. հոգաբարձութիւնը գրում է առաջնորդին.—«Այսու պատիւ ունի ծանուցանել ի գիտութիւն Ձերդ սրբապետութեան, որ երկու տարի ձրի ուսաց լեզու դասաւանդող օր. Հեղինէ խոշայեանը հրաժարւում է և հոգաբարձութիւնս մտադրեալ է ի նոյն պաշտօնի հրաւիրել օր. Շուշանիկ Կազբինեանին 180 ռ. վարձու:»

Ժողովրդի գործիչները ամբողջ հասարակութեան ուղարկութիւնը լարել էին գէպի դպրոցական յատուկ շէնք ունենալը: Ահա 18-ն հոկ. 1890 թ. ծխ. ժողով կազմելով ընտրում են 1) Աբ. քահ. Շխինեանցին, 2) խոշայեանց Բ. Էմ., 3) Գէորգ Խաղիգեանին, 4) Կարապետ Շալամեանին, 5) Յակոբ Եարմ-Աղայեանին: «Ի պաշտօն հոգաբարձութեան նորակառոյց եկեղեցական տան. յանձնեմք նոյն գործ շինութեան:» Այս մակադրութեամբ հոգեւոր իշխանութիւնը շինարար յատուկ յանձնախումբ է կազմում:

Հոգաբարձութեան մի այլ գրութիւն, վիճակային կօնսիստորեայի № 1357 թղթին պատասխան առաջնորդին ուղարկւած յայտարարութիւնից երեւում է, որ «շինութիւն դպրոցական տան սկսեալ է ի 6 աղբիւրի և շարունակի ամենայն աջողութեամբ և յետ երկուց եօթնեկաց ծածկեցի գյարկ շինութեան բոլորովին և մինչև ցտեպտեմբեր ամիսն տեսնն յաջողութեամբ աւարտեցի միմիայն ներքին յարկ շինութեան ի ներքուստ, ուր և գետեղիցին դպրոցն. իսկ շինութիւն վերին յարկին ի պատճառս սղութեան նիւթական միջոցաց յետաձգի մինչ ցյառաջիկայ դարուն:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԿԻՉԻԸ.—1890 թ. գեկ. 7-ին առաջնորդի հոգաբարձութեան գրած առաջադրութիւնից իմանում ենք.—«Բարեկրօն Աբրահամ քահ. Շխինեանց ի յայտարարութեան իւրում, ի 27-ն նոյեմբերի տարւոյս ընդ համարաւ 51, որ յանուն մեր գրէ գհետեալն.—«Որպէսզի մարդացայց տարածե լգմայրենի գրագիտութիւն և ընթերցասիրութիւն ի շրջանի հայ հասարակութեան քաղաքիս ի բազում ժամանակաց հետէ գուն գործեցի վասն

հիմնելոյ աստ ի Պետտիգորսկ քաղաքի գրադարան ի հայերէն գրեանց, սակայն ստիպեալ ինչ յինչ ձախող հանգամանաց ոչ կարէի ի կատար ածել զբարի դիտաւորութիւն իմ, մանաւանդ գտանէին անձինք, որք խոչնդոտք հանդիսանային գործոյն: Ի մեռանելոյ Գրիգորի Աթաբէկեանց կարեւոր վարկայ սիրաշահ բանիւք յորդոր կարգալ ժառանգաց նորին՝ զի գլխատակ հօրն իւրեանց անմահացին գրամական նւիրօք որպէս վասն ուսումնարանի նոյնպէս և գրադարանին, նոցա ունին ետեալ բանիցս նուիրեցին մի հարիւր ըուբլի յօգուտ ուսումնարանի և քսան հինգ ըուբլի վասն գրադարանի, իսկ տիկին Թ. Իգմիրեանց, որ է դուստր հանգուցելոյն նուիրեաց յօգուտ գրադարանի յիսուն ըուբլի:» զՎերոգրելոցն հոգաբարձութեանդ, պատուիրեմք դմին սահմանել գրադարան համաձայն 35 յօդուածոյ կանոնաց եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց:» Այդ 75 ըուբլիով կենտրոնական գրավաճառանոցից գրքեր է բերել տրւում և գրադարանի հիմքը դնում: Նորակառոյց դպրոցում ժողովական միաձայն որոշումով կախում է թաշիկ Թամանեանի պատկերը, որպէս բարերարի:

1890 թ. սեպ. 1-ից 1891 թ. սեպ. 1-ը մուտք եղել է 5089 ռ. 49 կոպ., նոյն ժամանակամիջոցում ծախք եղել է 1406 ռ. 70 կոպ.: Առ ձեռն մնացել է 3682 ռ. 79 կոպ.: 1891—92 թ. ուսուցչական խումբը կազմած է երեք հոգուց: Աւագ ուսուցիչ Աբ. քահ. Շխինեանց կրօն է աւանդել 100 ըուբլի ուժիկով, Գրիգ. Տէր-Յովհաննէսեան հայոց լեզու, թւաբ., 500 ռ., օր. Ս. Տէր-Յովակիմեանց ուսու. լեզու և ձեռագ. 180 ռ.: Դպրոցը միացրւած է և սովորել են տղաներ՝ ա. բաժ. 10, բ. 15: Օրիորդներ՝ ա. 5, բ. 6. միասին 36: Ուսումը սկսել է սեպ. 1-ին, օրհնել է նորակառոյց դպրոցական շէնքը, որի առթիւ առաջնորդը հեռագրում է. — «Շատ եմ ցաւում, որ դպրոցական շէնքի օրհնութեան ներկայ գտնել չեմ կարող, օրհնում եմ սիրածս հօտին, մաղթում հոգաբարձութեան, դասատուներին շարունակել իրանց ջանքը յօգուտ մատաղ սերնդի կրօնական և բարոյական դաս-

տիարակութեան:» Գէորգ եպիսկոպոս:

Մուտք եղել է նոյն աղբիւրներից 4751 ռ. 53 կ. ծախք նոյն ժամանակամիջոցում եղել է 1287 ռ. 15 կ առ ձեռն մնացել է 4464 ռ. 38 կոպ.:

1892 թ. փետր. 27-ին, հայր Շխինեանց դպրոցի գրադարանին նւիրում է 72 կտոր գիրք: Նոյն ամսաթւով գրադարանին նւիրել է գրքեր նաև Սարգիս Դաւթեան Մելքոնեանցը: Դպրոցի համար գնւել են գրքեր և աշակերտական պիտոյքներ 52 ռ. 81 կոպ., գնւած են երկու պահարան 39 ռ. 43 կ.: մարմնամարզութեան համար ձողեր 5 ռ. 50 կ.: 1892 թ. յուլիսի 8-ին, հոգաբարձութիւնը իր № 5 գրութեամբ, յանուն առաջնորդի, մանրամասն նկարագրելով դպրոցական շէնքի թերի մնացած մասերը յայտնում է, որ 700 ռ. մասնաւոր մարդկանց պարտք ունի վերցրած և 1000 ռ. առանձին տոկոսով, յոյս ունենայով նւիրաբերութեանց օգնութեամբ վճարել: Որովհետև տեղիս նւիրաբերութեամբ և եղած եկամուտներով անհնար է վճարել:» Խնդրում է հոգաբարձութիւնը անցեալ տարւայ օրինակին՝ այս տարի ևս թոյլատրել Աբ. քահ. Շխինեանցին ժողովարարութեան ելնել, այժմ Նոր-Նախիջեան և Րօստով: Միևնոյն ժամանակ խնդրում են միջնորդել Բեսարաբիայի թեմի Սրբազան առաջնորդին, թոյլատրել իր թեմում ժողովարարութիւն անելու:

Այս գրութեան սրբազան առաջնորդը անմիջապէս պատասխանում է, որ նա կարող է միմիայն իր թեմի քաղաքներում ժողովարարութիւն թոյլ տալ և առաջարկում է հոգաբարձութեան յիշել քաղաքների անուններ, որ կարգադրութիւն անի: Հոգաբարձութիւնը դեկ. 2-ին գրութիւնով առաջնորդից խնդրում է թոյլատրելու Վլադիկաւկազ, Մոզդոկ, Արմաւիր և Եկատերինօդար քաղաքները գնալ: Գործերից երևում է, որ հ. Շխինեանցը Արմաւիրից բերել է 308 ռ. իսկ 12 օրւայ ընթացքում ճանապարհի և այլ ծախքեր արել 23 ըուբլու չափ:

Հոգաբարձութիւնը մատենով ստացել է 9-ն յունիսի Գէորգ Անանեանից և ամուսնուց 100 ռ., Բաղդասար էմ. Խոջայեանից 200 ռ., Մինաս Աբեանից 15 ռ., Յով-

հաննէս Աբէլեանից 15 ռ., Գէորգ Մանդարեանից 200 ռ., Կիրոսի Վէքիլեանից 50 ռ.:

1892—93 թ. ուսուցչական խումբը բաղկացած է հետևեալ անձերից.—Աւագ ուսուցիչ Աբ. քահ. Շխինեանց աւանդել է կրօն, վայլչագ. 20 դաս 100 ռ.: Գրիգոր Տէր-Յովհաննէսեան, հայոց լեզու, թւաբ., երգեց. 29 դաս 500 ռ., օր. Ս. Տէր-Յովակիմեանց զծագր. և ձեռագործ. 180 ռ., օր. Շ. Կաղբինեանց ուսու. լեզու 13 դաս 240 ռ.: Տղաներ ա. բաժ. 9., բ. 2, գ. 5: Օրիորդներ ա. բաժ. 3, բ. 4, գ. 5. միասին 28: Դպրոցի պահպանութեան միջոցները.—ա) Պարտաւորական տուրք 396 ռ., բ) եկեղեցուց 300 ռ., գ) դպրոցի վերին յարկի բնակարանից 180 ռ., դ) դպրոցի անւան գանձանակից 77 ռ. 26 կ., ե) թոշակ աշակերտութիւնից 145 ռ. ամբողջ մուտքը եղել է 1128 ռ. 26 կ.:

Ծախք նոյն ժամանակամիջոցին 1165 ռ. 65 կ. պահաւում է 37 ռ. 39 կոպէկ:

1893 թ. դեկ. 2-ին, հոգաբարձութիւնը առաջնորդին ուղարկած յայտարարութեան մէջ առաջ է բերում մի շարք հանգամանքներ, օրինակ. որ Մոզգոլի հասարակութիւնը բացի մի քանի մեծատուն վաճառականներից կազմում է երկրագործ և չքաւոր դասից և որ երկաթուղու գծից հեռու լինելով, մեծ ծախք կապահանջւի և միւս կողմիցն էլ շատ անգամներ այդ քաղաքը ժողովարարութեան գնացողները յաջողութիւն չեն գտել. խնդրում է թոյլատրել Մոզգոլի փոխարէն Եկատերինոգոր քաղաքը ուղարկել հ. Շխինեանցին ժողովարարութեան:

Առաջնորդը յարգում է հոգաբարձութեան խնդիրը և հայր Շխինեանց գնում ու հաւաքում է 402 ռ. Այդ ժամանակները Խոջայեանը կօնսիստոր է ուղարկում իր հրաժարականը: 1893 թ. 26-ին յունիսի, կօնսիստորեան չընդունելով Խոջայեանի հրաժարականը, պնդում է լրացնել երեցփոխանութեան եռամեայ շրջանը, որ լրանում է 21-ն փետր. 1894 թ.: Խոջայեան առաջնորդին դիմելով, կրրկնում է իր հրաժարականը հոգաբարձութիւնից, որին առաջնորդը ս. էջմիածնից պատասխանում է.—«Որովհետեւ

երեցփոխանը հոգաբարձութեան անփոփոխ անդամն է, ուրեմն և չեմ կարող արձակել Ձեզ հոգաբարձութեան անդամութիւնից:» համոզում է պաշտօնավարել դոնէ մինչև իր 3-ամեայ շրջանի լրանալը:

Դպրոցական շէնքի ծախքը ծածկելու համար հոգաբարձութիւնը ստացել է.—Կարապետ Շալամեանից 100 ռ. Գէորգ Խաղիզեանից 25 ռ., Դ. Գիւրջեանից 100 ռ., Աբ. քահ. Շխինեանից 25 ռ., Վ. Սէֆերեանից 100 ռ., Յ. Բաբասինեանից 100 ռ., Գ. Պապովեանից 25 ռ., Պ. Գուրջեանից 25 ռ., Վ. Կօստանդեանից 20 ռ., Ղ. Սվէշնիկեանից 300 ռ., Մ. Կօստանայեանից 100 ռ., Դ. Եարմ-Աղայեանից 30 ռ., Յ. Աթամանեանից 50 ռ., Ա. Բերբերեանից 30 ռ., Ք. Ղասարեանից 30 ռ., Յակովբ Ս. 20 ռ., Մ. Սարուխանեանից 20 ռ., Յ. Կալէանիկեանից 25 ռ., Ա. Մելիք-Սարգսեանից 25 ռ., Պ. Բուռնազեանից կամաւոր ստորագրութեամբ հաւաքել է 131 ռ., Ի. Թելինեանից 50 ռ., Եկատերինոգորում հաւաքել է 492 ռ., Ղզլարի վաճառական Իվան Ջուրաբեանից 50 ռ., Դ. Պապովեանից 25 ռ., Կիր. Տիր. Քարասուկեանից 100 ռ., Տ. Պապովեանից 30 ռ., Էդբ. Թորոսեանից 40 ռ., Ն. Ժամհարեանից 50 ռ., Զ. Նազարեկեանից 25 ռ., ՆՆ 25 ռ., Հայրապետից 50 ռ., Կիր. Զ. Պօլոսեանից 50 ռ., Կիր. Մ. Սէֆերեանից 25 ռ.

Ընդամենը 2268 ռուբլի:

1893—94 թ. ուսուցչական խումբ.—Աւագ ուսուցիչ հայր Շխինեանց նոյն դասերով 200 ռ. ուճ., Գրիգոր Փիւրջանեան-Թառումեանից հայոց լեզու, թւաբ. 28 դաս 550 ռ. ուճ., օրիորդ Ս. Տէր-Յովհաննէսեան ուսու. լեզու, զծագր. և ձեռագործ 22 դաս 360 ռ. ուճ.: Խառն դպրոցում—աշակերտ-աշակերտուհի ա. բ. և գ. բաժանմունքներում միասին 22: Դպրոցի պահպանութեան միջոցները. Պարտաւորեալ տուրք 430 ռ., եկեղեցուց 300 ռ., գանձանակից 76 ռ. 25 կ., նւէներ 41 ռ., դպրոցի վերին յարկից 325 ռ., թոշակներից 186 ռ. ընդամենը մուտք 1428 ռ. 25 կ.: Նոյն ժամանակամիջոցում ծախք՝ 1278 ռ. 20 կ.: Մնում է առ ձեռն 150 ռ. 5 կ.: Դասագրքերի և ձեռագործի իրերի տրւած է 27 ռ. 40 կ.:

Հայր Շխինեանց սկզբում հրաժարւում է աւագութիւնից, սակայն և զիջանելով հոգաբարձութեան գիւմումին կրկին ընդունում է: Խոջայանի ժամանակը լրանալով ընտրութիւն է կայանում և վերընտրւում է կրկին ինքը, որի պաշտօնավարութեան ժամանակը լրանալու է, ինչպէս նկատում է կօնսիստորեան 1897 թ. 21-ին փետր.:

1894—95 թ. ուսուցչական խումբ.—Աւագ ուսուցիչ՝ Սիմէօն Մխիթարեանց հայոց լեզու, թւար. 600 ռ., վարժունի Աշակեանց ուս. լեզու, գծագր. ձեռագ. 120 ռ.: Երկու միացեալ դպրոցներում սովորել են տղաներ՝ 14, օրիորդներ՝ 22. միասին 36: Առաջինից փոխել են 8 տղայ, 5 օրիորդ, մնացել է 8-ը, հեռացել 1-ը:

Դպրոցի պահպանութեան միջոցները.—Պարտաւորեալ տուրք 390 ռ., եկեղեցուց 300 ռ., թոշակներից 247 ռ. 50 կոպ., դպրոցի օգտին գանձանակ 81 ռ. 25 կոպ.: Ընդամենը 1018 ռ. 75 կոպէկ, կողմնակի մուտք 150 ռ. 5 կոպ.: Ծախք 1078 ռ. 64 կ.: Մնում է առ ձեռն 90 ռ. 16 կ.: Պարտք վճարւած է գանազան մարդկանց 175 ռ.:

1895—96 թ. ուսուցչական խումբը.—Աւագ ուսուցիչ Սիմէօն Մխիթարեանց 28 դաս 700 ռ. ուճ., օր. եղ. Յովհաննէսեան Աշակեանց ձեռագործ, վերակաց. 120 ռ., էմանուէլ Բ. Խոջայեանց գծագր. ձրի, Արշակ Աւետիսեան երգեց. 4 դաս 80 ռ., Զաքարեա Մելիք-Ամիրզադեանց մարմնամարզ. ձրի. Ստեփան Տէր-Աւետիքեան ուս. լեզու 8 դաս 200 ռ. ուճ.: Տղաներ ա. բաժ. 15, բ. 6: Օրիորդներ ա. բաժ. 8, բ. 4. միասին 33:

Դպրոցի պահպանութեան միջոցները մնացած են ըստ անցեալ տարւայ և եղել է 1500 ռ.: Ծախք ուսուցիչներին 1000 ռ., դպրոցի ծառային 120 ռ., գիւնանական ծախքերի 30 ռ.: Ընդամենը 1400 ռ.:

«Դպրոցի անապահով վիճակը աչքի առաջ ունենալով խորհուրդը որոշեց պահպանել թոշակների նախկին չափը. 18 ռ. ստանալ ունեւորներից, 9 ռ. համեմատաբար սակաւ ունեցողներից, իսկ չբաւորներին բոլորովին ազատել»:

Հոգաբարձական կազմի ժամանակամիջոցը լրացած լինելով ընտրութիւն է կատարւում և ընտրւում են Ար-

րահամ քահ. Շխինեանց, Կարապետ Ստեփանեան Շալամեանց և Բաղդասար Էմ. Խոջայեանց: Յակովբ Եարմ-Աղայանց: Այս ընտրութիւնը հաստատւում է 1895 թ. 2-ն սեպ. Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսի կոնդակով: Նոր հոգաբարձութիւնը սեպ. 1-ին, իր առաջին նիստում պաշտօնները բաժանելով հոգաբարձութեան քարտուղար հրաւիրւում է ուսուցիչ Ստեփան Տէր-Աւետիքեանին և մշտական նիստերին հրաւիրւում է աւագ ուսուցիչը:

1895 թ. օգ. սկզբներին Պետտիգորսկ է այցելում Թեմի կառավարիչ Խորէն եպ. Ատեփանէն, որը օգոստոսի 19-ին ընդհանուր ծխական ժողով է հրաւիրում:

Եկեղեցու բեմը շատ ցածր է լինում, մի աստիճանով միայն: Խորէն եպիսկոպոսի հրահանգով երկու օրից հ. Շխինեանցի ջանքերով պատրաստւում է ըստ հ. եկեղեցու կանոնների:

Ի միջի այլ խնդիրների քննւում է տիկին Ալէքսանդրա Իվանովնա Կիլեմէնտովնայի առաջարկած կտակը: Յարգելի տիկինը առաջարկում է հոգաբարձութեան եկեղեցու գետնի վրայ շինել մի եկամտի տուն, որի համար ինքը տալիս է 3000 ռ. պայմանաւ, որ ցմահ իրան յատկացւի այդ տան սենեակներից 2-ը և տրւի իրան կենսաթոշակ դարձեալ ցմահ տարեկան 200 ռ.: Մեռներուց յետոյ անել թաղման ծախքը համեստ տապանաքարով, որը 500 ռուբլուց չպիտի անցնի: Ժողովի որոշման համաձայն անմիջապէս գրւում է կօնսիստորեային և հրահանգ խնդրւում լիազօրել հոգաբարձութեան տիկնոջ հետ իր կտակի համաձայն նօտարական կարգով պայման կապելու:

Կօնսիստորեան պատասխանում է.—«Անտեղի է նօտարական պայմանաւորութիւնը, որովհետեւ կօնսիստորեան օրէնքով ճանաչւած հաստատութիւն է, որը և վաւերացրել է կտակը և հոգաբարձութեանդ հետ արած պայմանաւորութիւնը: Մնում է հոգաբարձութեանդ առանձին գրութեամբ այս տեղեկացնել տիկնոջը, որը և կլինի նորա համար ապահովութեան գիր»:

Տիկինը ապրում է ըստ ամենայնի գոհ և խոր ծերութեան մէջ մեռնում ու թաղւում հոգաբարձութեան

միջոցներով, վայելուչ կերպով: Այժմ այդ տունը բերում է տարեկան 380 ռ.: Մինչ այդ հոգաբարձութեան անդամները պաշարած են եղել, առանց բացառութեան շինարարութեան ոգով, ուսումնական մասը թողնելով ուսուցչական խմբին: Նորընտիր հոգաբարձութեան արձանագրութիւնները թերթերիս տեսնում ենք, որ ժողովների նիւթ են առնւած դպրոցը թէ անտեսական և թէ ուսումնական մասով: 1895 թ. հոկ. 11-ի նիստում հոգաբարձութիւնը ընտրում է մի յանձնախումբ դպրոցի կարիքները և գրադարանի վիճակը քննութեան առնելու և խորհրդին զեկուցանելու: Ընտրւում են խորհրդի նախագահ հայր Շխինեանցը, ուսուցիչներ Զ. Մելիք-Ամիրզադեանց և Ս. Տէր-Աւետիքեանց: Որոշւում է ամեն տարի յատուկ գումար նշանակել գրադարանի համար: Գրքեր բերել տալիս ի նկատի առնել սաների և ժողովրդեան կարիքը: Հասարակութիւնը թեթեւցած դպրոցական տան շինութեան պարաքից, զբաղւած էր ներքին բարեկարգութեամբ, որ քաղաքային վարչութիւնը իր գրութեամբ երեցփոխանի ուշադրութիւնն է հրաւիրում Բաղարնի փողոցի վրայ գտնուող, ամբողջ երկարութեամբ եկեղեցու պարսպի խախտւած և քանդուող երկիւղալի վիճակի վրայ և պահանջ դնում նորոգել:

Մի քանի ամիս սրբազանի գալուց առաջ, հայ կանանց մէջ միտք էր հղացած «Հայ Կանանց Բարեգործական ընկերութիւն» կազմել: Այդ մասին սկզբնական խորհրդակցութիւններում արդէն սկիզբն է դրւում. սակայն ժամանակի բեժիմը այնքան վստահութիւնից զրկել էր ամենքին, որ սոքա էլ երկիւղ են կրում կանոնադրութիւն ներկայացնելով, ընկերութեան թոյլտուութիւն ստանալ: Խորէն եպիսկոպոսը խրախուսում է աներկիւղ աշխատել և օրինական ճանապարհով ընկերութիւնը անպայման հաստատել տալով գործի անցնել:

Եպիսկոպոսի հեռանալով նորակազմ հայ կանանց ընկերութիւնը մնում է սկզբնական անկերպարան վիճակում:

Կանանց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը

երկիւղ կրելով, որ դեռ չհաստատւած կազմակերպւել է, սիրտ չի անում ղեմել կառավարութեան և ընկերութեան հաստատութիւնը խնդրել: Այդ օրերում խոզարկութիւն կատարելու շուրջ է տարածւում, որի երկիւղից այրում են թղթերը իսկ փողերը Բաղրաա վարդապետի խորհրդով յանձնում են ծխական հոգաբարձութեան, որը քաղաքային վարչութեան պահանջը ի նկատի առնելով որոշում է, փոխանակ 1000 ռ. ծախսելով պարիսպը միայն վերանորոգելու, ծրագրել այդ փողոցի վրայ երկյարկանի տուն շինելու, ներքին յարկը խանութներ: Կանանց տւած մօտ 1800 ռ. հնարաւորութիւն է տալիս անմիջապէս սկսելու շինութիւնը:

1896 թ. յուլիսի 2-ին, հոգաբարձութեան նախագահ հ. Շխինեանց արձակւում է հոգաբարձութեան անդամութիւնից, Յակ. Ստեփ. Աղայեանց հրաւիրւում է հոգաբարձական նիստերին, իսկ Խոջայեան նշանակւում է պաշտօնակատար հոգաբարձութեան նախագահի:

Մեր կոչին պաշտօնավարած անձանց «իրանց շրջանի մասին գրել» մեծ. պ. Ստ. Տէր-Աւետիքեանի գրածը հետաքրքրական է, որը և դնում եմ.

«Կարեւոր եմ համարում մատնանշել Կովկասի պետական դպրոցների շրջանային հոգաբարձու Կիրիլ Պետրովիչ Նանովսկու այցելութիւնը և մանրագնին վերստուգումը այն տարին էր (1896 թ. սկզբներին), երբ հայ դպրոցները փակեցին կառավարութեան կարգադրութեամբ: Նանովսկին գալով Պետաիգորսկ ու իմանալով, որ հայոց ծխ. դպրոցը դեռ չէ փակւած, սաստիկ դժգոհութիւն է յայտնում ու կարգադրում է տեղական ոստիկանութեան միջոցով անյապաղ փակել դպրոցը (Կովկասի բոլոր հայ դպրոցները այդ ժամանակ փակւած էին արդէն): Նորան ուղեկցող վերատեսուչ Գրուշևսկին (թերեքեան շրջանի պետական ժողովրդական դպրոցների ղեկավարը), որը միշտ լաւ կարծիքի էր Պետաիգորսկի հայոց ծխ. դպրոցի մասին, խնդրում է նորան նախ այցելել դպրոցը ու յետոյ ի կատար ածել իր հրամանը: Նանովսկին յարգում է նորա խնդիրն ու այցելում: Երբ եկաւ դպրոց, շատ վատ

էր տրամադրուած ի հարկէ, բայց վերստուգումից յետոյ բոլորովին փոխեց, միանգամայն գոհ մնալով դպրոցի կրթական դաստիարակութեան մասից: Նորա տրամադրութեան վրայ էական ազդեցութիւն գործեց ուսաց լեզւի դաստուգութեան արդիւնքը՝ թէ բերանացի և թէ գրաւոր, վերջինս առաւելապէս: Վերջին բաժանմունքում, ուր ես պարապում էի նորա այցելութեան ժամին, նա բերանացի վերստուգումից ու գրաւորներն ուշի ուշով դիտելուց յետոյ, դարձաւ իր ուղեկիցներին և մեր հոգաբարձուներին ու ասաց հետեւեալ. (նորա ասածը բերում եմ բերանացի. չեմ մոռացած). — «Եթէ բոլոր հայ դպրոցներում այսպէս դասաւանդէր ուսաց լեզուն ու այսպիսի վերաբերմունք լինէր դէպի այդ կարեւորագոյն առարկան, դէպի պետական լեզուն, նրանք երբէք չէին փակել, հաւատացնում եմ Ձեզ, շատ ու շատ հայ դպրոցներում ես նկատել եմ, ոչ միայն ուսաց լեզւի վատ դասաւանդութիւն, այլև վատ արհամարհական վերաբերմունք դէպի նորան, որն աւելի ցաւալի ու դատապարտելի է.»

Այդ չափաք է վերագրել միմիայն իմ դասաւանդութեանը ի հարկէ, այլ և այն պայմաններին, որոնք նպատում էին Պետալիզորսկի հայ երեխաներին ուսաց լեզուն իւրացնել մայրենի լեզւից ոչ պակաս, գուցէ և նրանից լաւ:»

Նանուկակու այցելութեան հետեւանքը այն եղաւ, որ նա ոչ միայն չփակեց հայոց դպրոցը, այլ բացառապէս իր պատասխանատուութեամբ մօտ տարի ու կէս թոյլ տրւեց նորա գոյութիւնը, որն ըստ մինիստրական շրջաբերականի անկարելի բան էր: Պետալիզորսկու հայ հասարակութիւնը իմ օրօք միշտ լաւ վերաբերմունք է ցոյց տրւել դէպի մայրենի դպրոցը ու միջոցներ չի խնայել նորա բարգաւաճման համար: Առանձին անհատներէց աչքի են ընկել (իմ օրօք իրենց սրտացաւ վերաբերմամբ դէպի դպրոցը պպ. Բաղդ. Խոջայեանց, Ղազարոս Սվէշնիկեանց, Կարապետ Շալամեան, Դաւիթ Գիւրջեանց, տղամարդկանցից կան և մի քանի ուրիշները, որոնց տարաբաղդաբար չեմ յիշում. իսկ կանանցից տիկին Մարիամ Շալամեան

նր, օր. Հեղինէ Խոջայեանը և տիրուհի Շիւինեանցը,

Տարին անցել է խաղաղ, հոգաբարձական կազմը և ուսուցչական խմբերը գործել են համերաշխութեամբ, դպրոցը հետաքրքիր է եղել ամենքի համար: 1896—7 Ուսուցչ. խումբը, — Աւագ ուսուցիչ Գ. Սուքիասեանց, դասատուներ՝ օր. Եղ. Յովհաննէսեան Աշակեանց, Ն. Տ. Յովհաննէսեանց, Արշակ Աւետիսեանց: Տղաներ ա. բաժ. 10, բ. 10, գ. 4: Օրիորդներ՝ ա. բաժ. 6, բ. 7. միասին 37:

Դպրոցի պահպանութեան միջոցները նոյնն են, հաշուած 1896 թ. սեպ. 1-ից մինչև յունիս եղել է 1301 ռ. 21 կ.: Նոյն ժամանակամիջոցում ծախք եղել է 1314 ռ. 9 կոպէկ, պարտք մնացել է 12 ռ. 84 կոպ.:

1896 թ. 14 օգ., աւագ ուսուցիչ Միմէօն Մխիթարեանցի տեղ, որը տառապում էր հիւանդութեամբ, աւագ ուսուցիչ է նշանակում Գէորգ Սուքիասեանը: Մխիթարեանին լքած չթողնելու համար առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսը հրահանգում է նշանակել մասնաւոր նըպաստ, իսկ միջոցներ չլինելու դէպքում ուսուցչական խումբը նրա օգտին ներկայացումներ կազմակերպի կամ հանգանակութիւն անի:

Նոր տարւայ առթիւ տօնածառ է պատրաստում, ուր հասարակութիւն չի գնում, որի առթիւ առաջնորդը աւագ ուսուցչից բացատրութիւն է պահանջում, թէ «ինչո՞ւ հասարակութիւնը չի յաճախել, սառնութեան պատճառն ի՞նչ է:» Յայտնի չէ ինչ է պատասխանել աւագ ուսուցչին, գործերում չկայ: Ուսումնական տարին վրդովել է մի հանգամանք, որ չնայելով աւագ ուսուցչի քանի անգամ ազդարարութեան երգեցողութեան ուսուցիչ Արշակ Աւետիսեանը երեխաներին ծածելուց ձեռք չի վերցնում, որի առթիւ առաջնորդը յունւարի վերջին գրում է հոգաբարձութեան. — «Աւագ ուսուցիչ դպրոցացդ ի 18-ն յունւարի տարւոյս, ընդ համարաւ 2, ծանուցանէ մեզ, զի ուսուցիչ երգեցողութեան Արշակ Աւետիսեանց հակառակ խիստ արգելման ապտակէ զաշակերտս:» Այնուհետև նկատում է, որ այդպիսի դէպքերի քննութիւնը պէտք է նախ հոգաբարձութիւնը կատարէ, ուստի յանձնում է քննել և

«ի յայտ ածել, Էրբ և զորս՝ յաշակերտաց տալտակեալ է հակառակ արարելոյ ինքեան ազգարարութեան և եղելոց արգելման հակամանկավարժական վարմանց և ապա յայտ առնել մեզ ի տնօրինութիւն»:

1897 թ. փետ. 7-ին, հոգաբարձութիւնը քննում է և իր եզրակացութեան հետ առաջնորդին յանձնում ի տնօրինութիւն: Նոյն թիւ, մարտի 8-ին ուսուցիչը արձակւում է պաշտօնից: Պետադպրոսի ծխական դպրոցը գեռ խլած չէր և դիրեկցիան հոգաբարձութեան չէր խանդարում դպրոցական և կալածական գործերը վարելիս:

Առաջնորդը ի նկատի առնելով շատ տեղերում պատահած թիւրիմացութիւնները դիրեկցիայի և հոգաբարձութեան միջև 1897 թ. յունիսի մէջ կարգադրում է դպրոցների բացման և ուսուցիչների հրաւիրման կարգադրութիւններ չանել, որպէսզի հակակարգադրութիւնների չհանդիպեն:

Հոգաբարձութիւնը տեսնում է, որ անխուսափելիօրէն ծխական դպրոցը անցնում է իր ձեռքից և իրան շատ քիչ բան է մնում անելու, գործել ձգտող հոսանքի հետ դառնում է կրկին դէպի եկեղեցու թերութիւնների լրացման խնդիրը: Նոյն թիւ, յունիսի 27-ին, երեցփոխան Ղազարոս Սվէշնիկեանց կօնսիստորեային գրում է, որ նոր-հալի շիւկանցի Մարտիրոս Կօստանայեանց և Դովլաթ Ունանեանց ցանկանում են շինել օրինական ճանապարհով, հարտարապետի ցուցմունքով, իրանց ծախքով եկեղեցութեան մնացած մասերը: Կօնսիստորեան անմիջապէս թոյլատրում է: Նոյն թիւի հոկ. 5-ին, չփակւած դպրոցների վերաբերմամբ առաջնորդը պատւիրում է երեցփոխանին ուսուցիչ հրաւիրել և ուսումնարանական վարչութեան գիտութեամբ դպրոց բանալ:

Պէտք է նկատել, որ Պետադպրոսի ծխական դպրոցը մինչև տարւայ վերջը չփակւեց և ուսումնարանական վարչութիւնը բաւականանում է պաշտօնական տեղեկութիւններ ստանալով, մանաւանդ նորանց կարգադրութիւններին չէին կանխում հոգեւոր իշխանութեան միջամտութիւնները: Հոգաբարձութիւնը, որ սկզբում մատնացոյց էր

անում տեղեկութիւններ ստանալ առաջնորդից, յետագայում ըստ ամենայնի կատարում է դիրեկցիայի պահանջները: Ուսուցիչ հրաւիրելու խնդիրն էլ յարգելու համար հոգաբարձութեան կողմից հ. Շխինեանց և Ղ. Սվէշնիկեանց գնում են Վլադիկաւկազ և դիրեկտօրի հետ համաձայնութեան գալիս:

Մնում էր դպրոցի խման ձեւականութիւնը կատարել և այդ անելու դիրեկցիան չէր շտապում: Հոգաբարձութիւնը իր նախագծած շինութիւնները անելու համար անմիջապէս գործի է անցնում և հասարակութեան բացատրելով իր անելիքը, նւէրներ է ստանում: Յօգուտ շինութեան յունիսի 29-ին անյայտից ստանում է 25 ռուբլի, Դանիէլ աղայ Յովհաննէսեանից 30 ռ. և մանր ստացւածներ 70 ռ., ընդամենը 125 ռ.:

1897—98 թ. (դիրեկցիայի շրջան) Ուսուցչական խումբը կազմւում է ուսումնարանական վարչութեան հաճութեամբ և ենթարկւում ժողովրդ. դպրոցների տեսչին: Զաւեդուիւշչի Ադ. Վիրաբեանց ուսու. լեզու, թւաբան. և գծագրութիւն: Աբ. քահ. Շխինեանց կրօն և հայոց լեզու: Դպրոցը ունեցել է երկու բաժանմունք միացած. աշակերտութեան թիւը որոշել զժամար է, եղել է մօտ 20:

Դպրոցի պահպանութեան միջոցները. — Եկեղեցուց 300 ռ., բնակարանների վարձ 600 ռ., թոշակներից 300 ռ., զանձանակադրամ մօտաւ որապէս 80 ռ. ընդամենը 1300 ռուբլի: Ծախք նոյն չափ: Հոգացել է հոգաբարձութիւնը: (Հոգաբարձութիւնից կար Կ. Շալամեանը, որը հրաժարւած էր և մնում էր միայն երեցփոխանը, որպէս հասարակութեան ներկայացուցիչ): Նախահաշիւը առաջարկւած է հոգեւոր իշխանութեան հաստատել: Ծխական հոգաբարձութեան գործերից. — Հոգաբարձութիւնը յօգուտ շինութեան ստացել է Դանիէլ Յովհաննէսեան Ունանեանից 70 ռ., եղել են և ուրիշներ, մանր գումարներ տուրներ 181 ռ. 50 կոպէկ. ընդամենը 251 ռ. 50 կոպ.:

1898—99 թ. տղաներ ա. բաժ. 10, Օրիորդներ ա. բաժ. 4., միասին 14, 1898 թ. հոկտ. 5-ից Վիրաբեանց դիրեկցիայից հաստատուում է զաւեդուիւշչի: Նոյեմբերի

21-ին Աբ. քահ. Շխինեանց հաստատուում է կրօնուսուցչի պաշտօնում: Այդ թվի դասացուցակից երևում է, որ աւանդւել են՝ կրօն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թւաբանութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն և վայելչագրութիւն: Երկու բաժանմունք է, միացած: Նոյեմբ. սկզբներին դիրեկտորը հրահանգում է 8 տարեկանից փոքրերին չնդունել դպրոց: Դպրոց այցելում է ժողովրդական դպրոցների դիրեկտորը: Լսում է ա. բաժ. թւաբ. և ռուսաց լեզու, գոհ է մնում: Խորհուրդ է տալիս թւաբանութիւնից անցնել 1—10 շրջանում: Եղել են 15 աշակերտ-աշակերտուհի: 6 ապրիլի 1899 թ. այցելում է ժողովրդական դպրոցների ինսպեկտոր Չիչինաձէն: Նա նկատողութեանց գրքում գրում է, դպրոցը բացւել է 1898 թ. հոկտ. 2: Բաւական մնալով դասաւանդութիւնից՝ հեռանում է.

Ծխական հոգաբարձութեան գործերից.—1899 թ. յուլիսի 25-ին, եկեղեցու բակում ժողովւել է 125 ր. 77 կոպէկ, յօգուտ շինութիւնների, որ նախագծւել և սկսւած էր: 1899—900 թ.—Ուսուցչական խումբը նոյնն է: Երկսեռ, միացած երկու բաժանմունքներում սովորել են 30 երեխայ: Դպրոցի ծախքը հոգացել է հոգաբարձութիւնը:

Ծխական հոգաբարձական գործերից.—1900 թ. 26 փետր. ծխական ժողովը Բաղարնի փողոցի վրայ գտնուող եկեղեցապատկան խանութների շինութեան և եկամտի հաշիւները քննելով, պարտք վճարելը լիազօրում է երեցփոխան Սվէշնիկեանին—եկամտից: Կօնսիստորիայի մի այլ կարգադրութեան դէմ, որտեղ պատւիրում է եկեղեցական կայքերի գրաւման դէպքում դատարանով յետ առնել: Հոգաբարձութիւնը գրում է, որ ուսումնարանական վարչութիւնը ոչ մի կերպ չի խանգարում եկեղեցական-դպրոցական գոյքերը կառավարելում:

1900 27 ապրիլի կօնսիստորեայից գրւում է երեցփոխանին, որ թէև եկեղեցական կալւածքները կառավարելում ուսումնական վարչութիւնը չի խանգարում, սակայն դպրոցական գոյքերը ցուցակագրելիս վերատեսուչ Չիչինաձէն, որ եկեղեցական տներն ևս առել է ցուցակի մէջ, միայն դատարանով կարելի է եկեղեցուն դար-



Աբրահամ քահ. Շխինեանց:



Նախկին դպրոցը:

ձնել: Ուրեմն և աշխատել այդ մասին մնում է երեցփոխանին:

Երեցփոխանը արդէն առաջուց, 24 մարտի 1899 թ. կօնսիստորեայից ստացել էր լիազօրութիւն ուսումնարանական վարչութեան հետ դատ վարելու: Նոյն թւին, 12 նոյեմբ. կօնսիստորեան երեցփոխանից հարցնում է դատի ինչ վախճան ստանալու մասին: Երեցփոխանի դատավարութիւն սկսելու գրազրութիւնների հետեանք—դիրեկցիան սկսում է հոգաբարձութեան սառն վերաբերել: Դիրեկտորի առաջադրութեան համաձայն զաւեղուիւշչին ի հաստատութեան է առաջարկում Գէորգ Մանդալեանցին պատւաւոր հոգաբարձւի պաշտօնին: Մարտի 27-ին 1900 թ. ինսպեկտորը յայտնում է, որ նահանգապետը հաստատել է այդ ընտրութիւնը: Մանդալեանց զաւեղուիւշչու միջոցաւ իր պարտականութիւնների և իրաւունքների մասին պարզաբանութիւն է խնդրում: Գուցէ եղել է պատասխան հրահանգ, սակայն չկայ գործերում:

Հոգաբարձութեան դերը դպրոցում բոլորովին վերջացած էր պատւաւոր հոգաբարձւի հաստատելովը և ահա 1900 թ. 9 յունիսի, ծխական ժողովին երեսփոխան Ղազարոս Սվէշնիկեան ներկայացնում է մի նոր առաջարկ.— եկեղեցու նոր շինւած խանութների վրայ շինել բնակարան, մանաւանդ, որ արդէն իսկ վարձու վերցնող կայ:

Ժողովը ընդունում է երեցփոխանի առաջարկը, ընտրում շինարար յանձնախումբ հետեալ անձինքներից.— Ղազարոս Սվէշնիկեանց, Դաւիթ Գիւրջեանց, Գէորգ Մանդալեանց, Կարապետ Շալամեանց և Ռուբէն Նազարէթեան Կօստանեանց և լիազօրում գլուխ բերել:

Շինութեան գործը կանոնաւոր առաջ տանելու համար շինարար յանձնախումբը լիազօրում է Սվէշնիկեանին բանկից, կամ ումից կարող է դրամ վերցնի:

Դրւել էր և գմբէթի վերանորոգութեան խնդիրը, որի համար և հաւաքւել է 1900 թւին հոգաբարձութեան ջանքերով—16 յուլիսի, Արշակ Դուկասեանց 25 ռ., անյայտ ոմն 50 ռ., շամախեցի Միքայէլ Աւագեանից խաչի կամ զանգակատան համար 150 ռ., Եկատերինա Շու-

մախերից 25 ռ., եղիսաբ. Պապովեանց 25 ռ., Զաւադ Տէր-Իսրայէլեանց 25 ռ., Եղիշէ Նաբաթեանց 100 ռ., Յարութիւն Աղամեանց 50 ռ., Տիգրան Կրասիլնիկեանց 30 ռ., Աղաջան 25 ռ., անյայտ ոմն 50 ռ., տիկ. Բուդաղեանց 20 ռ., Արսէն Կրասիլնիկեանց 100 ռ., բժիշկ Լ. Քամոյեանց 25 ռ. ընդամենը 700 ռ.:

1900—901 թ. ուսուցչական խումբը նոյնն է: Ունեցել է երկու բաժանմունք, խառն երեխաներ մօտ 30, ճիշտ որոշել հնար չէ: Դպրոցի ծախքը հոգացել է երեցփոխանը:

Հոգաբարձական գործերից.—1901 թ. 21-ին փետր. «Ըստ հրամանի Սինօգի ս. Էջմիածնի, ի 13-ն փետրւարի 1871 ամի փոխարինաբար տւեալ է 45000 ռ. ի գրամաց եկեղեցւոյն Գէորգեակի, ի շինութեան եկեղեցւոյն Պետտիգորսկի ըստ պարտաւորական գրոյ 35 անձանց:» Կօնսիստորեան այս անցքը յիշեցնելուց յետոյ, Գէորգեակի հասարակութեան պահանջի հիման վրայ հրամայում է մաս առ մաս տալ, շեշտելով, մանաւանդ Գէորգեակի եկեղեցին նորոգութեան կարիք ունի:» (Գէորգեակ եկեղեցուց 500 ռ. ստացւել է 1870—71 թ., որի համար պարտաւորագիրը չկայ: Այստեղ յիշւած պարտաւորագիրը պատրաստւել է 1875 թ. և այստեղ անցեալի մասին խօսք չկայ, հաւանական է Տէր-Սարգիսը խաղ է խաղացել Պետտիգորսկեցիների գլխին՝ մնացած 5000 ռ. ստանալու յուսով առնելով «պարաւանդագիր»-ը 35 անձի ստորագրութեամբ և այլևս չի տւել):

Նոյն թւի փետր. 15-ին յանձնախմբի ժողովում տեղի է ունենում նոր շինութեան ծախքի և մուտքի լրիւ հաշւետւութիւնը, որից երևում է. ընդամենը եղել է ծախք 12702 ռ. 22 կ. 4000 ռ. բանկին, 1503 ռ. 63 կ. Լէյզերովիչների երկաթեղէնի խանութին, 2850 ռ. Դ. Գիւրջեանին փայտեղէնի համար, 289 ռ. 70 կ. Շալամեանին, 177 ռ. 50 կ. Գ. Խաղիգեանին, 3881 ռ. 39 կ. Սվէշնիկեանին, որ ծախսել է իր միջոցներից: Յանձնախումբը ընդունելով բոլոր ծախսերը, որոշում է յայտնել ծխական ժողովին և Կօնսիստորին:

Կօնսիստորեան այս հաշիւները ստանալուց յետոյ, 16 մարտի, պահանջում է մի քանի տեղեկութիւններ և հրամայում ճիշտ ցուցակ կազմել եկեղեցական գոյքերի և մինչև ապրիլի 30-ը ուղարկել ատեան:

1901 թ. սեպ. 18-ին կազմած շինարար յանձնախմբի արձանագրութիւնը, որից երևում է, 1900 թ. օգ. 24-ին, ծխական ժողովի որոշումով, բանկից փող են վերցրել Սվէշնիկեանց և Գիւրջեանց 4000 ռ., որից մնում է 3000 ռ. և խնդրում է յանձնախումբը Յ. Լ. Սվէշնիկեանին մօտ-մաս ստանալու պայմանով, վճարել բանկի պարտքն: Ստորագրել են յանձնախմբի անդամներ Գիւրջեանց, Շալամեանց և Թ. Կոստանեանց:

1901 թ. ապրիլի 28, երեցփոխան Սվէշնիկեանը ներկայացնելով եկեղեցու մակարդակը խնդրում է թոյլ տալ շինելու եկեղեցու կաթողիկէն և զանգակատունը, յայտնելով, որ այդ նպատակաւ հանգանակւած է 900 ռ.:

Կօնսիստորեան յետ է ուղարկում եկեղեցու մակարդակի պատճէնը, ժապաւինեալ մատեան և պատւիրում «առ այժմ ձեռնարկել միայն կաթողիկէն եկեղեցւոյն և յետոյ առանց ձեռնամուխ լինելու եկեղեցու հասցիներին, միայն նւիրատւութիւններից ինչ որ կգոյանայ հաւառանց ձեռնամուխ լինելու գրամագլխին, որի տոկոսները պիտի 5000 ի դէմ և 12000 ռ. գրամատան և այլոց անձանց պարտքին վճարւին:»

Կաթողիկէից յետոյ միայն սկսել զանգակատունը:

Կօնսիստորեան 16 սեպ. հրամայում է որոշակի 1500 ռ. եկամտի կէսը 12002 ռ.-ի և կէսը 5000 ռ.-ի դէմ վրձարւի:

1901—902 թ. ուսուցչական խմբին աւելանում է օր. Մազթ. Բշախչեանց—ուս. լեզւի: Դպրոցը եղել է երկսեռ, երկու միացեալ բաժանմունքով, սովորել են մօտ 30 երեխայ: Դպրոցի ծախքը հոգացել է երեցփոխանը եկեղեցու միջոցներից:

Երեցփոխան Ղազ. Սվէշնիկեանը օգ. 22-ին վախճանւում է, երեցփոխանութիւնը մինչև նորի ընտրութիւնը, ժողովրդի համաձայնութեամբ տանում է որդին Յ. Սվէ-

շնիկեանը: 1902 թ. յուն. 26-ին երեցփոխան է ընտրւում Յովսէփ Սվէշնիկեանը:

Յունիսի 4-ին քաղաքային վարչութիւնը երեցփոխանին յիշեցնում է, եկեղեցու պարսպի, Բագարնի փողոցի վրայ գտնուող պատի երկարութեամբ մայթելու և պարսպի շինելու անհրաժեշտութիւնը:

Հանդիպում ենք մի դէպքի, որ հոգաբարձութեան է դիմում գիրեկտորը յայտնելով, «օրիորդ Մագթ. Բչախ-չեանը իր խնդրանաց համաձայն արձակած է պաշտօնից, սրանով առաջարկում եմ հոգաբարձութեան նորա փոխարէն հրաւիրել ուրիշին:» Երեցփոխանը հրաւիրում է օր. Աւետիսեան Հազարապետեանցին:

Ինսպեկտորը յայտնում է, որ Դուրիթ Գիւրջեան հաստատւում է պատւաւոր հոգաբարձու դպրոցի:

Շամախեցի Նաջարեանի ծախքով շինւող զանգակատան շինութիւնը աւարտւում է, որի հիւսիսային պատին կարգում ենք հետեւեալ արձանագրութիւնը. — «Պետադորսկ քաղաքի ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցոյ զանգակատունը կառուցեցաւ արդեամբ բազում քանակ շամախեցոյ Միքայելի Աւագեան Նաջարեանցի ի յիշատակ իւր 1901 թ. 23 օգ.»: Ամբողջ ծախքը եղել է 1780 ռ. և խաչին 325 ռուբլի:

1902—903 թ. ուսուցչական խումբը նոյնն է, հեռացած օր. Բչախչեանի տեղ զալիս է օր. Վ. Աւետիսեան Հազարապետեանց: Խառն և միացեալ երկու բաժանմունքներում եղել են տղ. 15, օր. 25, միասին 40:

Դպրոցի ծախքը հոգացել է երեցփոխանը և եղել է մօտ 1200 ռ.: 1903 թ. օգ. 21-ին, Վեհափառ Կաթողիկոսը շրջաբերական կոնգակով հրամայում է հոգևորականսը շրջաբերական կոնգակով հրամայում է հոգևորականներին և երեցփոխաններին կայքերի գրաւման, յանձնողական և ստացողական գործողութիւններում չմասնակցել:

Նոյն թւի նոյեմբերի 3-ին կօնսիստորեան հրամայում է ի նկատի առնելով տեղական կարիքները, նախ վճարել մասնաւոր պարտքերը և ապա Գէորգեակինը:

18 յունիսի 1903 թ. գիրեկցիան աշակերտական խնայողական զանձարկղի մասին տեղեկութիւն է խնդրում.

Աւագ ուսուցիչը պատասխանում է, որ «աշակերտական զանձարկղ չկայ և չի եղել»: Նոյն թւի յունւարի 19-ին բացւում է աշակերտական խնայողական զանձարկղը աւագ ուսուցչի ղեկավարութեամբ:

1903—904 թ. ուսուցչական խումբը նոյնն է: Դրպրոցը խառն և բաղկացած երկու բաժանմունքներում սովորել են տղ. 13, օր. 25, միասին 38: Դիրեկցիայի շրջանում նկատելի է մի երևոյթ, որ առաջին բաժանմունքում երեխաներին պահել են տարիներով 2, 3:

Ուսումնական տարւայ ընդ. յառաջագիւծութիւնը կայ դասարանական գրքում և դնում եմ. — ա. բաժ. եղել է տարւայ սկզբում 21 երեխայ. 8 տղայ և 13 աղջիկ. տարւայ վերջում մնացել են 18 երեխայ. տղ. 7, աղջ. 11, որոնցից փոխադրւել են 5-ը, վերաբնակել են 9-ը, մնում են 3-ը. անորոշ է մնացել 1-ը: 1903 թւի նոյեմբերի ըսկզբներում դաւեդուիւշչին ձանձրացած զանձարկղի գոյութեամբ, գրում է գիրեկտորին, որ «աշակերտական խնայողական զանձարկղը ընդունելութիւն չի գտնում սաների մէջ, ուստի անհրաժեշտ է այդպիսին վերացնել:» Դիրեկտորը № 2876, նոյեմբ. 29-ին գրութիւնով պատասխանում և դիտողութիւն է անում, որ «աւելի ճիշտն աւագ ուսուցիչը չի խրախուսում գործը, քան զանձարկղը ընդունելութիւն չի գտնում:» Եւ հրահանգում է հետեւել և խրախուսել: Խնայողական զանձարկղը մնում է անգործ:

Հայր Շխինեանցը իր ձեռներեցութեամբ բաց է անում հանգանակութիւն աշակերտութեան և հայերի մէջ, որը ի դէպս պատերազմի պիտի յանձնէր կարմիր խաչի ընկերութեան: Առանձին գրութեամբ այդ մասին զաւեդուիւշչին յայտնում է գիրեկտորին ի դիտողութիւն.

1904 թ. յունւարից երեցփոխան է ընտրւում Կ. Շալամեանցը:

1904—905 թ. ուսուցչ. խումբը. — աւագ ուսուցիչ Ա. Վիրաբեանց, կրօնուսոյց հ. Շխինեանց: Դպրոցում տղ. 16, օր. 18, միասին 34: Դպրոցի ծախքը եղել է եկեղեցուց և հոգացել է երեցփոխանի միջոցաւ:

Օգտւում եմ գործերում մնացած մի ստատիստի-

կայից, որ և դնում եմ.—«Հայր Շխինեանց ունեցել է 150 դաս, որից սլարապել է 109 դաս, բաց է թողել 41 դաս:

Դեկ. 7-ի գրութիւնից, ուղղւած գիրեկտօրին տեսնում ենք, որ նորա հրահանգի համաձայն պատերազմի համար հանգանակութիւն է բաց արել զուեղուիւշին և գոյացել է 3 ր. 50 կ.

Դպրոցը արձակուում է մայիսի 17-ին, ըստ որոշման մանկավարժական խորհրդի, որը և հաստատուում է դիրեկցիայից: Յունիսին կարապետ Շալամեանի տեղ ընտրւում է երեցիոխան Դաւիթ Գ. Գիւրջեանց:

1905 թւի աշնանը, հոգևոր իշխանութեան հրահանգով կայանում է հոգաբարձական ընտրութիւն և ընտրւում են պ.պ. Մանուկ Սահակեան Բշախչեանց, Դաւիթ Գ. Գիւրջեանց, Ք. Զաքարեան Բաշինջաղեանց, Գ. Սուքիասեանց և Յ. Ատամանեանց: Հոգաբարձական կազմը հաստատուում է առաջնորդից: Ծխական հոգաբարձութեան նոր շրջանը 1905—906 թ. ուսուցչական խումբը սկզբում կազմւում է գիրեկցիայի հաճութեամբ.—Աւագ ուսուցիչ Կ. Ամատունի հայոց լեզւի և թւար. տիկ. Մ. Ամատունի ուսուց լեզւի 1050 ր. (ամուսիններին): Աբ. ք. Շխինեանց կրօն 200 ր., Դպրոցի երկու բաժանմունքներում սովորել են 47 երեխայ. 19 տղ. 28 աղջ.: 1905 թւին հոգաբարձութիւնը դպրոցի ղեկը առնելով ձեռքը առաջին հոգան է դարձնում իր համար ուսուցչական խումբը լրացնել, որի համար հրաւիրում է օր. Դօնիկեանին, Պոպովեանին և Տէրտէրեանին (25 նոյեմբերի):

Հոգաբարձութիւնը բաժանելով պաշտօնները և դպրոցի ու հասարակութեան կարիքները ի նկատի առնելով, ընտրում է իր միջից շինարար յանձնախումբ, որին և յանձնում է մասնաւոր գումարներով դպրոցին կից արեւելեան կողմից բեմ աւելացնել հայկական ներկայացումների համար. որի կարիքը զգալի էր, մասնաւոր, որ հայերէն ներկայացումների համար օտար բեմերը մեծ ծախքով անմատչելի են:

Հոգաբարձութեան եռանդուն գործունէութիւնը մի-

դասեան դպրոցի համար 5 հոգուց բաղկացած ուսուցչական խումբը հասարակութեան ուշադրութիւնը գրաւեցին զէպի դպրոցը, որի ապացոյցն է սոյն թւի դեկ. 3-ին խառն նիստում ուսուցչ. խմբի առաջարկը բանալ գ. բաժ. «որովհետեւ աշակերտութեան թիւը 40-ից բարձրացել է 80-ի և խիստ նեղւածք է»:

Նոյն ամսի 13-ի նիստում հոգաբարձութիւնը որոշում է գանձանակը վերացնել, երեցիոխանին յանձնարարելով միայն դպրոցի օգտին գանձանակ հաւաքել, իսկ քահանային գանձանակի փոխարէն վարձատրելու խնդիրը դնել ծխական ընդհանուր ժողովում: Այս խնդիրը յետագայում ևս որքան և ժողովական որոշումներից անցել, սակայն թղթերը ոչ հոգևոր իշխանութեան են ուղարկել և ոչ որոշումները իրականացրել: Դեկ. 27-ի նիստում դպրոցի անտեսական խնդիրներով զբաղելիս որոշում է.—հեռազրել սրբազան առաջնորդին, կալածիկների յետ ստանալու խնդիրը շտապեցնելու:

Դպրոցի պահպանութեան միջոցները.—Հոգաբարձութիւնը գիմում է նախկին աղբիւրներին: Ընդհանուր մուտքը լինում է 4900 ր., ծախք նոյն ժամանակամիջոցում եղել է 3730 ր.: Առ ձեռն ֆնում է 1170 ր.: Նկատելի է, որ այդ տարում մանկավարժական խորհուրդը, որ բաղկացած է եղել 5 հոգուց և թարմ ուժերից, որպէս մի խորհրդակցող կազմակերպւած մարմին գոյութիւն չի ունեցել: Աւագ ուսուցիչը որպէս ղեկավար, գործը տարել է իր հայեցողութեամբ, ըստ հայեցողութեան կարգադրութիւններ անելով: Առաջին կիսամեակը անցնում է մի կերպ, իսկ երկրորդ կիսամեակի սկզբներում, իրանց պաշտօնը աւելի գիտակցող հոգաբարձութեան համար իրերի այս վիճակը մտածողութեան նիւթ է դառնում:

Աչքի են ընկնում հոգաբարձութեան ժողովների զբաղմունքներում ուսուցչական խմբին վերաբերող խորհրդակցութիւնները եւ որոշումները:

Ուսուցչական խումբը բացատրութեան է հրաւիրւում և յանդիմանւած ի դէմս աւագ ուսուցչի, մի քանի հաւամանկավարժական կարգադրութեանց համար, յորդոր-

ւում և հրահանգւում է. — ա) Անպայման ունենալ մանկավարժական նիստեր, որպիսին տեղի չէ ունենում երբէք, բ) Սահմանել փորձնական դասեր, որ առիթ տայ խմբի անդամներին մանկավարժական խնդիրների շուրջը մտքերի փոխանակութիւն ունենալ, գ) Վերացնել երեխաներին ճաշից յետոյ դպրոց բերել աշխատեցնելը, ի նկատի առնելով, այդ չափազանց ատելութիւն առաջ կբերէ նոցա մատաղ հոգու մէջ և միւս կողմից քաղաքի զանազան հեռաւոր մասերից երեխաներին ահագին ճանապարհ դնալ դալը և մթնով ցրւիլը, միայն ի փասս գործի է լինում:

Սրանից յետոյ 1906 թ. փետր. 20-ին կայացած մանկավարժական ժողովի արձանագրութիւնից երևում է, — «Ժողովը որոշեց հիմնել փորձնական դասեր և առաջին փորձնական դասը տալ ուրբաթ օրը, հայոց լեզուից բ. կամ գ. բաժանմունքում: Այդ դասը յանձն առաւ աւանդել աւ. ուս. պ. Ամասունին, որոշեցաւ փորձնական դասին հրաւիրել հոգաբարձու պ. Գ. Սուքիասեանցին:

Նոյն թւի մարտի 6-ի ժողովում որոշւում է. — «Մարտի 18-ին, շաբաթ օրը, սարգել մանկական երեկոյթ» և կազմւած է ծրագիրը:

Հոգաբարձութիւնը 1906 թ. յունւարի 20-ի նիստում որոշում և առաջարկում է. — 1) Ք. Բաշինջաղեանին՝ եկեղեցական գոյքերի և ել և մտից հաշիւները պահպանել: 2) Սուքիասեանին՝ եկեղեցական ինվենտարի մատեանը պահել:

Նոյն թւի, փետր. 25-ին, հոգաբարձութեան ժողովում քննւում է Յ. Դ. Սվէշնիկեանի գրութիւնը, իրանց պարտքերի վճարման մասին և դպրոցում գոյութիւն ունեցող ծեծի խնդիրը:

Պ. Սվէշնիկեան երեցփոխանի գրած իր թղթով յիշեցնելով, որ եկեղեցուց իրան հասանելիք 6500 ռ. մինչև այդ ժամանակ չի ստացել. յիշեցնում է, որ 1905 թւի օգ. 1-ին, կայսերական հրամանի համաձայն կալւածքները եկամուտներով յետ են տրւում, «ուստի ես դիմում եմ Ձեզ և եկեղ. հոգաբարձութեան, որ ստանալով վերոյիշեալ գումարը առանց յետաձգելիւ վճարել ինձ, վե-

րոյիշեալ գումարը համաձայն ժողովի արձանագրութեանը ի 25-փետ. 1901 թ. և Աստրախանի կօնսիստորիայի ի 3-ն նոյեմբերի 1903 թ. № 2240 նոյնպէս խնդրում եմ, յայտնել ինձ, Ձեր և հոգաբարձութեան կարգադրութիւնը այդ իմ յայտարարութեան մասին: 1905 թ. 9 նոյեմբ.:

Որոշւում է Շվէշնիկեանին և Գիւրջեանին պարտքերի զեղջ տալ տարեկան 1200 ռ. միայն, իսկ կալւածքների եկամուտների վերադարձնելուց յետոյ 300 ռ. վերցնել վերանորոգութիւնների համար, մնացածը տալ նոցա դարձեալ պարտքերի դէմ:

Ուսուցչութիւնը կանչւում է ըացատրութիւն տալու, որի ժամանակ չի հերքւում մեղադրանքը: Այնուհետև հոգաբարձութիւնը նկատում է աւագ ուսուցիչ Ամատունուն, որ «չնայելով հինգ հոգուց է բաղկացած ուսուցչական խումբը, այնուամենայնիւ ցաւօք սրտի ասում ենք, որ մանկավարժական խորհրդի նիստեր չեն տեղի ունենում. առաջարկում ենք հոգաբարձութեան կողմից ուսուցչական խմբին, անպայման նիստեր ունենալ և առաջ տանել փորձնական դասերի հարցը:»

Ապրիլի 12-ին հոգաբարձական նիստում կարգացւում է պ. Յ. Դ. Սվէշնիկեանի գրութիւնը որ է. — «Պետական դպրոցներում, ուր բաւական թւով հայ երեխաներ են սովորում, անհրաժեշտ է հոգ տանել հայոց լեզուի աւանդելու մասին:» Հոգաբարձութիւնը այս առթիւ ապրիլի 30-ին ծնողական ժողով է հրաւիրում, ուր պարտաւորութիւն է դրւում հոգաբարձութեան վրայ, ամեն ջանք գործ դնել և հայոց լեզու ու կրօն աւանդելու արտօնութիւն ձեռք բերել պետական դպրոցների հայ երեխաների համար: Յունիսի 30-ին հոգաբարձութիւնը որոշում է կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձի խնդիրք տալ պետական դպրոցներում կրօն և հայոց լեզու աւանդելու համար և այդ յանձնում պ. Յ. Սվէշնիկեանին հոգ տանել, պատրաստել: Թոյլատրւում է սովորեցնել. սակայն ոչ պարտադիր: Ուս. տար. վերջը հեռանում է հոգաբարձութեան անդամ Յ. Ատամանեանցը, նորա փոխարէն, 31 յուլիսի նիստին հրաւիրւում է անձնափոխանորդ Սվէշնիկեան:

որի դէմ բողոքում է միւս անձնափոխանորդ Գ. Տէր-Յովհաննէսեանը: Իսկ հոգաբարձութեան այդ կերպ վարւելու առիթը այս է լինում. կօնսիստորից եկած հոգաբարձութեան հաստատութեան գրի մէջ անձնափոխանորդների անունը գրել է նախ Սվէշնիկեան և յետոյ Տէր-Յովհաննէսեան, առանց ստացւած ձայների քանակը զիմացը գրելու: Հոգաբարձութիւնը պ. Տէր-Յովհաննէսեանի բողոքը ստանալուն պէս գրում է կօնսիստորեայ, պարզում թիւրիմացութիւնը: Այնուհետև նիստերին հրաւիրում է պ. Տէր-Յովհաննէսեան, որը Կիսլովօգսկում ապրելով բաւական դժւարութիւններով էր կարողանում նիստերին լինել, շատ անգամ նոյնիսկ նիստի հրաւեր չէր ստանում:

Հետաքրքրական է ուսուցչական խմբի պայմանաւորութեան վերանորոգելը:

31-ին յուլիսի 1906 թ. հոգաբարձութիւնը հրաւիրելով ուսուցչական խմբին, ցանկութիւն է յայտնում լսել նոցա վերջին խօսքը՝ մնալ չմնալու մասին:

Աւագ ուսուցիչը առաջարկում է իրանց (իր և ամուսնու) ոռճիկը աւելացնել, քանակը ինքը որոշելով: Հոգաբարձութիւնը յայտնում է իր վերջնական պայմանը և նշանակում վերջին խօսքը ասել հոգաբարձութեան ոչ ուշ, քան օգ. 10-ը:

Միւսները համաձայնում են և հեռանում նիստից, իսկ պ. Ամատունին յայտնում է, որ ինքը մինչև օգ. 25-ը եթէ յարմարագոյն տեղ գտաւ, լաւ, իսկ եթէ ոչ կմնայ. ուրեմն մինչև 25-ը չի կարող որոշ բան ասել: Հոգաբարձութիւնը պնդում է. «որ օգ. 10-ից ուշ անհնար կլինի ուսուցիչ հրաւիրել և ժամանակին դասերը կանոնաւոր սկսել:» Ամատունին դրան ի պատասխան պնդում է նոյնը և առարկում. — «Ինչ է կորցնում հոգաբարձութիւնը, եթէ դասերը սեպ. 25-ից սկսեն:»

Բոլոր դասատուները գրաւոր իրանց համաձայնութիւնը տւած լինելով, օգ. 19-ի հոգաբարձական նիստում կրկին պաշտօններում հրաւիրւում են Աբ. ք. Շխինեանց, օր. Դօննիկեան, Տէրտէրեանց, և Պապովեանց. իսկ Ամատունի ամուսինները արձակւում են, մինչ այդ նիստի

օրը դեռ գրած չէին իրանց վերջին խօսքը:

Հոգաբարձութիւնը զանազան հանգամանքների շնորհիւ և զլիաւորապէս Ամատունիների ընտանեկան վիճակը աչքի առաջ բերելով, փոխում է նախկին որոշումը և նւագեցրած ոռճիկով կրկին պահում Ամատունի ամուսիններին:

1906—907 թ. ուսուցչական խումբը և դասերի բաշխումը. — Աւագ ուսուցիչ Կ. Ամատունի՝ հայոց լեզու 17 դաս, թւար. բ. բաժ. 4 դաս, ընդամենը 21 դաս: Տիկին Ամատունի, ուսաց լեզու 15 դաս: Օր. Դօննիկեանց, թւար. բ. բաժ. 5 դաս, ձեռագործ 4 դաս, գծագ. 3 դաս. ընդամենը 12 դաս: Աբ. ք. Շխինեանց, կրօն 6 դաս, հ. պատմութիւն 2 դաս. ընդամենը 8 դաս: Պապովեանց երգեց. 3, բնագիտ. 3, աշխարհագր. 2, թւար. 5 (բ. բժ.) ընդամենը 13 դաս: Դպրոցում աղ. 41, օր. 34. միասին 75: Մայիսի 17-ին մանկավարժական ժողովը որոշում է 1) ա. բաժ. արձակել 18-ին, որ հնարաւորութիւն ունենան բ. բաժանմունքում թւարանութիւն պարապել, «որովհետև պ. Պապովեանի ժամանակաւոր հեռացելով երկու ամիս է թւարանութեան դասեր չեն լինում այդ բաժանմունքում:» 2) Գննութիւն լինի միայն գ. բաժ. մինչև 28 մայիսի: 3) Պարապմունքները դադարեցնել 25-ից մայիսի:

Դպրոցի պահպանութեան միջոցները. — Նկեղեցուց 1436 ռ. 47 կ., բնակարաններից 2442 ռ., թոշակներից 148 ռ., տիկին Ամիրզադեանից 150 ռ., ներկայացումներից 656 ռ. 67 կ. ընդամենը 4958 ռ. 20 կ.: Ծախք նոյն ժամանակամիջոցում. — Ուսուցիչներին և դպրոցի ծառային ոռճիկ 1696 ռ. 65 կ. և ծխական հոգաբարձութեան միւս ծախքերի հետ միասին 4958 ռ. 20 կ.: Հայր Աբ. Շխինեանցի տան վարձը 200 ռ. և ուսուցչութեան վարձը 200 ռ. մացրւած չեն ոչ մուսքում և ոչ ելքում:

Հոգաբարձութեան անդամներից մի քանիսը, ուսուցիչներից ոմանց հետ խորհրդակցելով, Բագւից և Անգր-կովկասի զանազան կողմերից եկած արհեստաւոր բանւորների համար աշխատում են կիրակնօրեայ դպրոց բանալ:

Հոգաբարձութիւնը կարևոր դիմումներն անում է և փետ. 23-ին 1907 թ. թերեքեան շրջանի ժողովրդական դպրոցների տեսչից ստանում է պատասխան. — «Կիրակնօրեայ դպրոցը կարող է բացել ժողովրդական լուստօրութեան մինիստրութեան ենթակայ, 1860 թ. 30 դեկ. կանոններով:

Ապրիլի 10-ին աւագ ուսուցիչ Ամատունին ժողովի է հրաւիրում ուսուցչական խմբին և կողմնակի ձեռնահաս անձանց, ընդամենը 7 հոգու: Հաւաքւում են 5 հոգի: Ժողովում մշակւում է անցնելիք առարկաների մօտաւոր ծրագիրը և կատարւում դասերի բաշխումը:

Յանձն են առնում. — Տիկին Բաշինջաղեանց ուսաց լեզու, տիկին Ամատունի ուսաց լեզու և թւաբանութիւն, օր. Դօննիկեան հայոց լեզու և թւաբ., Շարաբանդեան հարերէն և թւաբ. և Կար. Ամատունի հարերէն և թւաբ.:

11-ին ապրիլի կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչներն ու հոգաբարձուները միասին ժողով կազմելով որոշում են 15-ից սկսել պարապմունքները, որը տեւելու է մինչև 4-ը յունիսի: Պարապմունքները պէտք է տեղի ունենային կիւրակի օրերը ժամի 12—2-ը, իսկ լի օրերին 6—7-ը:

Թէ նախորդ և թէ այդ տարւում ուսուցչական խումբը չի գործում որպէս մի մարմին, խորհրդակցութիւն, ժողովներ չկան, մէկ երկու եղանակներն էլ հոգաբարձութեան հարկադրական պահանջների հետևանք էին լինում:

Ուսուցչական խումբը անհամբաշխ, միմիանց դէմ լարւած, դրսի հովերից ազդւած՝ առիթ են որոնում միմեանց օձիքից բռնելու և այդ չի ուշանում:

Մարտի 9-ին, գ. բաժանմունքի մի աշակերտուհու վերջին դասին, աղօթքի ժամանակ ծիծաղելուն հետևանք և ուս. պ. Պապովեանի միջև առաջ եկած միջնադէպն էր:

Դէպքը փոխանակ ներքին, ուսուցչական, խառն ուսուցչական և հոգաբարձական ժողովներում քննելու և չլուծւելու դէպքում, քննութիւնը անմիջապէս իշխանաւորին, առաջնորդին ուղարկելու, որի վճիռը կվերջացնէր ամեն տարաձայնութիւն, նա, աւագ ուսուցիչը նոյն օրը անմիջապէս դրսի իր շրջանում խօսելով, ասէ-կօսէ-ների ահագին նիւթ է տալիս:

Տեսնելով, որ իր արածը մի սխալ է եղել, որ ծնողների մի խումբ 15 անձից արդէն ստորագրութիւն են կազմում հոգաբարձութեան յանձնելու, որով ընդհանուր ծխ. ժողով են պահանջում դէպքը քննելու, ինքը մարտի 11-ին իր գրութեամբ դիմելով հոգաբարձութեան խնդրում է «խիստ քննութիւն նշանակել»:

Հոգաբարձութիւնը յանձնում է իր անդամներից պ. պ. Սուքիասեանին, Բաշինջաղեանին և Բչախչեանին, որոնք հոգաբարձական փետ. 14-ի նիստում իրանց կատարած քննութեան մասին մանրամասն բացատրութիւն են տալիս:

Այդ բացատրութիւնից յետոյ, բացի տիկին Ամատունուց միաձայն զալիս են այն եզրակացութեան, որ վիւրաւորանքը թիւրիմացութեան արդիւնք է և դատապարտում են աւագ ուսուցչին, որ խնդիրը ընկեր ուսուցիչների ժողովում քննել տալու փոխարէն, մասնաւոր մարդկանց է խօսել և հոգաբարձութեան դիմել:

Ծնողների կողմից պատրաստւած յայտարարութիւնը մարտի 15-ին յանձնւում է հոգաբարձութեան, որի պահանջից ստիպւած, նոյն ամսի 20-ին ընդհանուր ծխական ժողով է հրաւիրւում: Ժողովին ներկայ են լինում 27 անձն, որոնք դէպքը քննելու համար մի յանձնախումբ են ընտրում 5 հոգուց բաղկացած՝ մի ուսուցչից, մի հոգաբարձից և երեք ծնողներից: Ընտրւածներին յանձնւում է քննել և զեկուցանել ընդհանուր ծխ. ժողովին: Յանձնախումբը մարտի 22, 23, 24, 25 և 27-ի իր նիստերում կատարած քննութեան մասին զեկուցում տալու համար, հոգաբարձութեան դիմելով, խնդրում է ծխ. ժողով հրաւիրել: Ժողովը հրաւիրւում է ապրիլի 15-ին այս օրակարգով. — «Համաձայն հոգաբարձութեան հրաւերի լըսել ուսուցիչ Ա. Ի. Պապովեանի և աշակերտուհու մէջ տեղի ունեցած միջնադէպի մասին քննիչ մասնաժողովի կատարած քննութիւնների արդիւնքը:» Ժողովին ներկայ են լինում և մասնակցում 111 իրաւասու ծխականներ: Այս բազմամարդ ժողովը աղմուկով, կռով լուսացնում է գիշերը դպրոցում: Առաւօտեան ժամը 6-ին առանց եզրակացութեան գալու, անորոշութեան մէջ թո-

դած խնդիրը, ցրում են իրանց գործին, ուղղակի կրպուկները բաց անելու: Մասնաժողովը իր 5 նիստերում լրեսել էր երկու կողմերին, արձանագրել բոլորի ցուցմունքները: Քննութիւնը վերջացած համարելու համար, որոշում է պ. Պապովեանի մարտի 13-ի խառն ժողովին ներկայացրած յայտարարութիւնը քննութեան կցել, որպէս վերջին խօսք և ամբողջ գործը զեկուցման հետ ներկայացնել ծխական ընդհանուր ժողովին, վերջնական վճիռ տալու: Յանձնաժողովի կատարած այդ քննական գործին կցւած է նաև ծխատէր, գործակալ և ծխական դպրոցում ուսուցիչ արժ. Աբ. ք. Շխինեանցի կանոնական բացատրութեան մի գրութիւն, որ է.—«Համաձայն հայոց եկեղեցական ծխական տարրական դպրոցների ժամանակաւոր կանոնների, որոնք մշակւած են ուսուցչական համագումարի մէջ, ուսումնական և տնտեսական բնաւորութիւն մարի մէջ, ուսումնական և տնտեսական հարցերի առթիւ հոգաբարձական և մանկավարժական խորհրդի միջև ծագած թիւրիմացութիւնները, դպրոցի պաշտօնեաների դէմ յարուցած բողոքները, տեսչի և ուսուցչի պաշտօնից արձակելը և սրանց նման խնդիրները, սոսկ և միմիայն պատկանում են հոգաբարձուներից և ուսուցչիցներից կազմւած խառն ժողովի իրաւասութեան: Հետևապէս այդ խնդրի քննութիւնը ընդհանուր ծխական ժողովի առարկայ դարձնել և նորանից վճիռ սպասել օրինաւոր չէ և ծխական ժողովի իրաւասութիւնից միանգամայն վեր:» Ստորագր.:

Սրանից յետոյ, ապրիլի 9-ին, յանձնախմբի նախագահը մի գրութեամբ դիմում է հ. Շխինեանին, որ նա ծխական ժողով հրաւիրի. իսկ նա իր խիստ զբաղւած լինելով մէջ բերելով, առաջարկում է դիմել հոգաբարձութեան, որ նախորդ ծխական ժողովի պէս, այս անգամ էլ հրաւիրի:

Քննութիւնը սկսելուց առաջ հոգաբարձութիւնը Ա. ի. Պապովեանին ժամանակաւոր կերպով հեռացրած լինելով, մինչև քննութեան վերջանալը, առաջարկել էր ուսուցչական խմբին, որ ժամանակաւորապէս դասերը իրանց մէջ բաժանեն: Աւագ ուսուցիչը ապրիլի 6-ի գրու-

թիւնով յիշեցնում է ֆնացած դասերի մասին և խնդրում կարգադրութիւն անել, ուսուցիչ վարձել:

Հոգաբարձութիւնը աւագ ուսուցչին նոյնն է կրկնում: Սակայն աւագ ուսուցիչը մայիսի 3-ին կրկին գրութեամբ դիմելով հոգաբարձութեան, կտրուկ կերպով պահանջում է պ. Պապովեանի դասերի համար ուսուցիչ հրաւիրել մինչև մայիսի 5-ը, հակառակ դէպքում սպառնում է ինքը հրաւիրել ուսուցիչ: Հոգաբարձութիւնը պատասխանում է.—«ա) 10—15 օր տևող դասատուութեան համար ուսուցիչ շտապ վարձել պէտք չէ, դասերը թող դասատուները բաժանեն իրանց մէջ: բ) Ուսուցիչը դեռևս վերջնականապէս արձակւած չէ և որ աւագ ուսուցիչը իրաւունք չունի ուսուցիչ հրաւիրել:

1907 թ. յունիսի 8-ի նիստում հոգաբարձութիւնը քննութեան առնելով ուսուցչական խմբի ամբողջ տարւայ գործունէութիւնը 4-ով ընդգէմ մէկի որոշում է.—«Նկատելով, որ ամբողջ տարւայ ընթացքում ուսուցիչները իրար հետ լարւած գրութեան մէջ են եղել և այդ գրութիւնից ուսումնարանը տուժել է, ուստի հոգաբարձութիւնը բարեռք համարեց կազմալուծել ամբողջ խումբը և նոր ուսուցչական խումբ հրաւիրել:» Նոյն որոշումը անմիջապէս գրաւոր յայտնում են ուսուցիչներին: Որոշում է խումբը կազմելու համար լրագրութեան մէջ յայտարարութիւն տալ և ապա ընտրել:

Հոգաբարձութեան անդամ Գ. Տէր-Յովհաննէսեանը բողոքում է հոգաբարձութեան որոշման դէմ յայտնելով, նոյն վատ հարաբերութիւնների մէջ գտնւելով և հոգաբարձութիւնը դէպի ուսուցչութիւնը, օրինաւոր կլինի, որ ինքն էլ ամբողջ կազմով հրաժարի:

Այդ տարւայ հասարակական կեանքի պատկերն լրիւ դարձնելու համար դնում են հոգաբարձական արձանագրութիւնից և մի կտոր, որը դարձեալ ժողովների, վեճերի և կրքերի բռնկման առիթ է եղել:

Հոգաբարձութեան փետր. 7-ի արձանագրութիւնից.

«Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ հաշւետեսները փետր. արի 6-ի իրանց նիստերի ժամանակը վի-

ճաբանութեան բռնւեցան և հաշւետեսներէց երկուսը վեճը տուր ու դմփոցի հասցրին, որոնցից մէկը միւսին երկու անգամ ապտակեց, որից յետոյ, երկուսի մէջ սկսեցաւ փոխադարձ տուր ու դմփոցը: Հոգաբարձութիւնը միաձայն վճռեց. ընդհատել հաշւետութիւնը և դէպքի եղելութիւնը ընդհանուր ծխական ժողովին ղեկուցանել և խնդրել, որ կամ նոր հաշւետեսներ ընտրեն և հին կազմը կազմալուծեն, կամ թէ չէ նորա (ապտակողի) փոխարէն մի ուրիշին ընտրեն և նորան հեռացնեն: Բացի զրանից հաշւետեսների այդ կուրի ժողովում, նոյն անձի կողմից վերաւորանք է հասցւում և հոգաբարձութեան հասցէին:

Հոգաբարձութիւնը միաձայն վճռում է այս հարցը ընդհանուր ժողովի առաջ դնել և ամենախիստ քննութիւն պանհաջել:

Փետր. 15-ի նիստում հոգաբարձութիւնը տեսնելով, որ ծխականներից ոմանց կողմից ամեն միջոց գործ է դրւում և նոյն իսկ թոյլ չի տրւում խնդիրը՝ հոգաբարձութեան հասցէին արտասանած վերաւորանքը ծխական ընդհանուր ժողովի զադաստանին տալ, միաձայն որոշում են. — «Ի նկատի ունենալով, որ մեր ծխականները կենդանի փաստերով ապացուցեցին, որ ժողովրդական դատաստանի զադափարը նորանց համար խորթ է և անընդունակ են մի որևիցէ հարց լրջորէն քննել ու լուծել, վճռեց իրանց շօշափած պատիւը հաշտարար դատարանում վերականգրել:

Գործը դատարանի չի հասնում, այլ վերջացւում է հաշտութեամբ: Հոգաբարձութիւնը բաւականանում է վերաւորողի հրապուրական ներողութիւն խնդրելով:

1907—908 թ. ուսուցչական խումբը. — Աւագ ուսուցիչ Լեոն Տէր-Կարապետեան, 20 դաս 800 ռ. ուճիկով: Մարգարեանց, 24 դ. 650 ռ.: Օր. Սօլովեան 22 դ. 600 ռ.: Վերականգնի օր. Չեռնեան, 13 դ. 240 ռ.:

Դպրոցում. — Տղաներ՝ ա. բաժ. 35, բ. 7, գ. 7. = 49: Օրիորդներ՝ ա. բաժ. 22, բ. 17, գ. 5. = 44: Միասին 93: Փոխել են ա. բաժ. 21, բ. 9, գ. 9: Վերաքն. ա. բաժ. 17, բ. 5, գ. 2: Մնացել են ա. բաժ. 6, բ. 4, գ. 1:



Թամանեանց Նաչիկ:



Դպրոցական շէնքը:

Բոլոր բաժանմունքներում դասերի թիւը եղել է 77: Դասերի տեղութիւնը մանկավարժական ժողովում ընդունել է 45 ըուպէ, դասամիջոցը 10 ըուպէ, մեծ դասամիջոցը 30 ըուպէ:

Սեպտեմբերի 8-ի խառն նիստում, դասերի բաշխումից յետոյ կանգ են առնում կիրակնօրեայ դպրոցի կանոնաւոր հիմքերի վրայ դնելու խնդրի վրայ: Մտքերի փոխանակութիւնից յետոյ խմբադրւում է յայտարարութիւնը, որը ուսուցչական խմբի կողմից պիտի յայտարարւէր: Պորհրդակցութիւն է լինում և սիրողների խումբ կազմակերպելու, որը յարմար առիթից օգտւելով մայրենի լեզուով ներկայացումներ կտայ: Այդ առթիւ ընտրւում է յատուկ մասնախումբ, որի մէջ մտնում են ուսուցչական խումբը և հոգաբարձութիւնից պ.պ Սուքիասեանց և Բաշինջաղեանց: Սիրողների խումբը համերաշխ գործակցութեամբ յարմար առիթից օգտւելով (դերասանների եկած ժամանակ, կամ տեղում եղողների հետ) ներկայացումներ էր դնում, պահանջ-պայման դնելով դերասաններին որոշ գումար ծախսել բեմի կարիքների վրայ, շնորհիւ այդ հանգամանքի միջոցով այժմ գոյութիւն ունի բեմը, համեմատական աւելի բարեկարգ վիճակով և սիրողների խմբով:

Ուսուցչական խումբը ունենում է ժթ (19) մանկավարժական նիստ, համարեայ բոլորը վարչական բնաւորութիւն կրող խնդիրների շուրջը:

Ժողովները հրաւիրել է աւագ ուսուցիչը, ժողովին դնելով իր կազմած օրակարգը:

Տեղի են ունեցել դպրոցական, աշակերտական զրականական երեկոներ, 2 անգամ հանդէսներ, 2 մանկական ներկայացումներ, 1 տօնածառ, մէկ անգամ մոզական Լապտերով ցոյց են տւել պատկերներ զրոյցով:

Ամեն շաբաթ իւրաքանչիւր դաստրանում դաստիարակը մի ժամ ընթերցանութեամբ է պարապել:

Հոգաբարձութիւնը համերաշխ չէր, որի անգամ Ք. Բաշինջաղեան հեռանում է 1908 թ. մարտից, իսկ ամբողջ կազմի ընտրութիւն է նշանակւում մայիսի մէջ և

ընտրւում են Մելիք-Ամիրզադեանց, Յ. Լ. Սվէշնիկեանց, Գ. Սուքիասեանց (վերընտրւած), Գ. Բեզեկեանց և տիկ. Յ. Պապովեանց: Անձնագիրականորդներ՝ Աբ. ք. Շխինեանց և իշխան Սարեանց: Յունիսի 11-ին հին հոգաբարձութիւնից հաշիւները ստանալով, նորը սկսում է իր գործունէութիւնը:

Ուսումնական տարւայ վերջը, խառն նիստում աւագ ուսուցիչը պատճառաբանութեամբ հրաժարւում է պաշտօնից: Զի հրաւիրւում պաշտօնի օր. Սօլովեան: Պ. Մարգարեան մնում է պայմանաւ, որ աւագ ուսուցիչ ընտրելու ժողովին ինքը հրաւիրւի ձայնի իրաւունքով: Տիկին Մարգարեանցը նախ պայմանով:

1908—909 թ. — Աւագ ուսուցչուհի օր. Մեծ-Բայեան 700 ր. ռոճիկով: Մել. Մարգարեանց հայոց լեզու 18 դաս, կրօն 5 դաս և հայոց պատմութիւն 2 դաս, ընդամենը 25 դաս 700 ր.: Տիկին Ա. Մարգարեանց թւաբան. 12 դաս, ձեռագործ 6 դաս, ընդամենը 18 դաս 350 ր.: Պապովեանց Յ. երգեց. 6 դաս, գծագր. 5 դաս և բնագիտութիւն 2 դաս, ընդամենը 13 դաս 250 ռուբլի:

Դպրոցում տղաներ՝ 39, օրիորդներ՝ 27. միասին 66, Փոխադրւել են 37, վերաքննելի 10, մնում են 15, հեռացել են 9:

Նորընտիր հոգաբարձութիւնը դպրոցի ղեկը ձեռքն առնելով, 1908 թ. յունիսի 11-ին, որքան սկզբի նիստերին մտածողութեան և հայացքների համերաշխութիւն էր ցոյց տալիս, այնքան էլ շուտ, հէնց նոյն ամսի 26-ի ե. նիստում, ուսուցչական խմբի վերակազմութեան խընդրում առաջ է գալիս մեծամասնութիւն և փոքրամասնութիւն: Մեծամասնութիւնը՝ Սուքիասեանց, Բեզեկեանց և տ. Յ. Պապովեանց անտես են անում դպրոցի անտեսական վիճակը գործունէութեան առաջին քայլից, իսկ փոքրամասնութիւնը՝ Սվէշնիկեան և Ամիրզադեան պարզելով դպրոցի անտեսապէս քայքայւած դրութիւնը առաջարկում են իրանց նախագիծը:

Յունիսի 29-ի նիստում, բուն վիճաբանութիւններից յետոյ մեծամասնութիւնը որոշումներ է կայացնում ուսուց-

չական խմբի վերաբերմամբ՝ հրաւիրել, միայն անպայման ուսուցիչ, որին և յանձնել ուսուց լեզուի դասերը և աւագութիւնը:

Օգ. 14-ի նիստում, աւելի քան բուն վիճաբանութիւններից յետոյ, մեծամասնութիւնը ի նկատի չունենալով միւսների առարկութիւնները, աւագութեան և ուսուց լեզուի համար վարժուհի է հրաւիրում:

Աւագի ընտրութեան, ըստ իր առաջարկած պայմանի ուսուցիչ Մարգարեանը չի հրաւիրւում նիստի, որի հետևանք օգ. 26-ի նիստում հրաւիրւած վարժուհին լսելով տեղի ունեցած աղմկալից և կրքոտ բացատրութիւնները անել վիճակի մէջ է ընկնում: Նա ստիպւում է դէպի պաշտօնակիցները և հոգաբարձութեան փոքրամասնութիւնը վերապահութեամբ նայել: Տարին անցնում է առանց միջնադէպի, շնորհիւ այն հանգամանքի, որ խմբի իւրաքանչիւր անդամի կողմից գործ է դրւել զգուշութիւն խուսափելու առիթներից և միւս կողմից, տարածայնութիւնները, թիւրիմացութիւնները, սկզբունքային վէճերը ձեծւել են մանկավարժական և խառն ժողովներում, որոնց առաջ բերելը ցանկալի լուսաբանութիւն կտար ընթերցողներին, սակայն կան հանգամանքներ, որոնք առ այժմ թոյլ չեն տալիս: Տարւայ ընթացքում տեղի է ունեցել 1 դպրոցական հանդէս, մէկ անգամ տօնածառ և 1 անգամ մանկական ներկայացում:

Հոգաբարձական գործերից. — Հասարակութիւնը խորապէս վշտացած վեհափառ Մկրտիչ կաթողիկոսի մահով, նորա անունը յաւերժացնելու համար, ժողովական որոշումով հանգանակում է մի գումար ծխ. դպրոցի գրադարանին կից յատուկ բաժին պահպանելու «Ներմեան գրադարան» անունով: Հաւաքւում է և գրքեր գնւում, որոնք գրադարանի գրքերի մատեանում յատուկ մասն են կազմում: Այդ թւի հոկտեմբեր ամսից դպրոցական մեծ տանը տեղաւորւած տպարանը հեռանում էր, տունը անյարմար բնակարանի, պարապ պիտի մնար:

Հոգաբարձութիւնը իր նոյեմբերի 11-ի նիստում քննելով այդ խնդիրը եկաւ հետեւեալ եզրակացութեան. —

շէնքը որի մէջ տեղաւորւած է դպրոցը փոքր և նոյնպէս անյարմար է: Երկու տներն էլ կարիք ունին հիմնաւոր վերանորոգութեան: Այնուհետև հոգաբարձութիւնը մի շարք նիստերում քննելով այդ, վերջնականապէս որոշում է, նախկին դպրոցական շէնքը վերածել բնակարանի վարձու տալու, իսկ մեծ և ազատ շէնքը դպրոցի համար յարմարեցնել: Նոյն նիստում, հոգաբարձութեան անդամ պ. Սվէշնիկեան առաջարկում է վերանորոգութեան նախագիծ, որի համար, ըստ նորա, անհրաժեշտ կլինի առնուազն 2000 ռ.: Հոգաբարձութիւնը միաձայն կանգ է առնում այդ միակ ելքի վրայ և որոշում այդ խնդրի քննութեան և լուծման համար նոյեմբերի 16-ին ծխական ժողով հրաւիրել: Ընդհանուր ծխական ժողովը որոշեալ օրը կայանում է, ուր քննութեան է առնում հոգաբարձութեան կազմած վերանորոգութեան նախագիծը: Հոգաբարձութեան օժանդակ մի մարմին է ընտրւում, որը հոգաբարձութեան հետ շինարար մասնախումբ կազմելով, իրաւունք է ստանում դրամ գտնել և վերանորոգութիւնը մինչև մայիս վերջացնել:

Այնուհետև հոգաբարձութիւնը և օժանդակ մարմինը մշակում են հարցը մասնագէտ անձանց միջոցաւ, կապալառուներից նախագիծ - պայմանները վերցնում: Դրամ գտնելու հնարաւորութիւն չկար և գործը քաջքշում ու միմիայն խորհրդածութիւնների նիւթ է դառնում մինչև 1909 թ. փետ. 15-ը: Հոգաբարձական այդ օրւայնիստին պ. Սվէշնիկեան յայտնում և առաջարկում է, «որ ինքը և պ. Գիւրջեան համաձայն են տալ շինարար կօմիսիային ըստ նորա կազմած նախահաշւի անհրաժեշտ 1500 ռ. վերանորոգութեան համար - այն պայմանով, որ չորս տարի նախկին դպրոցական տան երեք բնակարանների քրեհը իրանք ստանան, իրանց հին և նոր պարտքերի զիմաց, որ անելու է մօտ 6000 ռ.: Հոգաբարձութիւնը համաձայնւում է և նոյն թւի փետր. 18-ի յատուկ նիստում քննութեան է առնում պ.պ. Գիւրջեանի և Սվէշնիկեանի առաջարկութիւնը, որը ձևակերպւել և յանձնւել էր հոգաբարձութեան, առանձին յայտարարութեամբ Գիւրջեանի կողմից:

«տալ իրան 4 տարի կապալով դպրոցական շինութիւնը վերին յարկով և նոյն շինութեան կից թատրոնական բեմը, որ բնակարան է լինելու 5800 ռուբլիով, իսկ այդ շէնքը բնակարանների յարմարեցնելու և վերանորոգելու համար տալիս է հոգաբարձութեան առաջուց 1354 ռ.: Մնացեալ հին պարտքը 1246 ռ. և նոր տրւած 1354 ռ. իրան և 3200 ռ. պ. Սվէշնիկեանի պատկանեալ պարտքերի փոխարէն:» Հոգաբարձութիւնը ի նկատի առնելով, որ առնուազն 1500 ռ. անհրաժեշտ է վերանորոգութեան համար, որպիսին հնարաւորութիւն չկայ գտնելու ընդունում է պ. Գիւրջեանի առաջարկած պայմանը և որոշում է դնել խնդիրը ընդհանուր ծխ. ժողովում:

Նոյն թւի մարտի մէկին այդ առթիւ կայանում է ծխ. ժողով: Ժողովի քննութեանը դրւում է պ. Գիւրջեանի առաջարկը իր յայտարարութեամբ: Երկար թեր և դէմ խօսակցութիւններից յետոյ ընդունւում է պ. Խոջայեանի ուղղումը՝ «որովհետև պարզ գիտենք 4 տարում մօտ 6000 ռ. վարձ այդ բնակարաններից չի ստացւի, պէտք չէ, որ ծանրանանք նոցա վրայ. բարւոք կլինի տունը տալ նոցա օգտւելու անորոշ ժամանակով, մինչև կլրանայ իրանց ստանալիքը:» Ժողովականները ընդունեցին և երկու կողմի համար խմբագրւեց այս բանաձևը. — «Պ. Գիւրջեանց պարտաւորւում է տալ 2000 ռ. վերանորոգութեան համար հաշւելով բանկային տոկոս տրւելիք դրամն, մինչև բոլորովին գեղջւիլը, բացի դրանից նա պէտք է օգտւի վերանորոգւած բնակարանների եկամուտներից, մինչև որ կլրացւի պ. Յովսէփ Սվէշնիկեանի 3200 ռ. պարտքը և իրան հասանելիք 1246 ռուբլին: Որոշեցաւ մանրամասն պայման կապել նօտարի միջոցաւ, որի իսկականը պահւելու է պ. Գիւրջեանի մօտ, իսկ պատճէնը հոգաբարձութեան և պ. Յ. Սվէշնիկեանի մօտ:»

Այնուհետև հոգաբարձութիւնը անմիջապէս սկսում է վերանորոգութիւնը, որը սակայն առանց պատասխանատու կառավարչի և նախահաշւի հետեւելուց, փոխանակ նախատեսւած առ առաւելն 2000 ռ. ծախքի, լինում է 4700 ռ.: Անհաշիւ նիւթի բերելուց, աւելացած քար ու

կրից և այլ նիւթերից քահանայի բնակարանին մի խոհանոց ևս շինել հնար եղաւ:

Դպրոցական մեծ շէնքը պատրաստւեց, 3 սենեակներ արեւմտա-հարաւ փողոցի երկարութեամբ դասարանների համար, իսկ նոյն երկարութեամբ արեւելա-հիւսիս ընկած պատրաստւեց թատրոնական բեմ դահլիճով: Այդ դահլիճի յատակը տախտակամածում է պ. Կոստանդին Խաղիզեան իր միջոցներով: Վերանորոգութիւնները վերջացած պատրաստ էին թէ բնակարանները և թէ դպրոցական նոր և յարմար շէնքը մինչև յունիս ամիսը:

Հետաքրքիր է մայիսի 11-ի հոգաբարձական ժողովի արձանագրութիւնը:

Այդտեղ հոգաբարձութեան անդամ պ. Զ. Մելիք-Ամիրզադեանց բողոքում է քահանայի բնակարանի համար նոր խոհանոց շինելու դէմ, առարկելով, որ վերանորոգութեանց նախահաշուով չկար այդ, երբէք չէր նախատեսւած, ծխական ժողովից լիազօրութիւն չէր ստացւած և հոգաբարձական ժողովում չէ դրւել, քննւել և լուծւել:

Մեծամասնութիւնը դարձեալ այդ ինքն իրան դուրս պրծած դէպքին էլ պաշտպան է կանգնում:

Այդ առթիւ քննարկում է ընդունել եղածը. — պ. պ. Սուքիասեան, Բեդեկեան և ակի. Յ. Պապովեան ընդունում են և յայտնում, որ շինելու համար տւել են իրանց համաձայնութիւնը: Սվէշնիկեան համաձայն է եղածին, որովհետեւ պատրաստի նիւթ կար, որ բաւում ընկած աւելորդ տեղ էր բռնում: Ընդունելի է մանաւանդ, որ քահանան յանձն է առել լինելիք ծախսը հոգալ մանաւոր ժողովարարութեամբ: Մեծամասնութիւնը վաւերացնում է այդ ոչ օրինաւոր շինւածքի ծախքն էլ: Աւելի անել վիճակում գտնւեցին ծխ. հոգաբարձութեան հաշւետեաները. Զնայելով երեք — չորս ամիս անցել էր վերանորոգութիւնների վերջացնելուց և մի քանի անգամ էլ հաշւետեաններին հրաւիրել էին հաշիւները քննելու, այնուամենայնիւ փաստաթղթերով կանոնաւոր պատրաստւած ներկայացւած չէր ել և մուտքը: Ստիպւած հոգաբարձութիւնը այս և այն անկիւնից գտնելով փաստաթղթերը յանձնում

էր հաշւետեաններին, որպիսի հանգամանքներից մէկը առաջ բերեց և սուր անախորժութիւն շինարար յանձնախմբի և հոգաբարձութեան գործադիր անդամի և հաշւետեանների մէջ, որը վերջացաւ միջնորդ դատարանով: Հաշիւների ստուգման խնդրում հաշւետեաններին մնում էր թւերի և ընդհանուր գումարների ստոյգ լինելուն հետեւելու միայն:

Այս վերանորոգութիւնն և այն հանգամանքը, որ ուսուցչական խմբերը կազմելիս, երբէք աչքի առաջ չի բերւել ապագայում լինելիք դրամական տագնապը, որ պիտի նախատեսւէր, առաջ բերեց այնպիսի դժւարին վիճակ, որ հոգաբարձութիւնը յանկարծակի եկած, ստիպւում է զանազան միջոցների դիմել: Կամաւոր տարեվճար տուրքեր է հաւաքում, մուրհակներով բանկերից դրամ վերցնում, մասնաւոր անհատներից փոխարինաբար վերցնում և վճարումների ժամանակ անակնկալների հանդիպում: Այս բոլորը խիստ դժւարացրել էին դպրոցի տնտեսական կառավարութիւնը:

Հոգաբարձութիւնը, որ այս անել վիճակում միակ ելք գտնում էր դպրոցի ծախքի կրճատման մէջ, բարեբաղդաբար յունիսի սկզբներին, թեմի առաջնորդ գեր. Մխիթար եպիսկոպոսը այստեղ է ժամանում:

Առաջնորդի հրամանով յունիսի 10-ին ծխական արտակարգ ժողով է հրաւիրւում: Ժողովը կայանում է: Հոգաբարձութիւնը սրբազան առաջնորդի նախագահութեամբ և թոյլտուութեամբ ժողովի քննութեան է տալիս 1909—10 ուսումնական տարւոյ նախահաշիւը, որ առաջարկում է կրճատել բաժանմունքները, մնացածներն էլ միացնել երկու բաժանմունքում և ըստ միջոցների թոյլտուութեան կառավարել: «Եթէ հասարակութիւնը ցանկանում է դրպրոցը պահպանել նոյն բաժանմունքներով, թող նախահաշիւի պակասորդը լրացնի իր տարեկան վճարով և այդպիսով հնարաւորութիւն տայ 4 բաժանմունք պահպանելու:»

Ժողովականները քաջալերւած սրբազան նախագահի բացատրութիւններից, ինքնայոժար սարորազրութեամբ նոյն տեղում հաւաքեցին 700 ըուբլուց աւելի և հրահան-

գեղին կրճատման խնդիրը չգնել երբեք և կամաւոր տուրք ստանալու համար զիմել և նոցա, ովքեր չկան ժողովում:

Ուսուցչական խմբի ուժերի խնդիրը մասամբ ուղղւեց, սակայն մասնաւոր պարտքերի հարցը աւելի ծանրացաւ: Սրբազան առաջնորդը զիջելով գէորգեակեցիներին խնդրին առաջարկում է՝ Գէորգեակու եկեղեցու պարտքի զիջման համար տարեկան մի գումար վճարել և այդ գումարի քանակը որոշել:

Ժողովականները անտեղակ 5000 ռ. ստացման պայմաններին և իշխանութեան հրահանգներին ու մինչև այդ եղած պաշտօնական կարգադրութիւններին, համաձայնում են և որոշում տարեկան 300 ռ. տալ, որպէս զեղջ 5000 ռ.: Առանձին էլ վաղուց հոգաբարձութիւնը մուրհակներով բանկից, իրանց երաշխաւորութեամբ պարտքեր վերցնելով, մասնաւոր, մանր պարտքերն ու ուսուցիչների ուժերին էր տալիս և զանազան առևտրական պայմաններով պարտատէրերին համբերել տալիս:

Ահա այս վիճակում 1909 թւի սեպ. 19-ին Բեգեւեան հրաժարւում է հոգաբարձութեան անդամութիւնից, որի տեղ հրաւիրւում է անձնափոխանորդ Աբ. քահանայ Շխինեանցը:

Սրանով վերջանում է մեծամասնութիւնը և գալիս է անցած սխալ գործունէութեանց հետևանք՝ դժւարութիւնները կրելու շրջանը:

1909—10 թ.—Ուսուցչական խումբը նոյն պայմաններով և դասերով: Աւագ ուսուցչուհի օր. Մեծ-Բայեան, 2) Տիկ. Ան. Մարգարեանց, 3) Մել. Մարգարեանց 4) Ա. Ի. Պապովեանց,

Դպրոցում.—Տղաներ՝ 23, օրիորդներ՝ 37. միասին 65:

Փոխել են 35, վերաքննելի են 11, մնացել են 12 և հեռացել 2:

Տեղի են ունեցել 1 տօնածառ գրական բաժնով, աշակերտական ներկայացում 1 անգամ և Վարդանանց տօնին դպրոցական հանդէս: Տարին անցել է խաղաղ:

Ուսումնական տարւայ վերջում, ուսուցիչ Մարգարեանը յունիսի 10-ի խառն ժողովին կարգում է մի գե-

ղուցում, պարզելով մի շարք հանգամանքներ, առաջարկում է աւագ ուսուցչութիւնը դարձնել պաշտօնակատարութիւն, որին պաշտօնակատար ընտրի մանկավարժական խորհուրդը իր միջից քւէարկութեամբ: Պաշտօնակատարութեան շրջանը լինի 3 ամիս: «Այդպիսով ներկայ ուսուցչական կազմի իւրաքանչիւր անդամին հնարաւորութիւն կտրւի իւր ուժերի ներածին օգտակար լինել:» Ժողովը երկար խորհրդակցելուց յետոյ, միանգամայն սկզբունքով ընդունում է այդ սխառմի օգտակարութիւնը, իսկ գործնականին մեր դպրոցում մտցնելուն ընդունւում է ձայնի բացարձակ մեծամասնութեամբ, այն է՝ 7-ով ընդդէմ երկուսի: Մանկավարժական խորհուրդը հէնց նոյն նիստին առանցնանալով ընտրում է պաշտօնակատար ամառային ամիսների համար մինչև սեպ. 1-ը ուսուցիչ պ. Պապովեանին: Նոյն ուսուցչի առաջարկութեամբ ժողովականները քննութեան են առնում ուսուցչի դասազնով վարձատրելու խնդիրն ևս միաձայն ընդունւում: Դասագին.— կրօն, հայոց լեզու, ռուսաց լեզու և թւարանութիւն 30-ական ռ., իսկ մնացեալ առարկաները 25-ական բութի: Այդպիսով մասամբ սահմանւում է հաւասար վարձատրւելը և այնուհետև անցնում են դասերի բաշխման: Դասագնով ուսուցչութեան ուժերը որոշելիս, հոգաբարձութիւնը նկատում է, որ մի քանի բութի աւելի է գնալու, հոգաբարձութեան պ. նախագահը առաջարկում է դասագինը ընդունել 30-ի տեղ 29, 25-ի տեղ 24 և ծածկել խնդիրը: Ուսուցիչները բողոքում են այդ վարմունքի դէմ, բայց և համաձայնում: Հոգաբարձութեան գործը զիւրացնում մի-մի դաս ձրի վերցնելով ծախքը պակասեցնում 74 բութիով:

Ուսուցչական խումբը.—Մարգարեան աւանդելու է կրօն 6 դաս, հայոց լեզու 17, հայրենագ, 4. ընդամենը 27 դաս՝ 763 ռ. ուժերով: Տիկ Մարգարեանց թւար. 5, ձեռագործ 6, վայելչագր. 2. ընդամենը 13 դաս 350 ռ.: Օր. Բշախեանց ռուս. լեզու 11, թւար. 9. ընդամենը 20 դաս 580 ռ.: Ա. Ի. Պապովեանց երգ. 6, գծագ. 5, բնագ. 3. ընդամենը 14 դաս 250 ռ.: Ընդամենը շաբաթական 74

դաս: Դասերի տեղում թիւնը 45 ընդհանուր 10, իսկ մեծը 30 ընդհանուր 25, օրիորդներ՝ 38. միասին 62: Սեպ. մտան 74, փոխադրւել են 35, վերաքննելի 11, ֆուտ 14, հեռացել 2, մեռել 1:

Հոգաբարձութեան նախահաշիւից. — Եկեղեցուց նըպաստ 400 ռ., բնակարանների վարձ 780 ռ., Կ. Հ. Բ. ընկ. Պետաիգորսկի ճիւղից 175 ռ., Պետաիգորսկի Հ. Կ. Բ. ընկ.-ից 200 ռ., աշակ. թոշակ 125 ռ., ապառիկ Աբ. ք. Շիլինեանից 197 ռ. 50 կ., դանիլի վարձ 60 ռ., պատահական նւէրներ 362 ռ. 50 կ. մուտքի գումարը 3000 ընդհանուր, ելք ուսումնարանի պահպանութեան 2500 ռ., անյետաձգելի ծախքեր, պարտքերի տոկոսներ, պարտքերի 10% զեղչման և այլն. ընդամենը 3650 ռ. 15 կ., մուտքից պակասում է 650 ռ. 15 կոպէկ:

Դպրոցի կարիքների շուրջը տեղի են ունեցել 21 մանկավարժական, 5 խառն, հոգաբարձական, մանկավարժական և 4 ծնողական նիստեր: Ընդամենը 30 ժողով, որի օրակարգը կազմել է մանկավարժական և խառն նիստերի համար աւագ ուսուցչի պաշտօնակատարը, իսկ ծնողական ժողովներին՝ մանկավարժական խորհուրդը: Մինչ այդ ժամանակ ծնողական ժողովներ չէին լինում, այդ տարին ուսուցչական խումբը նպատակ է դնում ծնողական ժողովների միջոցաւ ազդել վերացնելու աշակերտական միջանի պակասութիւններ, որոնք ծնողներից են կախւած, օր. անմաքրութիւնը, դէպի դասական պիտոյքների անփոյթ լինելը, որ մոռացմամբ, թէ այլ հանգամանքների շնորհիւ չէին բերում, առաւօտները ուշանալը դասերին, որ մեծ չափով էր լինում, օրերով դասի չգալը ընտանեկան զանազան հանգամանքներից ստիպւած և այլ և այլն: Կազմակերպւում է ծնողական ժողովներ, որոնք բացւում էին դասախօսութիւններով, նիւթ առած ընտանեկան դասախարակութիւնը, տան և դպրոցի փոխադարձ յարաբերութիւնը, ծնողների պարտականութիւնը դէպի դպրոցական երեխան և այլն: Ծնողական ժողովները եղել են բազմամարդ, բովանդակալից և համերաշխ խորհրդակցական

բնաւորութիւն կրող: Ծնողական ժողովների որոշումով սահմանւում է ընդհանուր աշակերտական նախաճաշ, որին ընդառաջ են գնում և օգնում նոյն իսկ դպրոցում երեխայ չունեցողները:

Ծնողական ժողովի որոշումով աշակերտութիւնից տւել են 75, 50 և 30 կոպէկներ: Ամբողջ ծախքը ծածկելու համար ժողովականներից մի քանիսը յանձն են առնում ամսական վճարել շարունակաբար պ.պ. Սվէշնիկեան 3 ռ., Բաշինջադեան 2 ռ., Դոնսիկեան 75 կ., Սուքիասեան 1 ռ. 50 կ., Պապովեանց Ա. Ի. 1 ռ. 50 կ.: Դուրասանեանց 1 ռ., Շարաբանդեանց 1 ռ. 50 կ., օրիորդ Բաշինջեանց 75 կ., Ա. Գիւրջեանց 75 կ., հոգաբարձութիւնից 3 ռ., մանկական ներկայացումից ֆուտբոլ է 7 ռ. 81 կոպ.: Այս բոլորը աշակերտութիւնից եղածի հետ, գեկ. 1-ից մինչև մայիսի 15-ն ընդամենը գոյացել է 106 ռ. 97 կ.: Ծախք գեկ. 13-ից մինչև մայիսի 15-ը եղել է ընդամենը 104 ռ. 41 կ., առ ձեռն ֆուտբոլ է 2 ռ. 56 կ.:

Ընտրութեամբ աւագ ուսուցչի պաշտօնակատարութիւնը տարան պ. Պապովեան ամառային երեք ամիսը, պ. Մարգարեան սեպտեմբերից դեկտեմբեր և փետրւարից տարւայ վերջը, օր. Բաշինջեանց դեկտեմբեր և յունւար ամիսները. Տարին անցել է համերաշխ և դպրոցը ամենքի մտածման առարկան է եղել: Տեղի են ունեցել 3 մանկական շքեղ ներկայացումներ, 3 զրականական առաւոտ, 2 անգամ դպրոցական հանդէս և 1 շքեղ տօնածառ: Մոզական լապտերով և զրոյցներով ցոյց են տւել պատկերներ 4 անգամ երեխաներին և 2 անգամ ծնողներին: Էլեկտրօբիօգրաֆ «Սպենդիդ» տարւել են 3 անգամ, քաղաքից դուրս զբօսանքի 2 անգամ:

Հիւանդութիւններ երեացել են դպրոցում. — հազ հոկ. 18—29-ը, սկարլաթինա նոյեմբերի 22-ից մինչև յունւարի 18-ը: Բոլոր հիւանդութիւնների ժամանակ յարգելի Աբուլեանցը սիրով և ձրի այցելել է հիւանդ երեխաներին թէ դպրոց և թէ տները: Դասեր բաց են թողել ուսուցիչ Մարգարեանց հիւանդութեան պատճառով 24 դաս, պ. Պապովեան դատարանական գործերով 24 դաս,

օր. Բշախշեանց հիւանդութեան պատճառաւ 8 դաս:

Հոգաբարձական գործերից.—Հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսի յիշատակին մի որդեգիր է սահմանուում, որի համար յատկապէս ստորագրութիւն է բացուում և հաւաքուում է մօտ 120 ըուբլի:

Դաւիթ Գ. Գիւրջեանի մահւան առթիւ, ժառանգները ի յիշատակ նորա դպրոցին նւիրում են 500 ռ., մըշտական մի որդեգիր ունենալու ծխ. դպրոցում: Նոյն նըպատակաւ եղբօր յիշատակին 100 ռ. է նւիրում դպրոցին պ. Ամիրեանը: 15 օգ. Կիսլօվօդսկու բնակչուհի ալրի տ. Յուստիանէ Յովսէփեանը իր հանգուցեալ ամուսնու յիշատակին դպրոցին նւիրում է 500 ռ., գործադրութիւնը թողնելով հոգաբարձութեան հայեցողութեան: Հոգաբարձութիւնը սահմանում է մի որդեգիր:

1911 թ. յունւ. 6-ին, Գեր. սրբ. առաջնորդը կարգադրում է Գէորգեակու պարտքի գեղջ, 300 ռ. ֆնացորդ 200 ըուբլին և 1911—912 թ. հաշւին 150 ռ. ուղարկել անխափան: Այս թւին մտել է Գէորգեակու քահ. ուղարկած մի հին գրութեան պատճէնը, որն և դնում եմ.

«Պարաւանդազիր» թուղթը: Ի 25 սեպտեմբերի 1875 ամի ի Պետտիգորսկ քաղաքի մեք ստորագրեալ հայ ազգի բնակիչքս Պետտիգորսկոյ, տամբ զայս պարտաւանդազիր ստորագրութեամբ մերով ի ձեռն վիճակային կօնսիստորեայի հայոց Աստրախանայ հայ ազգի ծխականաց Գէորգեակու սրբոյն Գէորգայ եկեղեցւոյ, առ այն զի ստացանք մեք ի շինութեան ի Պետտիգորսկի հայոց եկեղեցւոյ զհինգ հազար ըուբլի արծաթ ի գումարաց յիշեալ եկեղեցւոյն ի նոյն կօնսիստորիայէն և զորպիսի գումար համաձայն կարգադրութեան յիշեալ հոգեւոր իշխանութեան պարտաւորեմք և պարտաւանդեմք սովին գինի բոլորովին աւարտման շինութեան եկեղեցւոյ մերոյ այնուհետև յընթացս երկուսասան ամաց ժամանակ առ ժամանակ վերադարձուցանել առանց տոկոսեանց յարգեանց կառուցանելի եկեղեցւոյ մերոյ ի յիշեալ եկեղեցին Գէորգեակոյ առ որ և ստորագրեմք: 35 ստորագրութիւններից կենդանի են Գէորգ Կարապետեան Խազիզեանց, Բաղդասար

Կարապետով Չեռնով, Եսայի Պերպերեանց, Քերովը Խասարով, Գաբրիէլ Դօննիկեանց:

Այս թուղթը կազմել, ստորագրել տւել և վերցրել է Վեհապետեանից ըարեյուսութեան վկայական ստացած Տէր-Սարգիսը և ինքն էլ վաւերացրել է. — «Վասն իսկական ինքնաձեռն ստորագրութեանց 35 անձանց հայազգի բնակչաց Պետտիգորսկոյ, որք ստորագրեցին ի ներկայութեան իմոյ վկայեմ, գործակալ Գէորգեակոյ և շրջագայիցն նորա Սարգիս աւ. ք. Տէր-Պողոսեանց:»

Այս ամբողջ թղթի պատճէնն էլ հանել և վաւերացրել է այժմեան ծխ. քահանան «զհարազատութիւնէ պատճէնիս վկայեմ ստորագրութեամբ իմով և դրոշմամբ եկեղեցական կնքոյ՝ Ներսէս ք. Վարդանեան:» Մի օրինակ ուղարկել Պետտ. ծխ. հոգաբ., խնդրում վճարել, որովհետև իրանց եկեղեցին պիտի վերանորոգեն և դպրոց պահպանեն, իսկ միջոցներ չկան:

1911—912 թ. ուսուցչական խումբը նոյնն է: Շաբաթական պարապել են 74 դաս: Դասերից դուրս, ինքնայոժար կամքով շաբաթական մի-մի ժամ պարապել են ընթերցանութեամբ: ա. բաժանմունքում օր. Բշախշեանց զրուցել է յունւարից սկսած: բ. բաժ. պ. Պապովեանց: գ. և դ. միացեալ բաժ. տիկ. Մարգարեանց:

1911—912 թ. նախահաշիւը.—Եկեղեցւոյ 400 ռ., թոշակներից 125 ռ., բնակարաններից 500 ռ., կ. չ. Բ. ընկ. Պետտ. ճիւղից 200 ռ., կամաւոր տուրք 400 ըուբ., ընդամենը 1625 ռ.: Ելք.—Ուսուցչիչներին և ծառային ուժիկներ, վառելիքի, ուսումնական պիտոյքների և զանազան մանր ծախքերի 2500 ռ., պակասում է 875 ռ.:

Մանկավարժական խորհուրդը մի տարւայ փորձից յետոյ աւագ ուսուցչութիւնը դարձեալ պաշտօնակատարութեան է թողնում և ամբողջ տարւայ համար ընտրում է պ. Մելիք Մարգարեանցին: Դպրոցում վերակացութիւնը յանձն են առնում տանել շաբաթական 2-ական օրով բոլորը, որից ազատ է պաշտօնակատարը: Դասերում լինել և զեկուցել մանկավարժական ժողովին, յանձն առաւ պ. Պապովեան: Ուսումնադան տարում անհրաժեշտութիւ-

նից թելադրւած տեղի են ունեցել ուսուցչական 17, խառն ուսուցչական և մանկավարժական 4 և ծնողական 3 ժողովներ. ընդամենը 24 նիստ: Նիստերն ունեցել են համերաշխ, խորհրդակցական բնավորութիւն և իրանց որոշումներով նպաստել դպրոցի յառաջագիմութեան:

Դպրոցում ընդունելութիւնը սկսւել է օգոստ. 25-ին, իսկ դասերը սեպտեմբերի 1-ին: Ուսումնական տարւայ ընթացքում դպրոցում սովորել են տղաներ՝ 33, օրիւններ՝ 44. միասին 77: Նորեկներ 12 տղ., 13 աղջ. ընդամենը 25: Աշակերտութիւնը տեղաւորւած էր չորս բաժանմունքներում: Փոխադրւել են 43, վերաքննելի են 11, մնում են 16, հեռացել են 5:

Աշակերտութիւնը ըստ ծնողների, ծննդավայրի և պարավանքների. — Հին-Նախիջևանցի 5 մանրավաճառներ, 1 բրուտ, ալէքսանդրապոլցի 6, արհեստաւոր և մանրավաճառներ, զարաբաղցի 13, քարտաշներ և 1-ը կապալառու, էրզումցի 1, որբ, աշտարակցի 1, վաճառական-տպարանատէր, լօռեցի 7, 2-ը այգեգործ, (ուրիշի այգիներն են վերցնում), 5-ը արհեստաւորներ, թելաւցի 4, գինեվաճառճաշարան ունեցողներ, արգւենցի 1, արհեստաւոր, մոզգոկեցի 10, վաճառականներ, արհեստաւորներ և 1-ը որբ, ս. խաչ-մաճառցի 4, 1-ը արհեստաւոր, 3-ը որբ, նոր-Նախիջևանցի 4, մանրավաճառներ, պարսկաստանցի 5, շրջիկ նաւթավաճառներ և մրգավաճառներ, երևանցի 2, արհեստաւորներ, զարաքիլիսեցի 1, խոհարար, գորեցի 2, գինեվաճառ, թրֆիլիսցի 4, 1-ը ոսկերիչ, 3-ը ակնավաճառ:

Հիւանդութիւններ՝ որոնցով մշտապէս նեղւում են.

Գլխացաւով 7 երեխայ, նւագելուց, թերեւս արեան պակասութեամբ 8, սրտի բաբախում 1, կրծքի ցաւ 2, ականջի հիւանդ 2, ատամի ցաւ 30, ստամոքսի ցաւ գիշերները 3, ստամոքսի հիւ. չմարսել 1, ջրգողութիւն 1, դեղձախտ 3, ոտի ոսկրացաւ 6, աչքի հիւ. 1, ջերմ ու տենդ 1:

Երեխաները ըստ հասակի, — 8 տարեկան 21 երեխայ, 9՝ 11, 10՝ 20, 11՝ 7, 12՝ 8, 13՝ 6, 14՝ 4:

Ինչպէս նախորդ տարւում, նոյնպէս և այս տարւում

մանկավարժական խորհուրդը երեխաների մնողի պակասութիւնը և նրանց այդ մասի կարիքը ի նկատի առնելով, նախ հոգաբարձական-մանկավարժական և յետոյ ծնողական ժողովի քննութեան է տալիս և առաջարկում. հրահանգել շարունակելու աշակերտական ընդհանուր նախաճաշը: Ծնողական ժողովի որոշումով, հոկ. 1-ից սկսւում է ընդհանուր նախաճաշը, նոյն անցեալ տարւայ հիմունքներով: Աշակերտութիւնից մասնակցած են 45 երեխայ, տալով ամսական 75, 40 և 20-ական կոպէկներ, որով երեխաներից ստացւել է ամբողջ ուսումնական տարւայ ընթացքում 77 ռ. 87 կ., կողմնակի անձինքներից ամսական որոշ գումարով մասնակցել են պ.պ. Յ. Լ. Սվէշիկեանց 3 ռ., Մելիք Ամիրզադեանց 3 ռ., Սուքիասեանց 3 ռ., Թիթրեան Ս. 1 ռ. 50 կ., Թիթրեան Յ. 2 ռ., Դօն-նիկեան 3 ռ. 75 կ., Գիւրջեանց 2., Մ. Բչախչեանց 3 ռ. նացվալեանց 3 ռ., Բաշինջադեանց 2 ռ., առևտ. տան օգ. Կիրակոսեան 3 ռ. 75 կ., օր. Ակսեօնովա 3 ռ., Յ. Դ. Պապովեանց 2 ռ. 25 կ., Բունիաթեանց 3 ռ., ուսուցչական խումբը — Մարգարեանց (ամուսիններ) 4 ռ., օր. Բըշախչեան 3 ռ. 75 կ., Ա. Ի. Պապովեան 3 ռ. և ուրիշներից, թւով 24 հոգուց ստացւել է 85 ռ. 40 կ., 1911 թ. դեկ. 31-ին կազմւել է չքեղ տօնածառ ընծաներով և նոր տարւայ դիմաւորումով, որի առթիւ եղած նւիրաբերութիւններից մնացորդը, ըստ բ. ծնողական ժողովի որոշման յատկացւել է աշակ. նախաճաշին և եղել է 52 ռուբ.: Մի ներկայացումից, յօժարութեամբ տրւել է այդ նպատակին 25 ռ., Խոջայեանների բարեհաճ կամքով, յօգուտ նախաճաշի տրւել է բիսկիտ «Սպլենդիդ»-ի մի երեկոն, որից մնացել է 56 ռ., արժ. Աբ. ք. Շխինեանց մի օր ընդհանուր աշակերտութեան տաք նախաճաշ մատակարարեց: Նախորդ տարւայ նախաճաշի հաշիւից առ ձեռն մնացած է եղել 2 ռ. 56 կ.: Մանկական ներկայացումների ժամանակ նւէրներ ստացւել են 7 ռ. 8 կ.: Տեղիւ Կ. Հ. Բ. ընկ. յատկացրել է 30 ռ.: Ընդհանուր մուտք եղել է 311 ռ. 91 կ. ընդհանուր ծախք 1911 թ. հոկ. 1-ից մինչև 1912 թ. մայիսի 20-ը եղել է 219 ռ. 69 կոպէկ. առ

ձեռն մնացել է 92 ռ. 22 կ.: Նախորդ տարւայ օրինակին, այս տարի ևս ուսուցչական խմբին օժանդակ, ծնողական ժողովի կողմից ընտրւել են տիկին Եղ. Պ. Խաղիզեան, պ.պ. Մակ. Գիւրջեանց և Խ. Տէր-Յարութիւնեանց, որոնք ուսուցչական խմբի հետ կազմելով յանձնախումբ ղեկավարել է նախաճաշի գործը և ի կատար ածել ծնողական ժողովների որոշումները:

Ուսումնական տարւայ վերջին մանկավարժական խորհուրդը, ուսումնական մասի տեղեկագրի մէջ մտցնում է այն պակասութիւնները, որոնք ազդել և կազդեն դպրոցի յառաջադիմութեան վրայ: Հոգաբարձութիւնը որքան և բարեհաճ է վերաբերւել դէպի ուսուցչական խմբի առաջարկութիւնները, այնուամենայնիւ դպրոցի յառաջադիմութեան, ազատ զարգացման և ոչ մի քայլով չի նպաստել, նպատակ դրած տնտեսական տագնապից դուրս ելնել, «բաժանմունքների» միացման սկզբունքին հետևել:

Առանձնապէս դպրոցի ուսումնական մասի յառաջադիմութեամբ ոգևորւելու ձգտում-մեղում չի ցոյց տւել այժմեան հոգաբարձութիւնը:

Տեղի են ունեցել 2 անգամ աշակերտական շքեղ ներկայացումներ, 2 անգամ գրական առատ օտ դպրոցական հանդիսով, պատրաստւել է շքեղ և ընծաներով տօնածառ, 5 անգամ տարւել են բիսկիտ «Սպենդիդ». 1 անգամ Միրաժ: Տարւել են ուսուցչական խմբի առաջնորդութեամբ սեպ. 12-ին Լերմոնտովեան գալերէյում պատրաստւած այգեգործական և պտղաբուծական ցուցահանդէս:

Դասեր բաց են թողել.— Տիկին Մարգարեանց 2 դաս, օր. Բչախչեանց 8, Ա. Ի. Պապովեանց 25 դաս: Աւելի դասեր պարապել են տիկ. Մարգարեանց 12 դաս:

Դպրոցը այցելել են շատերը, իսկ հոգաբարձութիւնից պ.պ. Սվէշնիկեանց յաճախ, Գ. Դ. Սուքիասեանց եղբեմն:

Հոգաբարձական գործերից. — Նախահաշուով մուտք սպասւում է 1625 ռ., ելք 2500 ռ., պակասում է 875 ռ., որի լրացնելու համար դիմեցին կամաւոր տուրքի:

1912 թ. 9 յունւարի, Սարգիս Մխիթարեան մի յայ-



Սվէշնիկեանց Ղազարոս:

տարարութեամբ դիմելով հոգաբարձութեան խնդրում է, ի յիշատակ իր հանգուցեալ Բաղդասար որդու ընդունել յօգուտ դպրոցի գրադարանի 118 կազմի մէջ 363 կտոր գիրք:

Հոգաբարձութիւնը ընդունելով այդ, գրաւոր յայտնում է պ. Մխիթարեանցին իր շնորհակալութիւնը:

Նոյն ուսումնական տարում նւիրել են. — Արժ. Աբ. ք. Շխինեանց 60 կտոր հայերէն գրքեր, Մելիք-Ամիրզադեանց 10 օրինակ Մուրճ, Ք. Բաշինջաղեանց Ազբուր՝ 1883, 85, 87-թւերի, պ. Խ. Տէր-Յարութիւնեանի խնդրանօք բուկինիսաները նւիրել են ուսերէն գրքեր, մի երկու կտոր գիրք էլ նւիրել են զանազան անձինք:

Հոգաբարձութիւնը ստացել է Աստրախանի առաջնորդ գեր. Մխիթար եպիսկոպոսից հետեւեալ գրութիւնը.

«Ճիսական հոգաբարձութեան հայոց Պետտիգորսկի.

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան Պետտիգորսկի վարչութիւնը ի նկատի առնելով հայ ուսուցչութեան և զրոյնների տնտեսական վիճակը, նախաձեռնութիւն է յանձն առել Պետտիգորսկում հիմնել (Санаторія), ուր հայ ուսուցչութիւնը և ընդհարնապէս հայ մտքի ու գրչի աշխատաւորները հնարաւորութիւն ունենան աժան և ձրի վերականգնել իրանց կորցրած առողջութիւնը: Սակայն վարչութիւնը իր միջոցների սղութեան պատճառով այդ բարենպաստակ միտքը իրագործելու համար, կարօտ է արտաքին օգնութեան, ուստի և առանձին կոչով դիմել է հայ ժողովրդի օժանդակութեան և այդ կոչերից մի օրինակ էլ ուղարկելով ինձ, խնդրում է նպաստել գործի յաջողութեան: Սրա մասին տեղեկութիւն տալով ծխական հոգաբարձութեանդ, խնդրում եմ հրաւիրել ծխականների ուշադրութիւնը վերոյիշեալ բարենպաստակ հիմնարկութեան վրայ և յորդորել նորանց նպաստել նրա իրականացմանը, իրանց յօժարակամ նւէրները ուղարկելով Կ. Հ. Բ. ընկ. Պետտիգորսկի վարչութեան:»

Հոգաբարձութիւնը յատուկ նիստում խորհրդակցելով որոշում է «ուսուցչական սանատորիային յատկացնել տարեկան 25 բուրլի:

1911—12 ուսումնական տարւոյ վերջը հոգաբարձութեան համար մտահոգութեան մեծ առարկան էր այն, որ հնարաւորութիւն չկար, սնտեսական այդ անձուկ վիճակում չորս բաժանմունք պահպանել, եթէ հասարակութիւնը օգնութեան չգար: Կազմելով 1912-13 թ. ուսումնական տարւոյ համար նախահաշիւ, ծխական ժողով է հրաւիրում: Չի կայանում ա. բ. գ. հրաւերներով ժողովը, որից յետոյ հոգաբարձութիւնը վերացնում է գ. բաժանմունքը իսկ մնացեալ ա. բ. գ. բաժանմունքները երկու դասարաններում զետեղում, բ. և գ. միացնելով:

Ուսուցչական խմբից օր. Մ. Բչախչեանց ինքնին հեռացած էր, որի տեղ դասատու չհրաւիրեց:

Ուսումը սկսում է սեպտ. 1-ից:

Նոյն կազմով, 3 հոգուց բաղկացած: Մարգարեանց, տիկ. Մարգարեանց, Ա. Ի. Պապովեանց: Աշակերտութիւնը. — Տղաներ՝ 34, օրիորդներ՝ 43. միասին 77:

Տեղի են ունեցել մանկավարժական, հոգաբարձական և մանկավարժական խառն և ծնողական ժողովներ, որոնք կրել են համերաշխ, խորհրդակցական բնաւորութիւն:

Ծնողական առաջին ժողովի որոշումով սեպտ. 20-ից երեխաներին ընդհանուր նախաճաշ է տրւում:

Այս տարի կողմնակի անձինքների գիմուսն չի եղել ուսուցչական խմբի կողմից, բացի Պետրիգորսկի Հ. Կ. Բ. ընկերութիւնից, որը և յատկացրել է 10 ռ.: Ինքնաբերաբար, այդ նպատակաւ նւիրել է 10 ռ. ա. Հ. Ռ. Կարապետեանը: Աշակերտութիւնից մուտք եղել է 44 ռ.: Ընդամենը 64 ռ.: Ծախք սեպտեմբերի 20-ից մինչև մայիսի 17-ը եղել է 115 ռ.:

Ծխական դպրոցում իբր անւան մի օրդեգիր պահելու համար պ. Անտոնեան նւիրել է 100 ռ.

ՎԵՐՉԱԲԱՆ. — 1870 թւից մինչև այսօր հասարակութիւնը շնորհիւ տեղական գործիչների, իր մայր եկեղեցին, դպրոցը զարգարելով հաստատուն եկամուտների աղբիւր շէնքերով, նոր սերնդին տւել է ամուր հիմքեր

բռնած մի համայնական բարգաւաճ տուն: Պետրիգորսկի հայոց հասարակական այդ շէնքերի ճակատին իրաւամբ կարող ենք դրոշմել ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ, որովհետև նրանց շաղախը գանգւած է ամեն կողմից, ամեն ամառ եկած ազգայինների նւիրած կոպէկներով, դարձեալ շնորհիւ այդ գործիչների, որոնք մեծ տոկոսութեամբ կարողացել են գլուխ բերել:

Տեղացիների մէջ խոշոր գումար նւիրող անձն չի եղել բացի Սաչիկ թամանեանից, որը դպրոցի շէնքի կառուցման նւիրել է 3000 ռ.: Յ. Լ. Սվէշնիկեան, որը հասարակութեան օգնութեան է հասել, նորա կարծիքի ժամանակ առանց տոկոսի գրամ տալով, որպիսին սկսած 1901 թւից մինչև 1913 թիւը հաշւելով 8% կգոյանար մօտ 4011 ռ. 20 կոպէկ: Դաւիթ Գ. Գիւրջեանի դպրոցական մեծ շէնքի կառուցման ժամանակ բաց թողած փայտեղէնի գինը 2000 ռ. դարձեալ առանց տոկոսների, որպիսի պարտքը գեղջւել սկսել է 1907 թւից և տոկոսները կլինէին մօտ 1059 ռ. 52 կ.:

Յօբելեանական տօնակատարութիւնը պսակւում է և այն կողմից, որ հասարակութեան բոլոր խաւերը, այժմ առանց աչք տնկելու ամառանոցաւորների ճանապարհին, ըստ կարողութեան ինքնայորդոր նւիրաբերեցին իրանց լուծման և այսօր իրանց գանձի հետ սրտներն էլ կապած դպրոցին, հրճւում են նորա մեծ տօնով:

Այժմ հասարակութիւնը կարող է ասել. — Մեր անփոխարինելի նախորդներ, փայփայելով Ձեր զաղափարները՝ ընթանում ենք Ձեր շաւղով:



Հեղինակը հայտնում է, որ նախագահը և նախագահի տեղակալը
 իրենց հետևողներով և ընկերներով



Հայաստանի Դեմոկրատիկական Հանրապետության
 Ստորագրողներ
 1918 թ. 11-12-ի համաժողովի
 Կազմակերպչական Կոմիտեի
 Մարմինը



ՀՀ Ազգային գրադարան



NL0228813

50. 456

